Ousoumnasirouthiunkh hin ktakarani anwauer groc wray

Barseł Sargisean

Sargisean, Barseġ

urn:nbn:de:hbz:5:1-5164

ԳԼՈՒԽ Թ

ԵԶՐ ԵՐՐՈՐԴ[1]

Այս անկանոն գրուածս՝ ոչ միայն իւր կարծեցեալ հնութեան, այլ և վարդապետական ճոխ պարունակութեան և ծանրակշիռ հեղինակութեան համար՝ ամէն ժողովրդոց յարգանաց արժանացեր է, առաջին դարերէն ի վեր, և Ս. Գրոց մէջ մուտ գտեր է, իբրև նուիրական գիրք: Այսպէս մի գրուած բնական է որ իւր վրայ դարձնէր նաև նոր ժամանակի քննադատութեան խստապահանջ հայեացքը: Այո՛, վերջերս եղան այլ և այլ լուրջ ուսումնասիրութիւններ, զորս առիթ պիտի ունենանք յիշելու, բայց գրոցս գաղտնիքն տակաւին լուծուած չեն վերջնականապէս, հետևաբար ընդարձակ ասպարէզ կայ նորանոր ուսումնասիրութեանց. այնու մանաւանդ՝ որ այդ գրութեան արևելեան թարգմանութիւնք, բայց ի մասնաւորի հայկականն, իւր վերջին խօսքն ըսած չէ դեռ: Ենովքայ և Դանիելի տեսիլներն ուսումնասիրած ժա-

1. Այս խորագիրս ունին մեր դրչագրերն, Վուլգատայի մէջ ընդհակառակն «Գիրք Եզրայ» խորագրուած է: Խորագրաց տարբերութիւնքն՝ անտարակոյս յառաջ եկած են այն դիրքէն, զոր գրուած է այս գրուածս՝ Ս. Գրոց այլևայլ թարգմանութեանց մէջ. այսինքն է՝ հայերէնի մէջ Գ Եզրի կոչուած է, որովհետև դէմ մեր մատենագրանի քոլոր Աստուածաշունչներուն մէջ Բ Եզրէն վերջ գետեղուած է: Լատին թարգմանութեան մէջ՝ Դ գիրք կոչուած է այն, որովհետև քաց ի երկու կանոնական Եզրներէն՝ երրորդ անկանոն մ'ևս, այսինքն են Ա և Բ գլուխներն, որք չեն գտնուիր հայկական, ասորական և այլ խմբագրութեանց մէջ, յառաջ գետեղուած են քան զայն: Անկանոն գիրքս՝ Ս. Գրոց ասորի թարգմանութեան մէջ Ա գիրք Եզրի կը կոչուի, վասն զի երկու կանոնական Եզրներէն յառաջ գետեղուած է: Ըստ այսմ՝ յորջորջուած է նաև եթովպական և արաբական թարգմանութեանց մէջ:

մանակ, արդէն իսկ գաղափար մի տուինք անոնց՝ այս գրուածին հետ ունեցած աղերսի մասին. իսկ այժմ պիտի ուսումնասիրենք զայս իւր ամբողջութեամբը կամ էական խնդիրներով ի միասին:

Գրուածին նախկին բնագիրն անյայտացած է, զոր քննադատներէն ոմանք երբայեցերէն լեզուով գրուած կը համարին, իսկ այլք՝ յունարէն: Երկաքանչիւր կարծեաց իսկ ի նպաստ՝ բացորոշ վկայութիւններ կամ շօշափելի յիշատակարանք չկան. սակայն մէկ կողմէն՝ յունական հայրերէն ոմանց անկէց ըրած կոչումներն, և միւս կողմէն այլ՝ յունարէն թարգմանութեան մի մինչև ցայսօր չերևիլն՝ կը թուին հաստատել վերջնոց կարծիքը, այսինքն թէ՝ բնագիրն ըստուգիւ յունարէն ըլլալու էր, և թէ այդ պատճառաւ է որ սոյն լեզուով թարգմանութիւն մ'ունենալու պէտքն զգացած չեն Յոյնք: Ա. հա այս տեսակէտով է, որ մեծ նշանակութիւն կը տրուի այլևայլ ժամանակներ կատարուած և այլևայլ գրականութեան մէջ պահուած թարգմանութիւններու, որոցմէ չորսը միայն հրատարակութեամբ ծանօթացած են գիտնոց և քննութեան ենթարկուած, զորս պէտք է համառօտիւ ծանօթացնել նաև մերայնոց. իսկ հայկականն՝ ոչ ըստ արժանւոյն ամենուն ծանօթացած է և ոչ իսկ ուսումնասիրուած. հետևաբար, մենք այլ նպատակ ունինք վերջնոյս միջոցով չանալ պարզել նախկին բնագրի և անոր ծագման, և այլն, վերաբերեալ խընդիրները:

Ա. Ասորական թարգմանութիւնն, որ ցայսօր եղած քննութեանց համեմատ ամենէն հնագոյնն է, հրատարակուեցաւ[1] նախ, յամին 1868, Մեդիոլանու Ամբրոսեան մատենադարանի տեսուչ Հ. Կերիանիի նախաձեռնութեամբ: Հրատարակութեանս, ինչպէս և ասորական թարգմանութեան, իբրև միակ ներկայացուցիչ կարծուած է յիշեալ մատենադարանի թիւ B. 21 (inf.), այն է U. Գրոց՝ ասորավեցիչեան (Syro-Hexaplari) կոչուած օրինակն, զոր գիտնական հրատարակիչն Զ դարում գրուած կը համարի: Թարգմանութիւնս կը կրէ հետևեալ խորագիրը. Գիրք Եզր գրչի, որ կոչի Սաղաթիէլ: Հ. Կերիանի՝ ասոր բնագրի հրատարակութենէն երկու տարի յառաջ ի լոյս ընծայած էր արդէն յիշեալ գործին (Հատ. Ա. Պրակ Բ) մէջ անոր լատին թարգմանութիւնը: Ասորական խմբագրութիւնն, չտայլօրէն և կրկնաբանութեամբք չարադրուած լինելով, միւռներէն աւելի ըն-

1. Sha Monumenta Sacra et profana, Tom. V, Fasc. I, p. 45–106. Mediolani 1868.

դարձակուած կ'երևի. բայց հանդերձ այսու կարելի է ըսել՝ թէ սա միւս թարգմանութիւններէն նուազ խանգարմանց ենթարկուած է, և հետևաբար՝ աւելի հաւկանալի:

Բ. Արաբական թարգմանութիւնն, որուն կրկին խմբագրութիւնք հասած են մեզ: Առաջինը Սիմոն Ոկքելի, յամին 1354 գրուած, Օքսֆորդի Բոդլէեան գրատան թիւ 251 ձեռագրէն անգղիարէն թարգմանելով հրատարակեց. իսկ բուն բնագիրն այլ, յամին 1863, լոյս տեսաւ Հեննր. Էվալդի[1] ձեռքով, որ բաց ի Բոդլէեանէն՝ Վատիկանի գրատան մի ուրիշ ևս ի գործ ածեց: Այս խմբագրութիւնս յունարէն բնագրի հետքեր ցոյց կու տայ: Արաբական Ե խմբագրութիւնն, որ ընդհակառակն մեծապէս կը տարբերի առաջինէն և յունարենէ անկախ կ'երևի, կը գտնուի Բոդլէեան թիւ 260 և վատիկանեան թիւ 462 գրչագրաց մէջ: Էվալդ, յամին 1865, զայս ևս ի լոյս ընծայեց: Սոյնն՝ յամին 1877 վատիկանեան ձեռագրի համաձայն լատիներէնի թարգմանութեամբ նորէն հրատարակուեցաւ Վիլդեմայստէրի աշխատասիրութեամբ[2]: Այս հրատարակութեանս մէջ՝ ի փակագծի նշանակուած են նաև l, b, v օրինակաց տարբերութիւններն, ինչպէս և ենթադրուած յոյն բնագրի համաձայնող ինչ ինչ ընթերցուածներ: Այս խմբագրութիւնս, զոր ունէինք ի ձեռին, աւելի համառօտաբան է քան զառաջի և լատին թարգմանութիւններն, բայց յաճախ աւելի ատենց հետ կը համաձայնի՝ քան հայերենին: Լատին թարգմանութեան ԹԵ և ԹԶ գլուխներն՝ առջ մէջ ևս կը պակսին: Առջ մէջ ըստ մեծի մասին կը պակսին այն կասկածելի տեղիքն, որոնք յետ ժամանակաց ներմուծուած կը համարուին Եզրի անկանոն գրոց մէջ: Եթէ հաւատարիմ թարգմանութիւն մ'եղած համարինք զայս, բաւական կռուաններ կու տայ կարծելու՝ թէ նորա նախկին բնագիրն ևս այժմու ատոր և այլ թարգմանութիւններէն շատ տարբեր եղած ըլլալու էր. սակայն ինձ հաւանական կ'երևի, թէ դորա խմբագրողն և ոչ իսկ յոյն բնագիրը տեսած է, այլ կամ ատուրյն կամ արաբական առաջին թարգմանութեան վրայ յօրինած է զայն՝ զեղչելով և փոփոխելով իրեն լաւագոյն երևցած կերպով:

Գ. Եթովպական հին թարգմանութիւնն, զոր առաջին անգամ հրատարակեց Ռիչար Լորանս՝ Բոդլէեան թիւ 7 ձեռագրի վրայէն.

1. Տես Abhandlung der Königl. Geselsch. der Wissensch. zu Göttingen 1863. XI. Bond.

2. Որ կը կրէ այս խորագիրս. Esdrae liber quartus arabice e cod. Vaticano, Bonn 1877.

իսկ Վիլման վերստին տպագրեց զայն Եթովպական հին կտակարանի ընդարձակ հրատարակութեան մէջ, ի գործ ածելով ուրիշ օրինակներ ևս։ Էվալդ, Հիլգենֆելդ[1] և Պրետորիոս ևս կարևոր սրբագրութիւններ և նշանաւոր դիտողութիւններ ըրած են առանձինն այս թարգմանութեան մասին, որոց վերայ կը դարձնենք և մերայոց ուշադրութիւնը։

Դ. Լատին թարգմանութիւնն, որ հաւասար ասորականին և գուցէ թէ աւելի հին է քան զայն, այլևայլ անգամ հրատարակուած է, մերթ այս ինչ և մերթ այն ձեռագրի վրայէն։ Այս թարգմանութիւնս ծանօթ ըլլալու է և մեր ազգայնոց, զի Ոսկան Վ. Ձեռքով հայերենի փոխուելով հրատարակուած է նախ, յամին 1666, յԱմստերդամ Աստուածաշնչի մէջ, և ապա յամին 1705 ի Կ. պոլիս, Պետրոս լատինացւոյ ջանիւք եղած Ս. Գրոց Ե տպագրութեան մէջ։ Վերջինն և ամենէն աւելի նշանաւորն է Յ. Էրմիտաժ Ռոբինոնի աշխատասիրութեամբ յամին 1895 եղած հրատարակութիւնն[2], բաղդատութեամբ վեց օրինակաց[3], զոր նաև մենք ի ձեռին ունենալու և հայերենին հետ բաղդատելու բաղդն ունեցանք։

Ե. Հայկական թարգմանութիւնն, որ միւսներէն երիցագոյն է, ի բաց առեալ ասորին և լատինականը, հրատարակուեցաւ առաջին անգամ, այն է յամին 1805, ի Վենետիկ՝ Հ. Զօհրապեան բանիբուն մխիթարեան վարդապետի աշխատութեամբ կատարուած՝ հայերէն Աստուածաշնչի մեծայարգ տպագրութեան մէջ, առանձին յաւելուածով անկանոն գրոց։ Այս հրատարակութեանս մէջ Հ. Զօհ-

1. Տես Messias Judœorum ընդարձակ և չափազրկիս երկասիրութիւնը։

2. Տես Texts and Studies, Vol. III. N°. 2, The fourth Book of Ezras, Cambridge, 1895.

3. Այս գրչագրերն են Ա. S. այսինքն է՝ Cod. Sangermanensis, որ այժմ կը գտնուի Պարիսու ազգ. մատենադարանին մէջ, երկհատոր, թիւ 11504, 11505։ Գրչագիրս գրուած է յամի Տեառն 822. Աթաանիէ իսկ գործածած է զայն, իւր Biblorum Sacrorum latine versionis antiquae, Reims, 1743–1749, գործին համար։ Բ. A, այսինքն է՝ Cod. Ambianensis, թիւ 10, որ կը գտնուի Ամիէնս քաղաքի հասարակաց գրատան մէջ։ Բևրժէր (Notice sur quelques textes latins inédits de l'A. T. 1893) թ գաղտնի գրուած կը համարի այս ձեռագիրս։ Գ. C, այսինքն է՝ Cod. Complutensis, որ կը գտնուի Մադրիտի Կեդր. Համալսարանի գրատան մէջ, և է թիւ 21։ Դ. M, այն է՝ Cod. Mazarineus ի Պարիս, և է թիւ 3, 4։ Ե. V, այն է՝ Cod. Abulensis, որ կը գտնուի Մադրիտի ազգ. գրատան մէջ։ Զ. L, այսինքն է՝ Cod. Legionensis, թիւ 1–3, որ կը գտնուի Ս. Խաչդրի գրատան մէջ, և ըստ Բէրժէրի գրուած է յամի Տեառն 1162։

բապեանն՝ յոյժ խմաստութեամբ Գ Նզրը գլխակարգութեանց և թուահամարներու վերածած է, համաձայն լատին թարգմանութեան (թէ և շատ տեղ գլխովին անհամաձայն կ'ընթանան իրարու), որոնք մեծ դիւրութիւն կը պատճառեն ուսումնասիրաց՝ ի մասին բաղդատութեան: Ա. այս յոյժ պարտական եմք Հ. Զօհրապեանին. սակայն դիտել կու տանք և զայս, որ Զօհրապեանի հրատարակութեան Ա գլուխն կը համապատասխանէ լատին թարգմանութեան Գ գլխոյն. վասն զի վերջնոյս Ա և Բ գլուխներն կը պակսին նաև հայկական թարգմանութեան մէջ: Այս պատճառաւ իսկ զօհրապեան հրատարակութեան մէջ Ա գլխոյն անմիջապէս կը յաջորդէ Գ գլուխն: Բ. սա ԺԴ գլխով կ'աւարտի, իսկ լատինն ունի և ԺԵ–ԺԶ գլուխներն աւելի, որոնք Ա և Բ գլուխներուն հետ կը կազմէին երբեմն Նզրի Գ գիրքը, համաձայն C և M օրինակաց, ինչպէս Գ–ԺԴ գլուխներն այլ կը կազմէին Գ գիրքը: Լատիներէն A օրինակն ասկէ տարբեր բաժանումն ունի ըստ Երմ. Ռաբինաոնի, այսինքն է, Գ Նզր = գլ. Ա–Բ, Գ Նզր = գլ. Գ–ԺԴ, Ե Նզր = գլ. ԺԵ–ԺԶ: Այս նախագիտելիքս, զոր դիտմամբ մէջ կը բերենք, յուսոյ պիտի ծառայեն իբրև բանալի՝ Նզրայ անկանոն գրքի բնագրին և թարգմանութեանց գաղտնիքը բանալու:

Գալով ուղղակի վերնեռկեան վերջին հրատարակութեան, դիտել կու տանք, որ կատարուած է ըստ ամենայնի համաձայն Հ. Զօհրապեանի հրատարակութեան, առանց կարևորութիւն տալու կամ նշանակելու ուրիշ գրչագրաց դուշնաքեայ կարծուած տարբերութիւնքը, որոնք անծանօթ էին թերևս գիտնական Մխիթարեանին: Այս բանս ակներև է ի տես 25 իջի դրուած ծանօթութենէն, որ նոյն է Զօհրապեանի հրատարակութեան 13 իջում տրուած տեղեկութեան հետ: Սակայն կայ տարբերութիւն մի նկատմամբ գլխակարգութեանց, և երանի՛ թէ բնաւ չլինէր. այսինքն է, Ա գլխով կը սկսի և ԺԲ գլխով կ'աւարտի. որովհետև նոր հրատարակիչն՝ Զօհրապեանի հրատարակութեան Գ գլխոյն տեղ՝ զՌ գլուխը կարգած է: Այս բանս եղած է կամ Զօհրապեանի միտքը լաւ չհասկանալէն և կամ փոքրիկ անուշադրութեամբ մի, որով սպրդած է մի ուրիշ տպագրական վրիպակ. այսինքն է, Գ գլուխն կրկնուած է և Թ այլ բնաւ նշանակուած չէ: Իսկ թուահամարները բառնալու միակ պատճառն եղած է, հաւասարութիւն պահել անվաւերական գրոց բոլոր հրատարակութեան մէջ. այսինքն է, զի միւս գրուածներէն ոչ մին թուահամարներու կամ տանց բաժնուած չէ դժբաղդաբար, որ եթէ հոգացուէր՝ մեծ դիւրութիւն պիտի պատճառէր:

վերոյիշեալ թարգմանութիւններէն ոչ մին ունի այնքան օրինակ-
ներ, ինչպէս հայկականն. միայն մեր մատենադարանին մէջ ունինք
չորս ընտիր օրինակներ[1], նոյնքան և աւելի օրինակք[2] կան էջմիած-
նում. այսպէս և յԵրուսաղէմ և ուրիշ ձեռագրատանց մէջ ըլլալու
են ոչ ինչ նուազ օրինակներ: Այս իրողութիւնս ցոյց կու տայ մեզ,
թէ Գ Եզրն՝ իբրև լոկ հնութեան յիշատակարան մը պահած չեն
Հայք, այլ իբրև հրահանգիչ գրութիւն ի գործ ևս ածած եկեղեցւոյ
մէջ: Ասոր արդիւնք համարելի է և հետևեալ երևոյթն. այսինքն է,
այնքան և այսպիսի ներկայացուցիչք հաւատարմութեամբ պահպա-
նած են զայն, առանց փոփոխութեան և յաւելուածոց ենթարկելու.
վասն զի սոցա իրարմէ ունեցած տարբերութիւնքն՝ նկատմամբ միւս
թարգմանութեանց ներկայացուցիչներուն՝ գրեթէ ոչ ինչ են[3], գէթ
մեր ունեցած օրինակներէն դատելով: Կարելի է արդեօք իբրև պատ-
ճառ հայ գրչագրաց այսպիսի զարմանալի միօրինակութեան համա-
րել՝ կամ Գ Եզրի հայկական թարգմանութեան՝ կարճուած ժամանա-
կէն շատ վերջ թարգմանուած լինելն, և կամ ըսել՝ թէ յիշեալ օրի-
նակներն բոլորն ևս մէկմէկէ ընդօրինակուած ըլլան: Առաջին կետի
նկատմամբ մեր գրատան Աստուածաշունչներն նպաստաւոր կ'երևին,

1. Այսինքն են, Գ Աստուածաշունչն, գրեալ յամի Տեառն 1648, Դ Աստուա-
ծաշունչն, գրեալ 1655ին, Է Աստուածաշունչն, գրուած յամին 1651, և Թ Աս-
տուածաշունչն, որ ժէ դարուս գրուած կ'երևի:

2. Որոնք են ըստ Գալուստ Տէր-Մկրտչեանի՝ Ա. թիւ 31 Աստուածաշունչն հին
թուականն, — Բ. թիւ 29 Աստուածաշունչն՝ գրուած ի թուին Հայոց ՉԿԶ = 1317,
— Գ. թիւ 27 Աստուածաշունչն, գրեալ ի թու. հ. ՈԿՀ = 1619, — Դ. թիւ 20
Աստուածաշունչն, գրեալ ի Շօշ ի թու. ՈՃԹ = 1660:

3. Կը նշանակենք այս տեղ Թ և Դ Աստուածաշունչներու տարբերութիւնքը,
զորս յիշած չէ Զօհրապեան ի շարս իւր գործածած օրինակաց: Գլ. Ա. 8, Թ Աս-
տուածաշունչն ունի՝ «ի նմանէ», — 13. «անօրէնութիւնք», — հատ. 14. Թ և Դ
օրինակներն ունին «Աբրաամ», — 34. Դ օրին. «գոհ», — գլ. Դ. 1. ունի Դ
օրին. «որոյ անուն նորա», — 13. «ի գաշտին», — 17. ունի Դ, Թ օր. «երթեալ
կռուեալ», — 37. Ըստ Դ օր. «փութացա», իսկ ըստ Թ օր. «փութաց», տպէ.
«փութայ չիք ուրեք». — 39. Թ օր. ունի՝ «որ բարկութեանց են պատուիք». —
38. Թ. Դ օր. «խնդրեացեն». — 51. Դ օր. «ոմն ի ձէնջ» կը գրէ վրիպակաբ. —
գլ. Ե. 18, Թ օր. «չարեաց», — 36. Թ օր. «և ասացի ասա ինձ. Եւ ասէ. ասա
ինձ», — 45. Թ օր. «համբերեցէ». — 53. Թ, Դ օր. «ասացին զքեզ»: Գլ. Է.
35, Թ օր. «և հետ գործոց». — անդ. «հարաւոյ». — 40, Թ օր. «Ահնակերև-
մի». — Ագոթք 33 հատ. «սրբովք քովք կամօք» ունին, — անդ. «յիւրեանց գոր-
ծոց»: Գլ. Թ. 15. ունին «զիւր ինուացի», — 23. «երթեալ». — 26. «Ար-
գասի». — Գլ. ԺԲ. 46. ունին «ասեմ զնոսա»: Գլ. ԺԴ. 26. «մինչև ի կա-
րել». — 47. «չարաչիւն ամաց» ունի Թ օրինակն:

վան զի Գ նզրը պարունակող օրինակներն ժե դարէն վերջ ընդհանրապէս գրուած կ'երևին, իսկ ԺԴ–ԺԵ դարու սկիզբներըը գրուածներն՝ չունին զայն։ Սակայն այս մասնական երևոյթ մ'է, ըստ ի՛ս, յորմէ չենք կրնար հետևցնել՝ թէ ԺԵ դարուն առաջին անգամ սկըսած ըլլան Հայք՝ Գ նզրը Աստուածաշունչ մատենին մէջ անցընել։ Եւ յիրաւի, եթէ ճիշդ է Գալուստ Տէր–Մկրտչեանի էջմիածնէն ինձ հաղորդածն, այն վանաց հարուստ գրատան թիւ 29 Աստուածաշունչն, որ գրուած է յամի Տեառն 1317, և թիւ 31 Աստուածաշունչն անթուական, որ նոյնչափ և աւելի հին է, կը պարունակեն նոյնպէս Գ նզրը՝ յետ գրոցն Նէեմեայ։ Բ. Մխիթար Այրիվանեցւոյ ժամանակագրութեան մէջ պահուած Սարկաւագ վարդապետի ցանկին համեմատ, «Եզր Սաղաթիէլ» նոյն իսկ ԺԱ–ԺԲ դարում հին կտակարանի մէջ անցուած էր, և այժմեանէն բոլորովին տարբեր տեղ կը գրաւէր, այսինքն է՝ ընդ մէջ գրոցն Եսթերի և Յոբայ։ Այս պատճառաւ անշուշտ «Եզր երրորդ» մակագրուած չէ հոն, այլ Եզր Սաղաթիէլ պարզապէս։

Սակայն ուշադրութեան արժանաւոր և միանգամայն դժուարլուծելի կնճիռն է հետևեալն. այսինքն է՝ իւր ներկայացուցչաց հետ կատարելապէս համընթացող հայկական թարգմանութիւնն՝ ասորի, լատին և արաբական թարգմանութիւններէն ընդ հակառակն այնքան և այնպիսի հոծ տարբերութիւններով կը խոտորի, որ յաճախ անկարելի կը լինի իւրաքանչիւր երեսի մէջ կարենալ նշանակել այդ տարբերութիւնները, վասն զի դոքա լոկ բառից և բացատրութեանց մէջ չեն կայանար, այլ ամբողջական տուներու, ընդարձակ պարբերութեանց և երբեմն ամբողջական էջերու մէջ, որոնք երբեմն յաւելուած կ'երևան ունին և երբեմն այլ յապաւմանց։ Կան դարձեալ տեղեր, որոնք կամ այլ ընդ այլոյ թարգմանուած են՝ անհասկացութեամբ թարգմանչին, կամ խանգարմունք են գրչագրաց և կամ արդիւնք մեզ անյայտ բնագրի մի։ Լաւ կը լինէր որ Հ. Զօհրապեան՝ կանոնական գրոց հրատարակութեան մէջ իւր գործածած դրութիւնը՝ հօս ևս ի գործ ածէր. այսինքն է՝ հայ գրչագրաց տարբերութենէն դուրս՝ զէթ լատին թարգմանութեան հետ ունեցած տարբերութիւնքն ևս հանդերձ պատճառօք դնէր ի տորև. սակայն նա այս բանս ըրած չէ։ Բայց հանդերձ այսու պէտք է ըսել, թէ նա բաղդատած էր զհայն լատին թարգմանութեան հետ և իրեն լաւ

տեղեկացած, ինչպէս որ ինքն անձամբ կը տեղեկագրէ զայս հա-
մառօտիւ՝ Յաւելուածի նախադրութեան մէջ[1]:

Զօհրապեանի հրատարակութենէն, այսինքն է՝ 1805էն մինչև 1864՝ եգրի անկանոն գրքի հայկական թարգմանութիւնն, կ'երևի թէ, դեռ ծանօթացած չէր այս մատնագիտութեամբ պարապող եւ-
րոպացի գիտնականներուն. վասն զի Էվալդ[2], դեռ 1863ին խօսելով այս գրուածին մասին, կը յայտարարէր՝ թէ անոր լատին, եթովպա-
կան և արաբերէն թարգմանութիւնքը մեզ ծանօթ են: Հ. Մ. Կե-
րիանի[3] գրեթէ առաջին անգամ յամին 1864 առիթ ունեցաւ խո-
սելու Զօհրապեանի հրատարակութեան վերայ: Հեղինակիս այն բա-
նախօսութիւնը առ ձեռն չունենալով, ես կը բաւականանամ անկէ քա-
ղուածաբար մի այլ գրութեան[4] մէջ բերուած խօսքերով: Ասա՝ հե-

1. Ահա նորա խօսքերն. «Այլ, ես հանդամանաւք չարագրութեան ոճոյն՝ յայտ-
նապէս երևէր, յետոյ ուրեմն (այսինքն է՝ յետ Բ գրոցն Եգրի) թարգմանեալ է և
մուծեալ ի կանոն գրոց. այլ թէ յորմէ՞ սկզբնագրէ, և ո՞րք կամ ո՞յր ձեռամբ, չու-
նիմ ինչ ասել առուգութեամբ: Զանպի ի-ծեցեալ ծը բ-ուղ-ոփել զ-ոյն զ-յո՝ ընդ լ-
փնա-ւանին, զոր թարգմանեաց Ոսկան, այնչափ զանազանութիւն պետանէմ ի նոսա,
մինչև բազում սուրբ սկզբնել իսկ բնաբան համարձակութեան. թէպէտև այնու ամենայնիւ
չանացաք ըստ կարի պհամաձայնութիւն գլխոց և տանց լատինականին՝ առընթեր
նշանակել, զոր և երկու ի վերոյասացեալ օրինակացն սկսեալ էին առնել, և անկա-
տար թողեալ»:

2. Ար Abhandlungen der Königl. Gesellsch. der Wissensch. zu Göttingen. XI. Band, Hist. — Philos. classe, s. 136 *Հարքին մէջ հրատարակած իւր երկին մէջ կ'ըսէ, թէ «Անորոշ գրուածիս սկզբնագիրն՝ մինչև ցայսօր մեզ հասեալ բոլորովին անյայտ ծագած է, և անոր նախկին պարունակութիւնը՝ միայն մեզ հա-
սած այժմեան լատին, եթովպական և արաբերէն լեզուով թարգմանութեանց ձեռքով ապահովութեամբ վերակազմելն՝ ունի իւր մեծագոյն դժուարութիւնքը»: Հայերենի մասին բնաւ խօսք չկայ:*

3. Ահա ինքն է. *Sul Das vierte Ezrabuch del Dr. Enrico Ewald, Osservazioni, հրատարակեալ ի* Sessione Reg. Ist. Longob. Scienze e Letteratura *կոչուած գործոց մէջ:*

4. Ան է *Liber IV Ezdrae syriace, որ գրուած է այսպէս, ըստ քնա-
գրին.* «Questa versione (*հայերէնն*) confrontata colle altre, latina, siriaca ed araba, e colla recensione (etiopica) di Ewald, ha varie trasposizioni e lacune ed anche dilungamenti; e dall'esame comparativo di varii passi, rende in generale più il senso, abbreviando, che non il testo letterale, quale più o meno fedelmente è riportato dalle altre versioni. *Յետոյ խօսե-
լով, յէջ 42, ասորի բնագրի մասին, զոր ինքն թարգմանից ի լատին լեզու, կը յաւելու այսպէս.* «Atque a nostra (*ասորականէն*) fortasse fluxit et *armena* (*թարգմանութիւնն*) edita in Bibliis vulgatis a Zohrab, quacum nondum contuli». *այսինքն է, «ասորիէն յառաջ եկած է թերևս նաև հայկական թարգմա-
նութիւնն, հրատարակեալ ի Զօհրապեանէ, թէպէտև դեռ ստուգած չեմ զայն»:*

ինակն կը ծանուցանէ, թէ բաղդատելով հայկական խմբագրութիւնը՝ լատին, ասորի և արաբական թարգմանութեանց հետ, գըտած էր անոր մէջ այլևայլ տեղափոխութիւններ, յապաւումներ և ընդլայնումներ։ Միով բանիւ, այլևայլ տեղեաց քննութենէն կը տեսնուի, թէ հայկական խմբագրութիւնն ընդհանրապէս բնագրի իմաստը կը ներկայացնէ մեզ, համառօտելով, քան թէ զբնագիրն ինքնին նիւթապէս, որուն ստկայն իրարմէ աւելի կամ պակաս հաւատարիմ ձեացեր են յիշեալ թարգմանութիւններն։

Ի սորև դրուած ծանօթութիւններէն կը տեսնուի, թէ ինչպէս Զօհրապեանին՝ այսպէս և Մ. Կերիանեայ դիտողութիւնները ճիշդ են. բայց այդպիսի յայտարարութեամբ մի միայն՝ յիշեալ թարգմանութեանց և բնագրին վերաբերեալ կնճռոտ խնդիրներն բնաւ լուծուած չեն կրնար համարուիլ. վասն զի բաղդատութեան նպատակն ըլլալու է, գիտնալ թէ որո՞նք են հայերէն խմբագրութեան այն տեղիքն, ոյք բոլորովին անհամաձայն կ'ընթանան սորի, լատին և այլ խմբագրութեանց. ինչ պատճառներէ յառաջ եկած և ինչպիսի առանձնայատկութիւններ ունին. նա մանաւանդ որ աւելի զարմանալին է, այսպիսի հանգամանաց ներքև գտնուող հայկական խմբագրութիւնն՝ ինչպէս կարէ սորականէն ծագումն առած լինել, ինչպէս կ'ենթադրէ Կերիանի։ Այսպիսի պարագայից մէջ աւելի բանաւոր չէ՞, որ հայկական թարգմանութիւնն մանաւանդ ուղղակի յունարէն կամ եբրայեցերէն հին բնագրին հետ աղերս ունեցեալ։ Հաւասիկ կարևոր և էական կէտեր, զորս ապացուցած չեն Զօհրապեան և Կերիանի, առաջնոյն՝ ասորական, եթովպական և արաբական թարգմանութեանց հրատարակութիւններն դեռ ծանօթ չլինելով, իսկ վերջնոյս՝ հայերէն լեզուն։ Ուստի այս նպատակաւ ուզեցինք մենք նախ հայերէնը ծայրէ ի ծայր բաղդատել լատին, ասորի և արաբական Բ թարգմանութեանց[1] հետ. նշանակելով անոնց իրարմէ ունեցած նշանաւոր տարբերութիւնքը, հանդերձ կարեւոր դիտողութեամբք։

Ասուոյն տարբերութիւնն գրոց տիտղոսէն կը սկսի, որ է Գիրք Եզրի գրչի, որ կոչի Պաղաբիէլ. Արբ. տիտղոսն է ըստ վատիկանեան Ar. 462 (V) ձեռագրին համաձայն, Գիրք Եզրի մարգարէի,

1. Ճշմարտութեան համար կը ծանուցանեմ, թէ ասորերենի և արաբերենի տեղեակ չլինելուս պատճառաւ, համեմատութիւններն ուղղակի այն բնագրոց հետ չկարացի ընել, այլ անոնց վրայէն Կերիանեայ և Գիլդեմայստերի ձեռքով կատարուած լատիներէն հրատարակութեանց հետ, զորս կանխաւ յիշատակեցի։

զոր Ոշայր կոչեն. լատին S օրինակն՝ համաձայն արաբացւոյն ունի՝ Liber Ezrae prophetae, etc. հայն՝ ոչ ասորւոյն գրիչ և Սաղաթիէլ բառերն ունի, և ոչ իսկ լատինի և արաբացւոցն վարգարէ յաւելուածն. ուստի, եթէ թարգմանիչն ըստ կամս համառօտած չէ այս տիտղոսը, պէտք է որ ուրիշ բնագրէ մի յառաջ եկած լինի:

Ասորին՝ Գլ. Ա. 1. ի սկզբան երկու նշանաւոր տարբերութիւններ ունի. այսինքն է՝ «Յամին երեսներորդի կործանման Երուսաղեմի... և տեսաւնէի զչքոռմն Սիոնի և զխութիւն այնոցիկ՝ որ բնակէին ի Բաբելոն»: Արբ. փոխանակ առաջին ենթադծուած բառերուն՝ ունի «յետ չինութեան քաղաքին մերոյ Բաբելոնի», և փոխանակ վերջնոց՝ «և անկաւ ի միտս իմ աւերուածն Սիոնի և լքումն նորին». լատինն՝ ըստ ամենայնի կը համաձայնի ասորւոյն, գրելով. «Anno tricesimo ruinae civitatis... vidi desertionem Sion et abundantiam eorum qui habitabant in Babilone». Հայն՝ նկատմամբ առաջին տեղւոյն՝ երեք թարգմանութիւններէն ևս կը տարբերի. վասն զի «Յամին երեսներորդի» էն վերջ չունի ասորւոյն կործանման Երուսաղեմի բառերը. տակայն «վասն չինածոյն Բաբելոնի» և «վասն աւերածոյն Սիոնի» բացատրութեամբք՝ աւելի արաբացւոյն կը համաձայնի, որ յայտնի նշան մ'է, թէ ըստ քմաց յառաջ եկած չէ ասորիէն և լատինէն ունեցած տարբերութիւնն, այլ այնպիսի բնագրէ մի, որ ծանօթ ըլլալու էր նաև արաբական ի խմբագրութեան հեղինակին:

Գլ. Գ. 17–23 հասուածն՝ «Et cum educeres semen ejus ex Egypto et finitae sunt horae», յորում ասորւոյն հետ՝ լատինն ևս կատարեալ համաձայնութեամբ կը պատմեն (իսահատութեան Սողոմոնի ժէ և ժԸ գլուխներուն վերայ յերիւրուած) Ասուածոյ սքանչելիքն և փառաց անցքը՝ չորեքկերպեան յայտնութեամբ, այսինքն է, հրով, երկրաշարժիւ, հողմով և կարկտաւ. երկինքը խոնարհեցնելն, գերկիրս հաստատելն և փոխոխելն, անդունդները ասանձնացնելն, գարերը յեղափոխելն, օրինաց տուչութիւնն և Իսրայելացւոց խստասրտութիւնը, այլուվք հանդերձ, հայերենին մէջ բոլորովին տարբեր կերպարանք առած է. այսինքն է, հոս փոխանակ այլաբանականին՝ Աբրահամէն սկսեալ մինչև Սողոմոն նահապետները կը յիշատակուին յանուանէ, իրենց վերաբերեալ պատմական դէպքերով, որ իրրև չարայարութիւն մ'առաջին տանց՝ մէջ կը բերուին: Արբ. ի խմբագրութիւնն՝ թէ և փոքր ինչ համառօտ՝ բայց բառական կերպով ասորւոյն և լատինի ընթերցուածը կը հաստատէ. միայն թէ

փոխանակ Ա*ա*. *և* Լ*ատ*. portas quatu·r*i՝ ունի, ըստ թարգմանութեան Գիլդեմայատերի*, super quatuor *animalia*, (*այսինքն է*, per ignem, terraemotum, ventum, gelu), *յորում հրատարակիչս կը դանէ, թէ փոխանակ* θήραξի θύρας *ըլլալու էր յունարէն անյայտացած բնագրի մէջ։ Հայն՝ ոչ մի յիշատակութիւն չունի այս մասին՝ հին բնագիրը լուսաբանելու համար, և այնպէս կ՚երևի՝ թէ Եզրի անվաւեր բնագրէն աւելի՝ ըստ կամս յօրինուած ըլլան թարգմանչէն. հակառակ դէպքում՝ յոյժ հետաքրքրական պիտի լինի այսպիսի մի խոտորում յիշեալ երեք թարգմանութիւններէն։*

Գ*լ*. Դ. 28–32 «Seminatum est enim malum — magnam arcam incipient facere» *համարներն, յորս ասորին, լատինն և աբաթացին միաբան և պայծառ կերպով կ՚աւանդեն, թէ մեղք և չարիք, Ադամէն սկսեալ, մարդկային բոլոր բնութեան մէջ սփռուած է՝ որպէս սերմն չար ընդ բարւոյն. ուստի, մինչև որ չար սերմն չընձնձուի՝ ազարակն բարւոյն չի յաջողիր. այսպէս նաև չարիք ամբարշտաց՝ մինչև որ արդարոց վրայէն չանցնին, ոչքա չեն կարող վարձուց արժանանալ։ Հայերէնն այնքան անորոշ է և խառնակ, որուն համար կարող ենք ասել, թէ կամ թարգմանիչն առանց լաւ հասկնալու համառօտել ուզած է իր բնագիրը, և կամ ըստ դիպաց խանգարուած է։ Նոյն գլխոյ* 35 *համարին մէջ, խօսելով արդարոց հատուցման մասին, կը գրեն միաբան* Ա*ա*. *և* Լ*ատինն*. «Nonne enim de his interrogaverunt animae justorum in *Promptuariis suis?*» (*ի կայանս իւրեանց*). Ա*րբ*. *կը գրէ նոյն բանը՝ բայց նշանաւոր տարբերութեամբ մի, այսպէս*. «Impatientes *diuturnitatis* (*տևողութեան*) justorum animae dixerunt», etc։ *Հայն ենթադրուած խօսքերէն ոչ մին ունի և ոչ այլ միւսը, այլ կը գրէ*. «*Քանզի վասն նորա խնդրեցին ի բարձրելոյն անձինք արդարոց, և ասեն*»։ Ա*րդ, դիտելով որ է գլխու* 32 *համարում և՛ հայն՝ հակառակ ասորւոյն և լատինին, որոց այս անգամ կը համաձայնի և՛ արաբացին, զեղչած է բառն* promptuarium = *կայան, կրնանք ըսել թէ դիպուածի արդիւնք չէ այս, այլ կամ դիտմամբ զայն՝ բարձրելոյն փոխած է, կայանատրաց մոլորութենէն խոյս տալու համար, և կամ Եօթանասնից Ψիστοչի համաձայն, որուն հետ ժանօթ ըլլալու էր Եզրի յոյն բնագիրն*։

36 *համարին մէջ* Ա*ա*. *ունի* Ramiel angelus. Լ*ատինն ունի* Hieremiel archangelus *ըստ* S. *օրինակին*, Uriel *ըստ* C. *օր*. *և Remihel ըստ* M. *օրինակին*. Ա*րբ*. *ունի* Erêêl angelus (l. *Erémil*, b

Uriel). *Հայն միայն ունի ընդհակառակն, Տէր: Լատին* M *օր. և Սրբ. Ի օրինակն կը հաստատեն առաջին ընթերցումը. սակայն այս ձևս յունարէնի յատուկ չերևիր: 41 համարն, ուր կը յիշուին, ըստ առաջին և լատին և արբ. թարգմանութեանց, «դժոխք և կայանք հոգւոց», բոլորովին կը պակասի հայերենի մէջ:*

Ե գլխու 15 համարին մէջ հայն ունի Որիէլ անունը՝ «մի տըրտմիր — գոեր չնորհս յԱստուծոյ» 3 տող պատգամով ի միասին, որ կը պակսի միւս թարգմանութեանց մէջ. այս յայտնի նշան է, թէ Դ գլխու 36 տան և այս տեղւոյս մէջ փոխադրութիւն մի կրած է հայերէնն: Այս բանս կը հաստատուի 20 համարէն, ուր միւս թարգմանութիւնք վերատին կը յիշեն նոյն անունը, մինչդեռ հայն պարզապէս «հրեշտակն» ըսելով կ'անցնի, մօտաւորապէս յիշատակելոյն պատճառաւ:

35 *համարին «Որ ի վեր քան զքեզ — գաղտնեաց» հինգ տողերն՝ միւս թարգմանութեանց մէջ կը պակսին. իսկ* 36 *և* 37 *համարներն այլ ամենահամառօտ կերպով մէջ կը բերուին. մինչդեռ հայերենի մէջ եռապատիկ աւելի է, Ցորայ գրոց ԼՀ գլխոյն վերայ բնագննին նուրբ խորհրդածութիւններով ընդլայնեալ: Այս մասունքս յոյժ հետաքրքրական են Ցորայ գրոց բնագրի նկատմամբ, եթէ հնագոյն աղբերէ մ'առնուած են. և շատ հաւանական է որ այդպէս եղած լինի, որովհետև միւս թարգմանութիւններն ևս այդ կէտերէն մի քանիսին յիշատակութիւն կ'ընեն: 39 համարը հայ թարգմանիչն դիտմամբ գեղչած է, վասն զի այս տեղ եղած Եզրի հարցումն՝* 38 *համարին մէջ լռելեայն կը պարունակուի արդէն:*

Նշանաւոր է նոյնպէս հայերենի և միւս թարգմանութեանց մէջ եղած տարբերութիւնն 45 *համարում. զի ուր Ա. և Լատինն՝ միայն ներկայից և կենդանեաց վերայ ունեցած աստուածային տեսչութեան մասին կը խօսին, և հայն հանդերձեալ աշխարհի և մեռելոց վերայ ևս կը չեշտէ դայն, նշանաւոր պարագաներով. օրինակի աղագաւ,* «Et iterum respondi et dixi: Et quo modo dixisti servo tuo, quoniam vivificans vivificabis a te creatam creaturam in unum? Si ergo viventes vivent in unum, et sustinebit creatura, poterat et nunc portare praesentes in unum». *հայն ունի այսպէս.* «*Եւ ես եւս պատասխանի, թէ զիա՞րդ ասաց Բարձրեալն զարձեալ զմարդկեղէն արարածս. զի եթէ ասաց Բարձրեալն զամենեսեան միանգամայն յարուսցէ, զոր և գոցէ յայնմ ժամուն կի, զկենդանիսն՝ մեռելոք հանդերձ. և յորժամ յարիցեն և նորոգեսցէ*

զաւեհեսեահաւն, և ընկալցի զաւեհեսեահաւն յայնմ աշխարհի, և հաւքա-
րիցէ. ընդէ՞ր այժմ այս աշխարհս ոչ կարաց ընդունել զամենեսեան
միանգամայն» : Այս տեղւոյս «յարուսցէ, զորս և գտցէ յայնմ ժա-
մանակի, զկենդանիս՝ մեռելօք հանդերձ», յոյժ շահեկան է Պաւ-
ղոսի առաքելոյ (առ Թես. Ա. գլ. Դ. 16, և առ Ա. Կրթ. գլ. ԺԵ.
51–53) *տեղեաց նկատմամբ : Դժբաղդաբար Արք. ամենահամառօտ*
է և լոյս չի սփռեր տեղեացս միոյն կամ միւսոյն աւելի հաւատա-
րիմ լինելուն վերայ. զի այսչափ միայն կ'ըսէ. « Dixi ei: quomodo Domine, mihi dixisti, te eum esse, qui cunctas res a te creatas sustentet» . *սակայն լատին օրինակաց իրարմէ և յատուկն ունե-*
ցած ահագին տարբերութիւնքն, զոր նչանակած է Երմ. Ռոբինսոն,
ցոյց կու տան՝ թէ հայերէնն միւս թարգմանութիւններէն աւելի
կատարեալ կերպով պահած է բնագրի սոյն տեղին, որ եթէ Պաւ-
ղոսի յիշեալ տեղերէն ներչնչուած չէ, ունենալու է մեծ կարևորու-
թիւն :

Զ. գլխու 1–6 համարներուն ամենամեծ անհամաձայնութիւն մի
կայ հայերենին և միւս թարգմանութեանց մէջ : Սորա 1–2. համարի
34 *տող հատուածն,* « *Եւ ասէ ցիս. Հարց — պատրաստեաց Բար-*
ձրեալն» , յորում երկայնմտութեան իբրև օրինակ նախ կը յիշուին
Ենովքէն սկսեալ մինչև Ահարոն սուրբ նահապետք, և յետոյ այլ և
այլ հարց և պատասխաններ կը լինին Հրէից թերահաւատութեան
և մոլորութեանց, և Մեսիայի գալստեան և ուղղութեանց մասին, բո-
լորովին կը պակսին առաջի, լատին և արաբացի թարգմանութեանց
մէջ : Թէ այս բանս դիպուածական խանգարման արդիւնք չէ, յայտ-
նապէս կը տեսնուի Ե գլխու վերջին, այն է 55 համարին մէջ՝ դիտ-
մամբ առ հրեշտակն ուղղուած այս հարցումն. « *Խնդրեմ ի քէն,*
տէր, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. որ հարցանիմ քեզ վասն
բազմաց, զայս հրամայեա ինձ ուսանել ի քէն, վասն որոց կամիս
*հարցանել» . *Մինչդեռ Ա. և Լատինն ունին.* Et dixi: rogo, Domine – demonstra servo tuo per quem visitas creaturam tuam» .
Արք. ևս՝ փոքրիկ տարբերութեամբ նոյն հարցումը կ'ընէ : Արդ դի-
տելով որ per *quem* visitas creaturam? *հարցման ենթադրուած խոս-*
քով Մեսիան կ'ակնարկուի, որուն վերայ սակայն խօսք մ'ան-
գամ չկայ միւս թարգմանութեանց յաջորդ գլխուս 1 համարի պա-
տասխանոյն մէջ, այլ ժամանակի սկզբնաւորութեան և վախճանի
մասին, կրնանք ըսել որ հայերենի մեզ ընծայուած հատուածն ըստ
կամս յաւելուած չէ թարգմանչէն, այլ հին բնագրի մասն, որ չնոր-

հիւ հայոյն պահուած է, և «յառաջ քան զլինել բնակութեան երկրի», և այլն, մասին հետ կը միանայ, յորում կը միաբանին նաև միւս թարգմանութիւնք։

Նոյն գլխու 7–10 համարներն, յորում Եզր կը հարցնէ հրեշտակին հրէական ազգին ժամանակին բաժանման մասին, այսինքն թէ երբ պիտի ըլլայ վերջ առաջին դարուն, և կամ ո՞րն է սկիզբն երկրորդին. իսկ պատասխանի կը տրուի, թէ «Աբրահամէ ցԱբրահամ». և կը մեկնուի Եսաւայ ծննդեամբ և գարշապարաւ առաջին դարուն (այսինքն է ներկայ ժամանակիս) վերջը, և Յակոբայ ծննդեամբ և ձեռաց օրինակով, որ ունէր զգարշապարէ եղբօրն. երկրորդին (այն է հանդերձելոյն սկիզբը)։ Այս նշանաւոր հատուածս կը պակսի հայերէն խմբագրութեան մէջ. բայց որովհետև արաբացին ևս ունի զայն, հետևաբար հայերենի մէջ խանգարում մի եղած ըլլալու է։ Եւ իրօք 1–2 համարներն, որոց համար ըսուեցաւ թէ միւս թարգմանութեանց մէջ կը պակսին, այս տեղ, այսինքն է 7–10 համարներուն, գետեղուելու յարմար են։

Այ. 17 համարն։ «Et factum est cum audissem, surrexi super pedes meos, et audivi: ecce vox loquens, et sonus ejus, sicut sonus aquarum multarum», etc. *Հայն չարաչար կերպով խառնափնդորած է 13–16 համարներու հետ հետևեալ բացատրութիւնքը, (16–17) որք չեն գտնուիր միւս թարգմանութեանց մէջ. «Եւ յետ խօսելոյն իմոյ զայս՝ ահա փառքն տեառն յուսաւորեին զտեղին՝ յորում կայի, և անգէն ձայն եղև խօսելոյ և բարբառ իբրև զձայն աւետիսի յոյժ, կամ որպէս ջուրց հոսանաց բազմաց հեղեղատեալ զառիվայր ընթանայցէ»։ 34 համարն ամբողջապէս կը պակսի հայերենի մէջ. իսկ 38-40 համարներուն հետևեալ աղերս մի հազիւ կը նկատուի միւս թարգմանութեանց և հայուն մէջ։ Վերջինս բնագրէն աւելի՝ կարծէք թէ Բաբելի վիճակէ հայկ. թարգմանութեան կը հետևի, ըստ քմաց աւելցնելով և յապաւելով արարչութեան ընկարագիրը։ 47–52 համարներն, ուր Աս. Լատ. և Արբ. խօսելով հինգերորդ օրուան արարչութեան մասին, իրարու համաձայն՝ երկրաբանական և բնաբանական նշանաւոր կէտեր կը շօշափեն, երկրիս ջրային և ցամաքային մասանց իրարու հետ ունեցած, այսինքն է 7/1 համեմատութեան, — ջրոց ոգեւորեալ և անոգի լինելուն, — բևեռաց, որ կը հանդիսանայ իբրև ներկայացուցիչ ցամաքային կենդանեաց և կը բնակի հազար լերանց (montes mille) վերայ, և Լեվիաթանի՝ որ կը բնակի յեօթներորդ մասին, այն է՝ ջրոց մէջ, և այլն, իրաց*

նկատմամբ. Հայերէն խմբագրութեան մէջ ընդհակառակն բոլորովին կը պակասին։ 54–56 համարներուն միւս թարգմանութիւններն առ հասարակ երկուքս կը յիշատակեն զԱդամ անունը իբր գլուխ արարածոց. հայն միայն ունի «զտէրն՝ զվարդ»։ Գիտելով որ անունս Ադամ՝ ըստ եբրայեցւոյն՝ կը նշանակէ վարդ, կարելի է եբրայական բնագրէ մի յառաջ եկած համարել այսպիսի մի տարբերութիւն, քան թէ ըստ քմաց։ Բ. միւս թարգմանութիւնքն՝ Յորայ ծ գլխու 20 տան վերայ բարգաւաճեր են յիշեալ տեղիքը. իսկ հայն՝ Ծնընդոց Ե գլխուն աւանդուածին հետ սերտ աղերսներ ցոյց կու տայ, բայց այնպիսի նշանաւոր պարագաներով, որոնք առաջնոց մէջ բոլորովին կը պակսին. օրինակի աղագաւ, 54 տան մէջ, դրախտին համար կ'ըսուի, թէ «ի ևևան քաղաքի տնկեցեր, և ամենայն կերպարանօք զարդարեցեր». նախամարդը որդւոյ մի կը նմանցէ՝ խօսելով առ Աստուած. «և որպէս ոք որդւոյ իւրում՝ զամենայն ինչ առաջի արարեր նմա վայելել». — Եւայի համար կ'ըսուի. «և խօսակից յարգահատել ազգի մարդկան». — «զարդարեցեր զնա. կարօք ազատութեան, և յօժարութեան» բացատրութեամբ՝ մարդկային անձնիշխան կամքն և բնական յօժարութիւնները ցոյց կը տրուին. — Աստուծոյ պատուիրանը՝ պատուոյ և ընտրութեան գրքի մի կը նմանցուի, այսպէս. «Եւ իբրև զգիրս պատուոյ և ընտրութեան եառուր նմա զպատուիրանն, զոր ընկէց ի ձեռաց, և ել ի դրախտէն», — «օտարացոյց յանապականութենէն» բացատրութեամբ՝ մարդկային սկզբնական վիճակը ցոյց կու տայ». — և հուսկ մարդկային ազգի միակ ծագումը յԱդամայ՝ այսպէս. «Եւ ի ևևանէ աւևևնքեան մեք մարդիկ սերևնեցաք»։ Գիտելով որ այս կէտերս Գ Եզրի ուրիշ էջերում ևս յեղյեղուած են, չատ հաւանական է որ հին բնագրէն իրրև լրացուցիչ մասեր պահուած ըլլան։

Է գլխուս, 28–29 համարներուս, Աա. երկուքս ունի Մեսիան. Լատինն՝ առաջին անգամ կը գրէ Jesus, որ հաւասար է Մեսիայի, իսկ երկրորդ անգամ ունի Christus, որ յոյն բնագիրը կը յիշեցընէ։ Հայն ունի՝ «Օծեալն Աստուծոյ», համաձայն յունի. այս ընթերցուածս կը հաստատուի նաև Արբ. unctus բառովն։ 28 համարին մէջ Աա. ունի triginta annos, Լատ. quadringentis (A օր. trecentis). Արբ. mille annos. Հայն ունի անորոշաբար «յայնժամ»։ Այս ընթերցուածս աւելի հին և հարազատ կը տեսնուի, վասն զի քալ կը համաձայնի 26 տան «ահա եկեսցէ ժամանակ, յորում եղիցի նշանն» բացատրութեան։ Այս կը հաստատուի նաև լատին A օրինակովն, ուր զանց եղած է տարեթիւն։

35–36 երկու և կէս էլ ընդարձակ միջոցն, զոր Հօհրապեան անհամաձայնութեան պատճառաւ առանց մնհատման թողուցած է, հայն, — հակառակ բոլոր միւս թարգմանութեանց, — երկու երևոյթներ կը ներկայացնէ մեզ, և երկուքն իսկ ունին կարևորութիւն՝ հնախօսական տեսակետով. Ա. Մեռնելէն վերջ արդարներուն եօթն ճանապարհաւ ունեցած վայելից, և մեղաւորաց եօթն ճանապարհաւ ունեցնալիք տանջանաց մասին ըրած նկարագիրներն. որք ըստ հայուն այս թուահամարներուն զետեղուած են, ոչ միայն խառոր Համեմատութիւն ունին լատին և արաբական թարգմանութեանց նոյն գլխուն 81–87 և 91–99 համարներուն եղած նկարագրաց հետ. այսինքն է՝ արդարոց նկարագիրը կը կանխէ քան զմեղաւորացն, այլ և տարբեր դրից մէջ զետեղուած են, և այնպիսի հարց և պատասխաններու և առանձնախօսութեանց հետ միացած, որոնք միւս թարգմանութեանց մէջ կամ կը պակսին և կամ բոլորովին տարբեր կերպով կը գըտնուին: Բ. Հայերենի մէջ կը պակսին ինչ ինչ նշանաւոր պարագաներ, որք կը գտնուին միւս թարգմանութեանց մէջ աւելի կամ պակաս չափով: Առաջին տեսակետով Ա. Արբ. և Լատինն խօսելով դատաստանի օրուան եղանակաց և բնական երևութից մասին, կը գրեն միաբան 40–43. «Quo non erit nec luna, nec nox, nec dies, nec ventus, nec nubes, nec tonitru, nec fulgor, nec pluvia, ne: grando, nec estus, nec hiems», և այլն. Հայն ունի յատկութիւք. «Եւ եղիցի օրն դատաստանի այսպէս. ոչ արեգակն կացցէ շուրաւոր և ոչ լուսին, և ոչ աստեղք պայծառացեալք, և ոչ ամպք հովանաւորք, և ոչ արտաւէտ նշանաւոր ժամանակաց, և ոչ հողմ զովացիկ և ջուր՝ ի ծարաւ հանգստեան, և ոչ հողմ քաղցրախառն և ջուր՝ ի ծարաւ հանգստեան, և ոչ երեկոյ՝ ի հանգիստ վաստակոց, և ոչ գիշեր՝ ի դադարել աշխատութենանց, և ոչ ակղութիւն գործոց՝ ի ցօհարութիւն, և ոչ հասարակ օր՝ ի ձաշակութիւն կերակրոց, ոչ ձմեռն՝ ի գործ երկրի պատրաստութեան, ոչ գարուն՝ ի ծնունդ երկրի պատրաստութեան, ոչ յատուն տօթ, և ոչ աշուն՝ ի խնամ ածել պտղոյ, ոչ կարկուտ՝ ի բանութենէն օդոց, և ոչ անձրև՝ յաձռուն ծառոց, ոչ ցօղ՝ ի վխիրատութիւն տնկոց, և ոչ առուտ՝ որ նշանակէ զոյս առնել չեռանի, և ո՛չ զամբար գիշերոյ խառնարի յայտնիչ. բայց միայն պատկ փառաց արդարոցն ոչրատխուրթիւն»: Իսկ երկրորդին՝ օրինակ ըլլայ յաջորդ համարի այս բացատրութիւնս. «Longitudo (Լ. Spatium) autem ei erit sicut hebdomada annorum Hoc. est judicium meum et constitutio ejus» (Արբ. Et iudicium durabit septuagint a an-

nos), *բոլորովին կը պակսի հայումս. և* 100 *համարում* (Ա֊. 61 *համար*) *մեռնողաց հոգւոյն համար եգրի ըրած այս հարցմանս՝ թէ* « Dabitur tempus animabus, postquam separatae fuerint, ut videant de quo mihi dixiti? » *որուած նշանաւոր պատասխանը.* « Septem sunt dies libertatis eorum, in quibus septem diebus vident verba illa, quae dicta antea fuerunt, et postea colligentur in promptuaria sua ». *հայն կը գրէ ընդհակառակն.* « *Տացի ժամս-ւնակ՝ ոչ անդորրութեան, այլ տանջանաց, զի ի տեղիս խոշտանգանաց տեղեալ են մեղաւորաց ոգիք, և պահին ի տանջանս անհաւոր հրեշտակաց մինչև յօրն յանդիմանութեան և դատաստանաց և հատուցման բարւոյ և չարի* », ուր բառ մ'անգամ նոյն չէ: Արդ, հայերենին միւս թարգմանութիւններէն ցոյց տուած բոլոր այս զանազանութիւնքս՝ կամ ձեռագրի խանգարման արդիւնք կրնան ըլլալ, կամ տարբեր բնագրի մի, և կամ ի քմահաճոյից խմբագրողին: Պատճառներէս առաջինն՝ դժուար է որ իրօք եղած լինի. վասն զի վերոնշանակեալ բոլոր հատուածին մէջ՝ նիւթերն աւելի զիրար կը բռնեն, քան թէ միւս թարգմանութեանց մէջ: Ի գլխում Ա֊. թուահամարներն ևս՝ լատինէն և արաբացւոյն շատ տարբեր կերպով դասաւորուած են, և հայուն պէս 69 համարներով կ'աւարտի այդ գլուխն. մինչդեռ լատինն՝ 139 տանց բաժնուած է: Հետևաբար, կը մնան իրրև աւելի հաւանական վերջին երկուքն: Սակայն դիտելով՝ որ Ս. Գրոց շարքին մէջ արդէն ի վաղուց անցուած և սուրբ հարցմէ իսկ իրրև Եգրի մարգարէի այնքան յարգուած գրուածի մի հետ՝ դժուար է որ հայ թարգմանիչն համարձակած ըլլար այդպիսի կերպով վարուիլ, այսինքն է, ըստ քմաց յաւելուլ և յապաւել, ուրեմն կը մնայ ընդունել իրրև ճշմարտանման երկրորդ ենթադրութիւնն, որ կրկին կը հաստատուի նաև հետևեալ պարագայից մէջ. այսինքն է, ինչպէս տեսանք և պիտոր տեսնենք, հայերենին կարծեցեալ յաւելուածներն կամ խոտորմունքն յատրպականէն՝ կը գտնենք նաև արաբերենին կամ լատիներենի մէջ. օրինակի աղագաւ, 39 տան. « Եւ եղիա՝ վասն գալոյ անձրևին, և եղիաէ՝ վասն կենաց մեռելոյն » յաւելուածն՝ կը գտնենք տարբեր պարագայով մի՝ նաև արաբերենին մէջ, այսպէս. « Eliam de siccitate et filio, *quem Eliseus cum eum mortuis suscitaret* ».

Ը գլխու 26 համարում, « *Լուր ձայնի ծառայի քո — առանց մեղաց* » 7 տող հատուածն, զոր կ'ընծայէ մեզ հայկ. խմբագրութիւնն եգրի բերան դրուած ազօթքին մէջ, կը պակասի ասորւոյն և միւս

թարգմանութեանց մէջ. Իսկ 46–49 և 56–58 համարներն, յորս հրեշտակն դիտողութիւններ կ՚ընէ առ Եզր, ներկային և հանդերձեալ աշխարհի, արդարոց և մեղաւորաց մասին՝ ըստ ասորւոյն և լատինի, հայերէն խմբագրութեան մէջ չեն գտնուիր ընդհակառակն, կամ բոլորովին յայլ ինչ փոխուած են: Արդ, դիտելով որ արաբացին ևս այստեղ բոլորովին կը տարբերի ասորի և լատին թարգմանութիւններէն նկատմամբ առաջին տեղւոյն, զի փոխ. «Quae sunt praesentia praesentibus et quae futura futuris», etc, ունի. «Seminata et plantata, quae enascuntur, aequant eos, qui officio suo satisfaciunt, et quae emoriuntur eos, qui inertes sunt», etc, իսկ վերջինը, այն է՝ 56–59 համարները բնաւ չունի. ուստի կրնանք ըսել, թէ հայոյն և արաբացւոյն այս պակասն՝ դիպուածական չէ, այլ հասարակաց բնագրի մի արդիւնք: Բայց ասկէ աւելի շահագրգիռ է հետեւեալն, այսինքն է 61 համարի՝ 41 տող հատուածն, ուր, ըստ հայոյն, նշանաւոր խորհրդածութիւնք կը լինին Եզրի և Աստուծոյ մէջ՝ մարդկային ազգի անձնիշխան ազատութեան և գերագոյն վախճանին, բարւոյ և չարի, Աստուծոյ մարդասիրական այցելութեանց և մարդկան խստասրտութեան մասին: Ասորին և լատինն՝ այս համարս հետևեալ 2 տողի մէջ կը պարունակեն. «Quapropter iudicium meum modo appropinquat; quod non omnibus demonstravi, nisi tibi et tibi similibus paucis». Իսկ յիշեալ նիւթերուն վերայ ընդ հակառակն 56–59 համարներուն մէջ կը խօսին, և այն ինն տողի վերածած: Բնագրի այս մեծ տարբերութիւնս չենք կրնար լուծել, վասն զի Գիլդեմայստերի հրատարակութեան մէջ 51–63 համարներն ինկած են, ինչպէս ցոյց կու տան... կէտերս: Ապա, դիտելով որ ասոր նախընթաց համարներուն մէջ բերուած չէ հայերենի յիշեալ հատուածն, ուրմէ հաւանական է որ 61 համարում զետեղուած ըլլար նման հայուն. հետևաբար, հայկական խմբագրութեան յիշեալ հատուածն դժուար է որ ըստ կամս յերիւրուած ըլլայ խմբագրէն, այլ մեզ անծանօթ բնագրի մի մնացորդ է հաւանօրէն:

Թ գլխու 5–7 և 10–12 համարներն, զորս ունին ասորին և լատին իրարմէ փոքր ինչ տարբերութեամբ, դարձեալ կը պակասին հայոյն և արաբականին մէջ: Այսպէս նաև 17–23 համարներն, ուր ըստ Ա. Լատ. և Արբ. երկրի և երկրագործի, սերման և հնձոց օրինակօք կը բացատրուին ընտրելոց և անարգելոց գործերն և հատուցմունքն, հայերենէն բոլորովին կը տարբերին, թէպէտ և Եզրի կոչ-

մէն 15 համարեալ եղած հարցուածն երկուստեք նոյն է։ Հայերենին մէջ իմաստ մի միայն պահուած է նկատմամբ նիւթոյն, իսկ մէջ բերուած օրինակներն բոլորովին ուրիշ են, այսպէս նաև Աստուծոյ խօսելէն վերջ՝ անոր փառաց երևման չորս տող հատուածն՝ ի սպառ կը պակսի առաջնոց մէջ։

26 համարին մէջ յիշուած դաշտն, ուր Եզր առանձնացած կը պահէ և տեսիլներ կը տեսնէ, ըստ ասորւոյն կը կոչուի Arphad, հայն ընդհակառակն ունի՝ Արդաբ. արաբերէն օրինակը կը գրեն Արδατ և Αραατ, իսկ Սրբ. փոխանակ անուան՝ ունի «In loco plantis virente». S *որ.* Ardat, Adar, A. Ardad, C. Ardas, M. *Ardaf:* Վերջին ձևն համաձայն է հայոյն և անոր ընթերցուածը կը հաստատէ։ 29 համարում ասորին ունի in deserto Sinaï. հայն ընդհակառակն ունի պարզապէս «յերկիրն անապատ». «Լատինն՝ in deserto quod non calcatur», և արաբերէնն՝ «per terram nondum calcatam» բացատրութեամբք՝ հայոյն ընթերցուածը կը հաստատեն։

Ժ գլխու 7 համարում մեծ թարգմանութիւնք առ հասարակ Սիոն միայն կը յիշեն յանուանէ, հայն միայն պահած ունի նաև Երուսաղէմ, և այս ըստ հին բնագրին. վասն զի 20 համարի մէջ Ա. Լատ. և Սրբ. ևս համաձայն հայոյն՝ Սիոնէն վերջ կը յիշեն և Երուսաղէմ։ 22 համարում հայն ունի. «Եւ քահանայք մեր լացեալ են». ինչպես ասորին կը գրէ. «Sacerdotes nostros *succensos in igno*». Լատինին մէջ «in igno» բառերը զանց եղած են, բայց հանդերձ այսու succensos անցեալ դերբայով պէտք է ուղղել հայերենի «լացեալը» լուացեալ (ի հուր)։ 45–46 համարներուն մէջ տաճարի շինութեան և զոհից մատուցման սկզբնաւորութիւնն կը դրուի յերեքհարիւր ամի ստեղծագործութեան մարդոյ, ըստ Ա. ԵԹ. և Սրաբ. թարգմանութեանց. «Quoniam fuit in sæculo tria *millia annorum*», հայն ունի. «Զի աւս բազումն ունէր յայսմ աշխարհի», և փոխանակ «Post tria millia annorum ædificavit Salomon civitatem», ունի. «Յետ այնորիկ շինեաց Սողոմոն զքաղաքն և զտաճարն». Լատին օրինակներէն ոմանք կը գրեն annos triginta և ոմանք այլ anni sæculo tres. Հայերենի մէջ տարեթուոց զանցառութիւնն դիպուածական չէ նաև հաս. այլ կամ այն է՝ թէ նորա բնագրի մէջ իսկ կը պակասէր ի սկզբանէ, և կամ եղծուած էր ի ժամ թարգմանութեան. լատինի տարաձայնութիւնն կարելի է նպաստաւոր լինել առաջին ենթադրութեան։ 51 համարում Ա. և Հ. ու-

նին Ubi domus non est ædificata, հայն ընդհակառակն կը գրէ. «Ուր տունն շիներ» . այս վրիպակ մ'է, որ 53 համարում՝ համաձայն առաքելոյն ուղղուած է այսպէս. «Ուր ոչ էր շինուած հիման» : Տեղացս առաջինն Արբ. մէջ բոլորովին կը պակսի. իսկ վերջինն՝ բոլորովին տարբեր : 60 համարում, ուր Ա. ունի, Et dormivi illic noctem aliam sicut præcepit mihi, հայն գրէ. «Եւ մնայ ի տուն զերկուս գիշերս, որպէս հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն» : Հայերէնն՝ զերկուս գիշերս ընթերցուածն կը հաստատուի լատինով իսկ, որ կը գրուի, Et dormivi illam noctem *et aliam* :

ԺԸ. գլխու 7–8 համարում, ուր Ա. կը գրէ, *Ite dominamini universæ terræ, nunc autem quiescete*, et nolite vigilare omnes simul. հայն՝ եննթագծուած բառերը չունի, այլ 8 տան. «Միանգամայն զամենեսեան կամիցիք արթուն կալ. այլ ի քուն մոցէք իւրաքանչիւր ի տեղոջ իւրում, և ի ժամանակի իւրում զարթիցէ» : Արբ. մանաւանդապէս և Լատ. հայոյն ընթերցուածը կը հաստատեն՝ այսպէս. Nolite omnes simul vigilare, sed quovis tempore suo quæque vestrum loco dormiat et vigiletis : 20–21 համարում Ա. համառօտաբար կը գրէ. Et ex eis (alæ) surgebant, sed tenebant dominatum. հայն ունի ընդարձակօրէն. «Եւ տեսի զամենայն թևան, և զայն ի ժամու իւրում կանգնեալ յաջմէ կողմանէ՝ ունել զիշխանութիւնն. ունէր ի նոցանէն և վաղվաղակի կորնչէր, և ոմն ի նոցանէ կանգնէր և չկարէր ունել զիշխանութիւնն» : Ատրին պակասաւոր է, և այս յայտնի կը տեսնուի անտի իսկ, զի լատին և Արբ. խմբագրութիւնք իսկ հայերենին կը համաձայնին :

ԺԹ. գլխու 16–19 համարներն, ուր Ա. Լատ. և Արբ. իրարու համաձայն՝ ընդարձակ խորհրդածութիւններ կը պարունակեն ի կատարած ժամանակաց թէ ծնացողաց և թէ մեռնողաց կրելիք ցաւոց վրայ. հայն՝ միայն առաջնոց մասին և համառօտիւ կ'անցնի, վերջնոց նկատմամբ բնաւ խօսք չընէր : Այս տեղիս անտարակոյս խանգարուած է, ինչպէս կ'երևի 21 համարէն, ուր որոշակի ծնացելոց իսկ յիշատակութիւն կայ՝ այսպէս. «Այլ վասն մնացելոցն և վասն որոց խօսեցաւ նա ի վախճան ժամանակաց՝ այս բանք են» : 23 համարին մէջ խօսուելով ծնացողաց հաւատոց և բարի գործոց մասին, Ա. կը գրէ. Hic custodiet eos qui in periculo jacent, eos qui habent opera et fidem *apud Altissimum et Fortem*. Լատինն՝ ունի ad fortissimum. Արբ. կը գրէ. Quibus fides *erga Deum est* et facinora apud Altissimum. հայն միայն՝ եննթագծուածներէն ոչ

մին ունի և ոչ միւսը, այլ «Եւ որ պահեցին ի հաւքերոջեաւն ըղհաւատոն և զձկնարտոջիւն և զողորմոջիւն»։ Այս մի ուրիշ բնագրի արդիւնք է, որ միւսներուն ծանօթ չէր։ 32–38 համարներուն, ուր կը խօսուի ծովէն ելնող մարդադէմ կենդանւոյն, այն է՝ Մեսիայի գալստեան և Գողգոթայ լերան վերայ մեղաց դէմ ըրած յաղթանակին վերայ՝ Աբր. միայն կը համաձայնի Աստւոյն. իսկ հայն և լատինը՝ Գողգոթայի բնաւ յիշատակութիւն չեն ըներ, այլ միայն Սիոն լեառն։ Ասոր հաւանական է՝ որ Գողգոթայն եկամուտ յաւելուած մ'ըլլայ, որ հին բնագրին մէջ չկայր, և աստւոյն քրիստոնեայ խմբագրողի ձեռքով ներմուծուած է՝ առընթեր Սիոնի. այս բանս Ա. բաբ. Ե. խմբագրութենէն իսկ յայտնի կը տեսնուի, որ կը գրէ. Tum surget homo super Golgotham, quæ est Sionis (B. in Sione). 40–47 համարներն. Hæc sunt novem tribus et dimidia — Collectam in pace, ուր ըստ Ա֊ա. կը խօսուի մարդադէմ կենդանւոյն քով հաւաքուող բազմութեան վերայ, Յեսուայ՝ ինն և կէս ցեղից և Ասորեստանեայց Սաղմանասար = Salbanasar թագաւորի հինաւուրց արարուածներովը. այսինքն է՝ զՀրեայս Նիբրատ գետէն անդին գերի վարելը, անոր նեղուցին մէջէն կրկին երթևեկած ժամանակ՝ Բարձրելոյն գործած մէկ հրաշքն, որով գետս կ'ամնակաւի մինչև որ Իսրայելացիք կ'անցնին, անոնց մէկ ու կէս տարուոյ չափ Արզափ = Arzaph երկրին մէջ դեգերիլն, որ ըստ Ա֊ա. բնագրին finis mundi կը կոչուի, այս ամենայն կը պակսի հայերենի մէջ, ասոնք ակնարկութիւն մի միայն պահուած է հոս։ Բայց դիտելով մէկ կողմէն որ Լատինն և Արաբականն ևս ունին զայն, իսկ միւս կողմէն այլ հայոյն այս նշանաւոր տարբերութիւնս. «Չի ժողովէր այլ բազմութիւն խաղաղութեան, ևորքս եւն՝ որ յանւարգ հեթանոսաց ժողովեալ վարեցան, և ի զաւակէն Աբրահամու խառնեցան ընդ նոսա», կը հետևի թէ, կամ յիշեալ տեղին աստի թարգմանիչն յետոյ աւելցուցեր է, և կամ հայն դիտմամբ կրճատած է զայն։ Աբր. թարգմանութիւնն ենթադրութեանցս առաջինը կը թուի հաստատել, զի ինն և կէս ցեղից գերեվարութեան տեղին՝ համեմատ Աստւոյն՝ Arzaph գրելէն դուրս, կը յիշէ զՍաղմանասար՝ իբր թագաւոր Ասորւոց = rex Syrorum Salmanasar. հաւանօրէն այսպիսի մի բացատրութիւն աստերեններ յառաջ եկած ըլլալու է, և ոչ թէ յոյն կամ լատին բնագրէն, զի վերջինս ունի Assyrorum.

ԺԴ *գլխու 1 համարում, ուր Ա֊ա. ունի* Et factum est post hæc, *հայն կը գրէ. «Եւ եղև յետ երկրորդ աւուրն». հայոյն ընդ-*

թերցուածին հշդութիւնը կը հաստատեն լատին և արաբ. թարգմանութիւնքն, Et factum est tertio die, *և կամ ըստ վերջնոյն*, Et post tertium diem *բացատրութեամբ*:

10 *Համարում՝ այս յաւիտենից կամ ժամանակի* 12 *մասանց բաժանման մասին եղած այս նշանաւոր հատուածս*, XII enim partibus divisum est sæculum, et transierunt ejus X jam et dimidium Xmæ partis, superant autem ejus duæ post medium decimæ partis, *զոր ունին լատին և արբ. թարգմանութիւնքն, բուլորովին կը պակսի հայոյն և ասորւոյն մէջ: Այս յաւելուածս յետոյ ուրեմն ներմուծուած է այս տեղ: Բարոչքայ տեսակեւկն փոխ առնելով հաւանօրէն:*

24 *Համարին մէջ, Սաղաթիէլ եղբի* 84 *գրքերը գրող հինգ անձինքն են, ըստ ասորւոյն*, Saria, Daria, Salemia, Helcana, Sciel. *իսկ ըստ լատին թարգմանութեան՝* Sarea, Dabria, Selemia, Ethanus, Asihel. *Արաբական բ. խմբագրութիւնն ոչ մի անուն չի յիշեր, այլ արք հինգ մոյն ունի: Հայն՝ կը գրէ. «Եւ սոքա ընդ քեզ զԳաբիան և զԱբաբիան և զՀերմիան և զեղկանա և զեթեն»: Վերջին երկու անուանքն ճիշդ լատինին համաձայն են. Գաբիան նոյն է* Darianի, *ուր վրիպակաւ գրչագրաց Դ տառն Գ ի փոխուած է. իսկ Հերմիան՝ դժուար է որ* Salernianի *սխալագրութիւն մ'ըլլայ: Յամենայն դէպս՝ հայն լատինի կամ նորա բնագրի հայցական կազմոց և պահելով ի վերջ անուանց, յայտնապէս ցոյց կու տայ թէ այդ անուանքն իւր կողմէն հնարած չէ, այլ հին բնագրէ մի ծառայաբար թարգմանած: 44–45 համարներուն, յիսուն օրուան մէջ յիշեալ անձանց ձեռքով գրուած գրոց թիւն՝ լատիներէն օրինակաց մէջ անհաւատալի կերպով աղաւաղուած է, այսինքն է՝ մինչև* 90004ի կը հասնի. *հայն ունի* 94, *համաձայն ասորւոյն, եթովպացւոյն և արաբականին:*

47րդ համարում, եզրի մահուան թուականը, զոր կը նշանակէ ասորին
In anno septimo in hebdomada sexta post quinque mille annos creationis, et menses tres, et dies duodecim, *հայն ունի ընդհակառակն. «Յամին չորրորդի շաբաթիւն ( ) ամաց, յետ ամաց հինգ հազար արարածոց աշխարհի, և երկոց ամաց աւուրց»: Լատին խմբագրութիւնը՝ դիտմամբ զանց ըրած է յիշեալ թուականը, որովհետև ժե և ժշ գլուխներով մի ուրիշ յաւելուած ևս ներմուծած է՝ իբրև եզրի շարունակութիւն: Սակայն արաբական խմբագրութիւնն՝ ասորւոյն ընթերցուածն աւելի կը հաստատէ. և միանգամայն ցոյց կու տայ մեզ, թէ հայն խանգարուած է. վասն զի*

ըստ ամենայնի առաջնոյն կը համաձայնի, ի բաց առեալ dies duos et viginti փոքրիկ տարբերութիւնը:

Արդ, ամփոփելով մեր ըրած ընդարձակ համեմատութեան սահմանքը, կարեմք եզրակացնել, ա. թէ մեզ հասած Եզրայ անկանոն գրոց յիշեալ թարգմանութիւններէն ոչ մին կարող չէ հին բնագրին կատարեալ ներկայացուցիչ լինել. որովհետեւ ամէնքն ալ իրարմէ աւելի կամ պակաս յաւելուածներ և յապաւումներ կրած են քրիստոնէից ձեռքով: Բ. Հայկական խմբագրութիւնն՝ բաց ի յունարէնէն՝ մի ուրիշ բնագրի հետ ալ ծանօթ է, որ այժմուս ասորիէն և արաբականէն աւելի կատարեալ էր, և ծառայած է հայերէնի վերանորոգութեանը: Գ. թէ հայն ստուգիւ վերանորոգուած է, յայտնապէս կը տեսնուի ոչ միայն այն աչքի զարնող յաւելուածի ձեւով ընդլայնումներէն, որոնք միւս թարգմանութեանց մէջ չեն գտնուիր. ինչպէս նաեւ այն յապաւումներէն և թուահամարներու յետ և առաջ փոխադրութիւններէն, զորս ցոյց տուինք, այլ նոյն իսկ երբեմն ասորւոյն և երբեմն այլ արաբականին և լատին խմբագրութեանց հետ ունեցած աղերսներէն, երբ ասոնք իրարու անհամաձայն կ'ընթանան: Դ. ասորի, լատին և արաբացի թարգմանութիւններն ընդհանրապէս, — ի բաց առեալ ինչ ինչ մասնական տարբերութիւնքը, որոնք թարգմանչաց կամ գրչագրաց ձեռքով իսկ կարող են ներս սպրդած կամ յապաւուած լինել, — իրարու համաձայն կ'ընթանան երբեմն կատարելապէս և երբեմն աննշան զանազանութեամբ, այնպէս որ համեմատողն չի տարակուսիր բնաւ եզրակացնելու, թէ լատինն և արաբականն՝ ասորւոյն վրայէն թարգմանուած ըլլան, կամ շատ ալ երեքն այլ մի հասարակաց բնագրէ: Այս ճշմարտութիւնս ստուգիւ անով աւելի կը հաստատուի, զի ինչ որ ասորին ընդարձակաբար ունի՝ նոյնն յաճախ նոյնութեամբ և երբեմն համառօտիւ կը գտնուի միւս երկու թարգմանութեանց մերթ այս և մերթ այն օրինակի մէջ. իսկ ինչ որ ասորւոյն մէջ կը պակսի, նոյնը ընդհանրապէս միւսներն ալ չունին կամ քիչ անգամ ունին. յայտ է թէ խօսքերնիս ասորւոյն այն տեղեաց վրայ է, որոնք անխախտ մնացած կը համարուին:

Թարգմանութեանցս և հայկական խմբագրութեան իրարու հետ ունեցած աղերսն մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ ամենամեծ զանազանութիւնքն այսպէս ակներեւ ընելէն վերջ, դժուար է համաձայնիլ Հ. Կերիանեայ վերը յայտնած կարծիքին. այսինքն թէ, հայերէնն՝ գէթ իւր այժմեան ձեւին մէջ, ասորերէնէ թարգմանուած ըլ-

լայ, այնու մանաւանդ որ երկուստեք չենք տեսներ մենք, ընդհանրապէս, հաւատարիմ թարգմանութեան մի և բնագրի մէջ պահանջուած էական հանգամանքները: Հետևաբար, կամ պէտք է նկատել զայն իբրև աստուծոյ հետևողութեամբ եղած բոլորովին մի ինքնուրոյն և ազատ խմբագրութիւն, և կամ ընդունել ուրիշ մի հայկական հին թարգմանութեան գոյութիւնը, որ թարգմանուած ըլլար երբեմն անյայտացած յոյն կամ անկէ աւելի հին՝ եբրայական[1] բնագրէ մի ուղղակի, և թէ այդ թարգմանութիւնն յետ ժամանակաց նորոյս հետ միացած է անծանօթ խմբագրողի ձեռքով. որ ոչ միայն վերանորոգել ուզած է զայն՝ աստղի կամ արաբական բնագրի մի համաձայն, այլ անոր Ս. Գրոց տարաձայն տեղերէն զոմանս և տարեթիւերն իսկ կրճատած է, որով այժմու խմբագրութիւնն՝ ոչ հին բնագիրը կը ներկայացնէ մեզ կատարելապէս և ոչ իսկ գաւորականը, այլ երկուքէն ձուլուած մի խմբագրութիւն:

Վերջին ենթադրութեանս իբրև հիմնաւոր կռուաններ են՝ նախ այլ և այլ հատուածոց այն յետ և առաջ փոխադրութիւնները, որոնք, — ինչպէս տեսանք, — կամ յաճախ կը պակասին աստղի, լատին և արաբական թարգմանութեանց մէջ, և կամ անոնց հետ խստոր համեմատութիւններ ունին: Բ. Այն աչքի զարնող խստութիւնը, որով այլ և այլ տեղեր՝ բաղդատմամբ միւս թարգմանութեանց՝ անհասկանալի մնացեր են, մինչդեռ այլուր, օրինակի աղագաւ, այրի կնոջ երեսման, Եզրի աղօթքին, ծովէն ելնող արծուոյն և մարդակերպ գազանին վերաբերեալ դրուագներն՝ աստղոյն հետ աւելի քիչ տարբերութեամբ կը զուգընթանան: Գ. Խմբագրութեանս իբրև

1. Պիկուս Միրանդոլացի՝ (Apolog. p. 82. Opp.) հեղինակ ժե դարու՝ նման եբրայական բնագիր մի կը յիշէ, զոր ինքն նոյն կը համարի Հրէից Մ֊ա֊կ֊ա֊լ֊ (Cabbalae) կոչուած գրոց հետ, որոյ մասին կ'ըսէ, թէ դեռ իւր ժամանակն իսկ խիստ յարգի էր առ Հրեայս, և 40 տարիկան մարդոց միայն թոյլատրուած էր կարդալ զայն: Ինքն իսկ առած և հետզհետէ կարդացած էր անոր հին բնագիրը՝ Միրանդայ իշխանի քով. և թէ Պապն Քսիստոս Դ անգամ հաւնած ըլլար այն գրուածին, մինչև փափաք յայտնել, որ թարգմանուի: Իսկ Պետրոս Գալատացի, Arcanis Catholicæ veritatis կոչուած երկասիրութեան մէջ, կ'ըսէ, թէ իւր օրերն ընդհանուր լուր տարածուած էր, թէ ի Կ. Պոլիս գտնուած է Եզրայ Դ գրոց եբրայական բնագիրն: Վերջին վկայութիւնս հաստատելու կամ մերժելու փոյթ մի չունիմ. սակայն Պիկուս Միրանդացւոյ յիշածն՝ էր, ըստ Փաբրիկիոսի, Եւրի յիշեալ գրութեան վերջը յիշատակուած Ե֊զ֊ռ֊ա֊ս֊ն գրոց համառօտութիւնն, և գրուած յատրի բարբառ, զոր Պիկուսի մահուանէն վերջ ժառանգից Յուլ. կեսար Սկալիգեր (տես անոր Exercit. CCCVII Contra Cardanum, երկասիրութիւնը):

յատկապէս յաւելուած կարծուած տեղիքն, յորս սակայն կան այնպիսի բառեր և բացատրութիւններ, որոնք որոշ չափով մի կը գըտնուին մերթ արաբերէն և մերթ լատին թարգմանութեան օրինակաց մէջ իսկ: Այս վերջին երևոյթս՝ մասնաւոր ուշադրութեան արժանի կէտ մ'է:

Հ. Կերիանի ըստ բաւականին ի նկատի առած չլինելով յիշեալ եղելութիւնքը, այն կարծիքը յայտնեց, թէ հայկական թարգմանութիւնն՝ իբր այժմեան վիճակին մէջ՝ չկարէ այնքան նպաստաւոր լինել նախկին բնագրի քննադատութեան համար. ամենայնիսկ նորա խօսքերն. Questa versione per la sua condizione, che già ho accennata, non potrà dar molto per la critica del nostro libro. Սակայն, ըստ իս, այնքան աւելի նշանակութիւն պէտք է տալ հայոյն, որքան սա աւելի տարբերութիւններ կ'ընծայէ մեզ միւս թարգմանութիւններէն. և մանաւանդ երբ այդ տարբերութիւններն ամենք համաձայն են հնագոյն հարց քով պահուած եզրի անկանոն գրքէն եղած կիրառութիւններուն: Եւ սուգիս, Կղեմէս Ալեքսանդրացի[1] Դ եզրի ե գլխու 35 համարէն հետևեալ տեղին մէջ կը բերէ. Διὰ τί γὰρ οὐκ ἐγένετο ἡ μήτρα τῆς μητρός μου τάφος, որ միւս թարգմանութիւններէն[2] աւելի հայերէնի այս նախադասութեան կը համաձայնի. «Ապա ընդէ՞ր ոչ եղեւ ինձ գերեզման արգանդ մօր իմոյ»: Արդ, յունարէն չաղկապն γὰρ = ապա՝ հայերէնի մէջ միայն ճշդութեամբ պահուած է. ուստի եթէ Կղեմեսի գործածած բնագիրն յունարէն եղած համարինք և եթէ եբրայական, հայն անոր հաւատարիմ թարգման հանդիսացած է այս տեղ: Լատինի fiebat անհամաձայն է յուն. ἐγένετο ին, ինչպէս նաև ասուրայն et և լատինի aut չաղկապներն չեն նոյն ընդ γὰρ մասնկան: Յաջորդ տողին մէջ ընդհակառակն հայերէն թարգմանութեան «զկռուանն Յակոբայ և մահիճ Իսրայելի» բացատրութիւնն չի համաձայներ Կղեմեսի μόχθον τοῦ Ἰάκωβ, καὶ τὸν κόπον τοῦ γένους Ἰσραὴλ = Ա. Լատ. laborem Iacob et defatigationem generis Israël.

Ս. Ամբրոսիոս ամենէն աւելի կիրառութիւններ ըրած է եզրի անկանոն գրքէն դրուատեօք՝ իբր այլ և այլ երկասիրութեանց մէջ.

1. Տես Stromatum, lib. IV, C. XVI.

2. Ասորին կը գրէ «Et quare non facta est matrix matris meæ mihi sepulcrum». Նոյնը լատինն ունի. «Aut quare non fiebat matrix», etc. Արբ. «Et cur uterus matris meæ mihi non factus est sepulcrum».

De bono mortis *գրուածին մէջ* (*գլ*. 10. *թ*. 45 *և գլ*. ԺԱ *թ*. 51) *եզրի է գլխէն բերուած երկու տեղիքն՝ չարաբանութեամբ մեծապէս կը տարբերին ոչ միայն յաստուոյն, այլ նաև լատին հին թարգմանութենէն: Այս յայտնի նշան է, թէ ատոր Հայրս յիշեալ երկու թարգմանութիւններէն տարբեր մի ուրիշ բնագիր ունեցած է ի ձեռին, այն է՝ յունարէնը կամ եբրայականը, և թէ Դ դարուն վերջերը լատին խմբագրութիւնն դեռ ծանօթ չէր արևմտեայց: Ս. Հերոնիմոսի ծանօթ էր գրուածս, բայց Հաւանօրէն եբրայական լեզուով, վասն զի իբրև հրէական գործ կը նկատէ զայն և ատոնիկ լեզու մի կը բանեցնէ անոր նկատմամբ: Հետևաբար, ատորի և լատին խմբագրութիւնները եթէ յունարենէ իսկ թարգմանուած համարինք, սակայն և այնպէս լոկ թարգմանութիւններ չեն, այլ կրած են իրարմէ աւելի կամ պակաս յաւելուածներ և յապաւումներ, այն ժամանակի ոգւոյն համեմատ: Լատին խմբագրութեան Ա–Ր, և ԺԵ–ԺԶ գլուխները, որոնք միւս թարգմանութեանց մէջ բոլորովին կը պակսին, — անշուշտ նոյնպէս հին բնագրին մէջ, — են ակնյայտնի ապացոյց մեր ըսածին, վասն զի գէթ նշանակուած գլուխներէն վերջինքս՝ Ե գարէն վերջ ներմուծուած կ'երևին, այնու զի Աբրաքսաց և անոնց ծովային արշաւանաց վերայ բացայայտ ակնարկութիւններ կը պարունակեն, համաձայն Մեթոդիոսի տեսլեան մէջ աւանդուածներուն, իսկ առաջին երկու գլուխներն այլ Բարուքայ Յայտնութեան* (Apocalypsis Baruch) *հետ սերտ աղերսներ ունին:*

Յովհ. Գրիգորիոս [1] *խօսելով Եզրի անվաւեր գրոց մասին, դիտել կու տայ, որ թէպետև լատին թարգմանութիւնն հին է և հեղինակաւոր, բայց և եկամուտ յաւելուածներով նախկին բնագրէն չեղուած: Իսկ արաբերէն թարգմանութեան համար – ըստ Բոդլէեան օրինակին — զոր ինքն տեսած էր և բաղդատած լատիներենի հետ, կ'ըսէ, թէ կը պարունակէ նա Եզրի երկու գրքերը, որոց առաջինն՝ գերծ է բոլորովին այն կասկածաւոր տեղերէն, որոնք կը կը գտնուին լատին և նոյն իսկ ասորական խմբագրութեանց մէջ. օրինակի աղագաւ, այն տեղ չկայ բնաւ յիշատակութիւն կենդանեացն Ենովքայ (այսինքն է՝ Բեհմովթայ և ԵՒխաթեանի) որոնք կը յիշուին Գ Եզրի՝ Զ գլխու 49 համարին մէջ, և ոչ այլ ԺԴ գլխու 11 տան մէջ՝ ժամանակի երկոտասան մասանց բաժանուելուն վերաբերեալ աչքի զարնող հատուածն: Ապա կը յաւելու, թէ այս պատճառաւ*

1. Տես Praefatio ad observationes sacras *խորագրուած երկը:*

իսկ կը հաւատամ, որ այս ըլլայ մեզի հասած թարգմանութեանց ամենէն հարազատն։

Արդ, մենք ևս նախընթացաբար ըրած ընդարձակ համեմատութիւններով ցոյց տուինք արդէն, թէ այս և ուրիշ կէտերով հայերէնն ևս արտաքսեան թարգմանութեան Բոզլէեան օրինակին համաձայն կ'ընթանայ յաճախ. ուրեմն կը մնայ եզրակացնել, որ եթէ այսպիսի յապաւումներ յետոյ կատարուած չեն, հայերէնն ևս մեծ նշանակութիւն ունի Եզրի Դ գրոց անյայտացած բնագրի քննադատութեան և վերակազմութեան նկատմամբ, այնու մանաւանդ զի փոխանակ միոյն՝ ունինք այժմ երկու հինաւուրց և միաբան վկաներ։ Ուստի այս ամենակարևոր կէտս ապացուցանելու համար է, որ մենք ընդարձակաբար պարապեցանք այլևայլ թարգմանութեանց համեմատութիւններով։ Քննենք այսուհետև գրուածիս բնագիրն՝ իւր անդրադարձ աղերսներովը, այսինքն է, պարունակութեամբ, արժէքով, և ծագման վերաբերեալ կարևոր խնդիրներովը։

Գրուածիս ծանրակշիռ հեղինակութիւնն ոչ միայն առ հրէայս, այլ նոյն իսկ առ քրիստոնեայս անվիճելի է. վասն զի նոր կտակարանի այն սրբազան հեղինակներէն սկսեալ, որոնք փրկչական թուականի առաջին դարուն վերջերը գրեցին, այսպէս նաև անվաւեր Տեալեանց գրիչներն և ամենք ի հնագոյն Հարց եկեղեցւոյ կոչումներ ըրած կը կարծուին անկէց, իբրև Եզրի մարգարէաշունչ գործէ մի։ Այս ամենայն բաւական առհաւատչեայ է նոյն իսկ անոր հնութեան. բայց թէ այս ձևով և տեսակով եղած գրուած մի, որ Եզրի կանոնական գրքերէն բոլորովին կը տարբերի, կարէր արդեօք – գէթ ըստ սկզբնական մասին – լինել առաւել արդիւնք Եզր Գրչին. ահա հին մատենագրաց և արդի քննադատից մէջ եղած մրցութեան առաջին կէտն։ Բայց ինչ որ աւանդութեան վրայ հաստատած՝ առաջիններէն ամենք իբրև վաւերական ընդունած են, նոյնը անաչառ քննութեամբ վերջինքս առհասարակ կը մերժեն։ Սակայն Կղեմէս Աղեքսանդրացին և Ամբրոսիոս, մին՝ արեւելեան և միւսն՝ արևմտեան եկեղեցւոյ պատգամներ, յառաջ երթալով դեռ՝ իրենց ժամանակին ծանօթ և այժմ մեզ անծանօթ բնագիրը ամբողջապէս իսկ իբրև Եզրի մարգարէի գործ կը հռչակեն։ Առաջինն՝ իւր Ստրուաատ կոչուած երկասիրութեան մէջ (Գ. 16, էջ 556) Եզրի անկանոն գրոց ե գլխու 35 համարէն երեք տող մէջ բերելով՝ կ'ըսէ Ἔσδρας ὁ προφήτης λέγει, այսինքն. «Աե մարգարէն Եզրաս»։ Իսկ վերջինն՝ իւր Քաղաքս բարի վանհուաե խորագրած ճառի ԺԱ գլխում

ընդարձակ հատուածներ քաղելով Դ եզրի Է գլխու 91–101 և ԺԴ գլխու 9րդ համարէն իբրև աստուածաշունչ գրուածէ, կը դնէ գնա իբրև աղբիւր Պաւղոսի առաքելոյն, ուզելով ցուցնել, թէ սա հոգւոց յարութեան ձեռնարկութեան մէջ՝ եզրի հետևած է, և ոչ թէ Պաւոնի: Ա. *հատուածիկ նորա խօսքերը.* «Unde ait Propheta ad angelum... Quis utique prior, Esdras an Plato? Nam Paulus Esdræ, non Platonis, secutus est dicta. Esdras revelavit secundum collatam in se revelationem justos cum Christo futuros, futuros et cum Sanctis». *Նոյնն և ատ Հորոնտիանոս գրած թղթին մէջ* (թղ. XXXIV) *ի վկայութիւն կոչելով Դ եզրի գլ. Գ. 5 և գլ. Է. 78 համարները՝ ի մասին հոգւոյ անմահութեան, խորհուրդ կու տայ անոր, որ կարդայ այդ գրուածը, որ կ'ըսէ.* «Illas philosophorum nugas despexserit, et abditiore prudentia, quam collegerat ex revelatione, perstrinxerit eas (animas) substantiæ esse superiores». *Այսպէս նաև Երանոս և Ատիանոս իբրև մարգարէութիւն ի վկայութիւն կը կոչեն*[1] *եզրի անկանոն գրուածը: Հերոնիմոս*[2] *յիշեալ հարց հակառակ կարծիք ունի եզրի այս գրուածիս նկատմամբ, զի գրելով ընդդէմ Վիգիլանտոսի պրիսկիլեան աղանդաւորին, որ Դ եզրի Զ գլխու 35 համարը մէջ բերելով իբրև հին և հեղինակաւոր գրութիւն, կ'ուրանայր, ըստ այնմ, սրբոց բարեխօսութիւնը վախճանելոց համար, կ'ըսէ.* «Tu vigilans dormis, et dormiens scribis, et proponis mihi *librum apochryphum*, qui sub nomine Esdrae a te et similibus tuis legitur: ubi scriptum est, quod post mortem nullus pro aliis audeat deprecari: quem ego librum nunquam legi. Quid enim necesse est in manus sumere, quod *Ecclesia non recipit*».

1. *Հեղինակներէս առաջինն՝ իւր երկասիրութեան մէջ* (VI, 31. I) *մէջ բերելով Դ եզրի Բ գլխու 16 համարը մեռելոց յարութեան մասին, կը գրէ այսպէս.* «Propheta ait de eo. Commemoratus est Dominus Sanctorum suorum, eorum qui ante dormierant in terra sepellitionis... salutare suum extrahere eos et salvare eos». *Այս խօսքերս, եթէ ատուգիս Երանոսի են՝ մեծ նշանակութիւն ունին:*

Իակ երկրորդն (Opus imperf. in Mattheum, Homel. XXXIV) *մէջ բերելով Դ եզրի Ե գլխու 42 համարը, կ'ըսէ.* Dicit enim Propheta Ezras... Omnium Sanctorum numerum esse quasi coronam; sicut enim in corona, cum sit rotunda, nihil invenias quod videatur esse initium aut finis, sic inter sanctos, quantum ad tempus in illo sæculo nemo novissimus dicitur, nemo primus».

2. Contra Vigilantium (Opp. ed. Vallasius 11. col. 392, 393).

Դիտելու ենք որ Հերոնիմոս միակ այն պատճառաւ անկանոն և անհարազատ կը համարի Եզրի Դ գիրքը, որովհետև այն ժամանակ եկեղեցիէն իբրև կանոնական գրուած ընդունուած և Ս. Գրոց մէջ անցած չէր: Դժբաղդաբար նա քննադատօրէն ուսումնասիրած չէ զայն, որով յայժ շահագրգիռ տեղեկութիւններ թողած պիտի լինէր յետնոցս. սակայն յարգելով հանդերձ մեծ վարդապետիս ծանրակշիռ հեղինակութիւնը, պէտք է ըսել՝ թէ անկանոնականութենէ ձեռնարկած նորա փաստն ի նպաստ գրուածիս անհարազատութեան՝ ըստ ինքեան եղրակացուցիչ չէ, որովհետև ըստ վկայութեան Եւսեբիոսի՝ առաջին երեք դարերում Յովհաննու Քայտևոբիւևն և դեռ ուրիշ սրբազան գրուածներ իսկ կանոնական գրոց ցանկի մէջ եկեղեցիէն ընդունուած չէին, և սակայն էին հարազատք: Բ. Ս. Գրքէն գիտենք թէ առ Հրեայս կային ի հնումն ուրիշ մարգարէական և վաւերական գրուածներ ևս, որոնք սակայն ոչ հին կտակարանի կանոնական գրոց ցանկի մէջ անցած են և ոչ այլ ժողովարանէն ճանչցուած: Հետևաբար, արդի քննադատութիւնն՝ ուրիշ սեպի գրաւական և չօշափելի փաստերու վրայ հաստատուած՝ կը վստահի այսօր ցոյց տալ, թէ այդ գրուածն՝ իբր այժմու կազմակերպութեամբն չէ և չկարէ լինել հարազատ գործ Եզր գրչի, այլ անոր անուան ներքև ծածկուած մի անծանօթ գրչի, որ ապրած ըլլայ կամ Քրիստոսէ մէկ դար յառաջ և կամ փրկչական թուականին առաջին դարում: Այլ թէ որքան ճիշդ են կամ անճիշդ այս եղրակացութիւնք՝ յետոյ ուրեմն ակներև պիտի ընենք փաստերով. այժմ տեսնենք համառօտիւ գրուածիս նիւթը, պարունակութիւնը և նպատակը:

Սաղաթիէլ՝ Եզրի անուան ներքև ծածկուած հեղինակն՝ իբրու այն թէ Բաբելոնի գերութեան մէջ և Նաբուգոդոնոսորայ ձեռքով Երուսաղեմի և անոր տաճարի կործանումէն 30 տարի վերջը կը գրէ իւր այս գիրքը, ըսելով. «Ես Սաղաթիէլ որ և Եզր կոչեցայ, և ի Բաբելոն յամին երեսներորդի», և այլն: Գրուածիս և անոր մէջ նկարագրուած գէթ առաջին երեք տեսիլներուն իբրև հանդիսավայր կը ներկայացուի Բաբելոն, թէպէտև ըստ իրին անոր այնքան ծանօթ կարող էր լինել հինաւուրց Բաբելոնն, որքան մեզ այսօր: Իսկ Դ–էն տեսիլներն կատարուած կ'ուանդուին այս քաղաքէս դուրս անմարդաբնակ դաշտի մի մէջ, որ կը կոչուի Արփատ կամ ըստ հայոյն Արդաթ, ուր ծաղկամբք միայն կը կերակուի տեսանողն: Իբրաքանչիւր տեսլենէ յառաջ՝ հրեշտակի պատուիրելովը՝ գեօթն օր պահօք և աղօթիւք կը պատրաստուի:

Տեսանողին կամ լաւ ևս գրոցս հեղինակի բոլոր պատեղութեան և վշտաց միակ աղբիւրն, ինչպէս և գրութեան գլխաւոր շարժառիթն է այս անողոք գաղափարս, թէ Իսրայէլի Աստուծոյ կամ Եհովայի արդարութիւնն ինչպէս թոյլ տուաւ իւրաքնակ տաճարի կործանումն և ընտրեալ ժողովրդեան գերութիւնն և տառապանքը, իսկ մեա կողմէն այլ անօրէն հեթանոսներու ամենայն բարութիւններով երջանկանալը, որոց մեղքն առ Աստուած աւելի մեծ էր քան թէ Իսրայէլացւոցը: Ոստի աստուածային արդարութեան և նախախնամութեան վրայ ունեցած՝ անտարակոյս իր ազգին և քեալ ժողովրդեան, քան թէ իրեն սեպհական եղող այսպիսի թիւր տարակոյսները լուծելու նպատակաւ՝ կ'ինդեցնէ նա յերկնից Ուրիէլ հրեշտակապետը, որուն հետ կ'ունենայ ամսօրեայ հաղորդակցութիւն. և տիեզերական կարգին մէջ տիրող բնաբանական, բնազանցական, աստուածաբանական և քաղաքական նիւթերը չօշափող խորհրդաւոր տրամախոհութիւններով կը ձկտի պարզել, որոնք հարտար արուեստով բաժնուած են եօթնաթիւ տեսիլներու կամ յայտնութեանց, իւրաքանչիւրն լի աբեղեան վառ երևակայութեամբ և կենդանի գոյներով: Իւրաքանչիւրն ազօթքով մի կամ առանձնախոհութեամբ կը սկսի, որուն մէջ լռելեայն կը պատրաստուին և տեսլեան նիւթերն: Սաղաթիէլ Եզրի կու գայ ի հանդէս՝ իբրև մարդկային ահմանափակ մտաց և վըշտացեալ սրտերու ներկայացուցիչ՝ իւր նուրբ առարկութիւններով, որոնց ծածկեալ պատճառները անյագ ծարաւով մի կ'ուզէ քննել և իմանալ. իսկ Ուրիէլ՝ իբրև անքննելի խորհրդոց Աստուծոյ երկնառաք պատգամաբեր՝ պէս պէս օրինակօք կը մեկնէ զանոնք, և կը յայտնէ աշխարհիս արարչութենէն սկսեալ՝ մինչև փրկագործութեան, Քրիստոսի գալստեան և հատուցման խորհուրդները: Ահաւասիկ գրուածիս համառօտ ծրագիրն:

Արդ, ասկէ յայտնի կը տեսնուի հեղինակիս առած կեղծ անուան պէս՝ գրուածին ևս կեղծուած լինելը: Եւ յիրաւի պատմական ճիշդ եղելութիւնն այն է, թէ Նաբուգոդոնոսորայ ձեռքով Երուսաղեմի կործանումն եղաւ յամին 588 նախ քան զՔրիստոս, իսկ Եզրի և գերուած ժողովրդեան գերեզարձն ի Հրէաստան յամին 459–458, Արտաշէսի հրամանաւ. այսինքն է՝ 100–127 տարի վերջ, հակառակ վերը նշանակուած ահմանին: Թերևս ասով կարելի լինէր մեկնել գրուածիս այն զգալի հակասութիւնը, իբրու այն թէ սորա սկիզբն յիշուած «երեսներորդ» տարին Եզրի տեսլեանց և անոնց գրուած լինելու ժամանակին միայն վերաբերի, և ոչ թէ գերեզարձին: Այլ

այս ենթադրութիւնս այն ժամանակ միայն հիմնաւոր կը լինէր, եթէ կանոնական գրոց մէջ ևս՝ առաւել ճիշդ այդ ժամանակամիջոցին՝ իւր կամ այլոց գործերն ի գրի առած և գրիչ յորջորջուած լինէր Եզր. սակայն ընդհակառակն հոս գերեզարձէն վերջ գրած և Գրիչ անուանուած կ'առանդուի. հետևաբար, անվաւեր գրոց կեղծ հեղինակն Սաղաթիէլ՝ Եզր գրիչը չէ, և դիտմամբ այդ վրիպակը գործած է, ցուցնելու համար իւր ժամանակակցաց, թէ այս գրուածըս յառաջագոյն գրուած էր ի գերութեան, քան թէ Եզրի միւս երկու վաւերական գրքերը. և կամ, ինչպէս կ'ըսէ Վիլէր[1], դժուար է որ գրոցս կեղծեալ Սաղաթիէլն՝ գիտակցաբար ի նկատի առած լինի, որ հինաւուրց Եզր գրիչն այն ժամանակ ի Բաբելոն եղած լինէր. այլ մանաւանդ թէ նա ուզած է ըստ կարելւոյն նոյնացնել ինքը Զօրաբաբելի հօր՝ Սաղաթիէլի հետ, որ ճիշդ այն ժամանակին կը վերաբերի, և Եզրի՝ որ 100 տարի վերջն է, թէ և իրօք ինքն անանցմէ ոչ միոյն հետ կարէ նոյնանալ: Այս ճարտար առեսա՛ է իւր գրութիւնը հեղինակաւոր գործելու, և անով իւր ընձայեալ նպատակին հասնելու: Ինչպէս Կապիչ[2] կարծիքով՝ հաւանօրէն գրոցս հեղինակն մի ուրիշ Եզրի անուամբ դիմակաւորիլ ուզած է, և զնա Զօրաբաբելի հօր Սաղաթիէլի հետ նոյնացուցած, իբր թէ երկուքն ևս մի և նոյն ժամանակի մէջ ապրած ըլլային: Եւ իրօք Նեէմեայ գրքին մէջ, գլ. ԺԲ. 1, Եզր անուամբ քահանայ մի կը յիշուի, առանց Գրիչ տիտղոսի, որ Յեսուայ և Զօրաբաբելի հետ յետուսաղէմ կը վերադառնայ: Սակայն Կապիչ ինքնին Դ Եզրի ԺԴ գլխուա՛ վերջաբանի մէջ աւանդուածին անյարմար կը համարի պայս, ուր ընդհակառակն մեզ ծանօթ Եզրն՝ Գրիչ օրինաց՝ ներկայացուած է, իբրև հեղինակ և գլխաւոր դեր խաղացող ի պատմութեան: Զինչ և իցէ, ըստ գիտնականիս դիմակաւորեալն՝ Եզրաս է, և ոչ թէ Սաղաթիէլ, զի վերջինս պարզապէս ազգանուն մ'է և ոչ թէ բուն անուն հեղինակին:

Այս մեկնութիւնս ըստ իմիք բաւական է, դիտելով որ տեսլեանց մէջ Ուրիէլ հրեշտակապետն միշտ Եզր կամ Եզրաս անուամբ կը կոչէ զնա, և ոչ երբէք Սաղաթիէլ. սակայն Կապիչ չի ցուցներ մեզ, թէ ինչ հիման վրայ Եզրի դիմակն առած է կեղծ հեղինակ գրոցս: Ըստ իս՝ այսպէս հեշտ է մեկնել զայն. այսինքն է, հեղինակ գրոյս

1. Studien und Kritik, 1870. II. S. 265.
2. Das Vierte Buch Ezras, Göttingen 1889, s. 9.

նախապէս գիտնալով Եզրի Ա գրքէն, գլ. Ը, 9, 10, թէ Եզր՝ Ասուծոյ օրէնքը ի գրի առնելով կամ ժողովրդեան քարոզելով Գրիչ կամ պատմիչ օրինաց Տեառն անուանուեցաւ. ուստի ինքն ևս, — որ ըստ իս Սաղաթիէլ կը կոչուէր, — աւելի եզր Գրիչ անունն՝ քան ուրիշ մի այլ անուն յարմար դատեց իւր վրայ առնուլ, վասն զի ինքն ևս նախնոյն պէս ի Հռովմայեցւոց հալածեալ և քթեալ ժողովրդեան հոգը իւր վրայ առած՝ կ'ուզէր Բարձրելոյն օրինօք և վարդապետութեամբք սրտապնդել զանոնք, և իրենց հայրենի օրինաց և կրօնից մէջ պահել: Այս բանս ակներև պիտի տեսնուի յետոյ՝ գրութեան ներքին փաստերէն իսկ:

Մեր տուած այս մեկնութեանս գրեթէ իր է, և կը հաստատուի ոչ միայն անվաւեր գրութեանս առաջին համարով, ուր հեղինակն ինքնին յետ յիշելոյ իւր բուն անունը՝ Սաղաթիէլ, անդէն յաւելուածով վրայ կը բերէ և կեղծ անունը, ըսելով. «Որ և Եզր կոչեցայ», այլ նոյն իսկ գրուածին Դ գլխով, ուր աւանդուած է անոր գրուելուն եղանակն և նպատակը, զոր կեղծ հեղինակն ուզած է ճարտարութեամբ չփոթել Եզր գրչի ձեռօք նորոգուած կամ լաւ ևս Հրէից կանոնական 20 (24) գրոց հետ. սակայն վերջաբանին մէջ մի և նոյն հեղինակի կամ անոր յոյն խմբագրողի ձեռքով բաբեբաղդաբար վար առնուած է կեղծ Եզրի դիմակը, վասն զի երրորդ դէմքով մէջ բերուած այս նախադասութիւնս. «Եւ ինքն Եզր վերացաւ և համբարձաւ ի գունդ նմանեաց իւրոց», և այլն, բնաւ կապ չունին վերջին նախադասութեան. «Գրեցի զայս ամենայն, և յորջորջեցայ դպիր Բարձրելոյն» խօսքերուն հետ, որոնք սերտիւ կապուած են 47 համարի՝ «Արարի այնպէս», այսինքն՝ գրեցի «յաՄին չորրորդի» նախադասութեան հետ, ուր նշակուած է գրութեան տարեթիւն: Արդ, վերջին նախադասութիւնս որքան բնական է և բանաւոր, այնքան և անբնական է առաջինը, պիտալով թէ ո՛ր և իցէ գրիչ կարող է ծանուցանել յետնոց իւր ըրած գրութիւնը, բայց ոչ նոյնպէս մահը և յերկինս վերանալը. ուրեմն գրութիւնը ծանուցանողն բոլորովին տարբեր է մեռանողէն: Բ. Կեղծ հեղինակն չէր կարող գործածել զանուն Սաղաթիէլ՝ իբրև ազգանուն Եզրի, գիտնալով որ Բ Եզրի է գլխու 1 համարում՝ Եզր կոչուած է արդէն որդի Սարուայ, ըստ այնմ. «Եւ Եզր որդի Սարուայ, որդւոյ Ազարիայ»: Եզրի անվաւեր գրքի լատին խմբագիրն արդէն ամբողջապէս արտագրած է յիշեալ տեղին՝ իւր նորահնար յաւելուածին, այն է՝ Ա. գլխու 1–3 համարներում, այսպէս. «Liber Ezræ prophetæ secundus, filii Sarei, filii Azarei», ect.

Այժմ մի ուրիշ խնդիր կ'ելնէ մեզ ընդ առաջ, այսինքն թէ արդեօք Եզր անուան, — այսպէս նաև անոր ընծայուած այս գրքիս, — յատուածուստ ներշնչուած լինելու կեղծիքն՝ Սաղաթիելէն կամ լաւ ևս գրուածիս հնագոյն մասի հեղինակէն յառաջ եկած է ուղղակի, թէ ընդհակառակն յետ ժամանակաց և անոր սկզբնագրի վրայ կատարուած յոյն խմբագրութեան ընծայելի է։ Ոչինչ կապիչ նախադասութեանցս վերջինն ընդունած է իբրև ճշմարիտ, իբր յիշեալ ընդարձակ ուսումնասիրութեան մէջ, ի վերլուծելով այդ անվաւեր գրութիւնը՝ իրարմէ տարբեր անձանց ձեռքով և ժամանակաց մէջ գրուած վեց աղբիւրներ գտած է, ըստ թուոյ տեսլեանց որք կը պարունակուին այն տեղ, այնու մանաւանդ որ սաղաթիէլեան հատուածներէն աւելի բազմաթիւ են խմբագրական հատուածքն։

Ըստ մեզ՝ աղբերաց այդ այլևայլութիւնքն եթէ ճշմարիտ իսկ համարուին, — դատելով գրքիս մէջ եղած քրիստոնէական յատկութիւն ունեցող հատուածներէն, — սակայն և այնպէս Սաղաթիէլ անուան հետ բնաւ գործ չունին դոքա. և սոր պատճառն խիստ յայտնի է։ Ցիւրաքանչիւր, այդ աղբիւրներն կամ յաջորդաբար կատարուած, սորին, լատին, հայ, ևն, խմբագրութեանց ձեռքով ներմուծուած են, և կամ գրքիս սկզբնագրի հեղինակէն հաւաքուած։ Առաջին կէտն ընդունելով իբրև հիմնաւոր, սակայն և այնպէս մենք կը տեսնենք որ բոլոր խմբագրութիւններն ևս միակերպ ունին անուանս Սաղաթիէլ. և լատինն անգամ, որ ի սկզբան գանց ըրած է զայն՝ ի շարունակութեան ապա կը յիշատակէ յայտնապէս. ուրեմն այս ընդհանուր երևութէս կը հետևի, որ անյայտացած յոյն խմբագրութիւնն ևս ունեցած ըլլար զայն, բայց ոչ եթէ նոր ինչ հնարած. զի այսպիսի մի կեղծիք անհասկանալի պիտի լինէր յունի մի համար, ինչպէս Հրէից այլ գժուար կամ բոլորովին անընդունելի։ Հետևաբար, Սաղաթիէլ անուան ծագումը եբրայական բնագրի մէջ որոնելու ենք քան թէ յունարենի, և թէ դա է յատուկ անուն անվաւեր գրոցս հեղինակին։ Սա գրեց իբր այդ գիրքը, օգտուելով Հրէից գրաւոր կամ անգիր աւանդութենէ մի, որ գուցէ թէ Եզրի անուամբ կը չրջէր Հրէից մէջ, նոյն իսկ փրկչական թուականի առաջին դարուն։

Իսկ գալով ուղղակի աղբերաց՝ յարգելով հանդերձ Կապիչի սքրաամիտ դիտողութիւնները, մենք մեր ըրած քննութեան համեմատ չենք կրնար համաձայնիլ իրեն ըստ ամենայնի։ Այս ճշմարիտ է՝ որ գրութեանս մէջ հրէական որոշ ձկտման և բնորոշ յատկութեանց առընթեր՝ կը տեսնուին զգալի կերպով նաև քրիստոնէական հոգւոյ

և աստուածարանութեան ակն յայտնի ներշնչութիւններ, զորս դժուար է մի և նոյն գրչին ընծայել, առանց ենթադրելու՝ որ նա ազգաւ հրեայ եղած լինի և կրօնիւք քրիստոնեայ: Սակայն այսպիսի մի ենթադրութիւն՝ իրեն ի նպաստ փաստեր չունենալէն զատ՝ հակառակ ևս կը թուի եբրայական տիպ ունեցող հատուածոց կամ լաւ ևս մեծագոյն մասին գրութեանս, որ առանձինն առնուած՝ այնքան կը տարբերի միւսներէն, որքան հին կտակարանին վերաբերեալ գիրք մի՝ նոր կտակարանի այս ինչ կամ այն գրքէն: Քրիստոնէական տիպար ունեցող հատուածներն՝ առաջին անգամ յոյն խմբագրի ձեռքով ներմուծուած են, ըստ իս, գրքիս մէջ, և հետզհետէ կերպաւորուած միւս խմբագրութեանց ձեռքով: Իսկ ինքնացածն ամբողջ՝ երկու աղբիւրներէ կազմուած է, այսինքն են սաղմոսիկեան և եզրեան, կամ լաւ ևս՝ հինաւուրց և հնագոյն: Ահա այս հիման վրայ պիտի լինին մեր քննութիւնք և ապացուցութիւնները:

Առաջին տեսլեան վերջը, գլ. ե, 13, Ուրիէլ հրեշտակապետի կողմէն կը պատուիրուի առ Սաղաթիէլ Եզր, թէ «Դարձեալ միւսանգամ պահօք և արտասուօք խնդրեացես ի Բարձրելոյն իբրև զաշխատ եօթն, և լուիցես քան զայս մեծամեծս», մինչդեռ նոյն տեսլեան սկիզբը մենք բնաւ նման պատուէրի մի չենք հանդիպիր, գրքիս բոլոր թարգմանութեանց մէջ: Սակայն եօթնօրեայ պահեցողութեան պատուէր մի տրուած էր տեսանողին, որ դժբաղդօրէն իւր յարակից հատուածոյ ի միասին ինկած է: Այս պատճառաւ կան, առանց որոյ Դ գլխու 13 համարէն մէջ բերուած բացատրութիւնն անհասկանալի կը մնայ, Էվալտ, Ճօլկմար և Կապիշ իսկ անդրադարձան: Լատին խմբագիրն ևս, այս առթիւ, կարծէք թէ՝ ի

գլուխն ուզած է ընծայել մեզ, բայց կասկածելի է որ գրոցս ըս-
կըզբնագրէն առած ըլլայ զայն: Բ. Յիշեալ տեսիլներուն հրամա-
յուած եօթնօրեայ պահեցողութեան պատուէրն՝ բոլորովին տարբեր
հանգամանքներ ունի յաջորդ, այն է Դ, Ե և Զ տեսիլներուն նկա-
րագրուածին, նկատմամբ տեղւոյն, աւուրց և եղանակի պահեցո-
ղութեան, զոր յետոյ պիտի պարզենք:

Իրարու, — գէթ արտաքսապէս, — հակապատկեր այս և բոլոր միւս տեղիքն մանրազննին խուզարկութեանց ենթարկելէն վերջ՝ հետե-
ցուց Կապիշ, թէ ինչպէս Ուրիէլ հրեշտակապետի երեւմանց նկարա-
գիրն՝ Դանիէլի Ը գլխու 15 համարում աւանդուածին վրայ ձեւա-
ցած է, այսպէս այլ առաջին երեք տեսիլներում եղած երեք եօթ-
ևեակ պահոց պատուէրն՝ Դանիէլի մարգարէութեան Ծ գլխում ա-
ւանդուածէն ուղղակի փոխ առնուած է, վասն զի Դանիէլի և ոչ թէ
Եզրայ բերնով կրնան ըսուած լինել անկանոն գրքիս Զ գլխու, — 35
համարում, — պահեցողութեան վերաբերեալ խօսքերս. «Ut suplerem
tres hebdomadas quæ dictæ sunt mihi», զի նա՛ աստուածային
յայտնութենէ առաւ այսպիսի պատուէր մի, և ոչ թէ Եզր Սաղա-
թիէլ. հետևաբար, երեք եօթնեկաց վերաբերեալ հատուածներն,
որոնք կը զանազանին միւս տեսիլներում յիշուած հանգամանքնե-
րէն, ոչ եթէ հնագոյն Եզրի՝ այլ խմբագրութեան յատուկ ներմու-
ծութիւնք են:

Մենք ընդունելով հանդերձ տեղւոյս Դանիէլի հետ ունեցած նմանութիւնը, չենք կրնար համաձայնիլ անկէց հանած եզրակացու-
թեանը. դիտելով նախ, որ ինչպէս յետագայ խմբագիրն՝ այսպէս և
դիմակաւոր Եզր Սաղաթիէլն կարող էր հաւասարապէս Դանիէլի
հետևիլ: Բ. ըստ իս՝ ինչպէս բնագրին՝ այսպէս և մեր դիտողու-
թեան էական կէտն է եօթեօրեայ[1] պահեցողութեան պատուէրն, որ
կը վերաբերի ուղղակի հնագոյն աղբերն, այն է Եզրի. իսկ երեք
եօթևեակքն ուրիշ բան չեն ըստ ինքեան, եթէ ոչ երեքկնութիւն ա-
ռաջնոյն. և այս երեքկնութիւնս՝ արդիւնք են Սաղաթիէլի գրչին,
որ իւր հնագոյն աղբիւրը ուզելով ուրիշ տեսիլներով ընդարձակել,

1. Եօթն թիւը Հրէից մէջ ամենագործածականն է, և Ս. Գրքէն գիտենք, որ Դանիէլէն դուրս ուրիշներ ևս եօթնեակ մի կը պահէին մեծ գործ մի ձեռնարկելէ յառաջ: Իսկ անվաւեր գրոցս հեղինակն՝ բաց ի յիշեալ տեղերէն՝ Զ գլխու 42, Ը գլխու 30, 31, 80 և Ժ. գլխու 91 և 101 համարներուն մէջ ևս գործածած է այդ թիւը, ուրիշ իրաց նկատմամբ. ուրեմն այս ամենայն սեմական տիպ ունին, քան թէ յունական:

անկէ նշանակուած պահեցողութեան եօթն օրերն ևս երեքկնած է նոյն կերպով, իւր գործը չմատնելու համար: Եւ ստուգիւ, այսմ կը նպաստեն յոյժ նաև հայկական և արաբական խմբագրութիւնքն, որոնք, Ջ գլխու 35 համարում, չունին բնաւ ստուգոյն և լատինի «tres hebdomadas» *բացատրութիւնը. և նոյն իսկ վերջնոցս՝ մի և նոյն գլխու 36 համարին.* «Cum esset nocte octava» *բացատրութիւնն, որուն կը միաբանին հայն և արաբացին իսկ, աւելի եօթն օրը ցոյց կու տան մեզ, քան թէ 35 համարի՝* «tres hebdomadas = *երեք եօթնեակքն»: Ուստի այս մեկնութենէս վերջ՝ կարծեմ թէ այլ ևս անհրաժեշտ հարկ չկայ Դանիելի մարգարէութեան կոչումն ընել, և կամ խմբագրական աղբիւրներ մակաբերել:*

Աղբերաց զանազանութեան ստոյգ նշաններ կը նկատուին իրօք թ գլխու 23, ժ պ. 58 և ժԹ պ. 39 համարներուն. վասն զի այս տեղերէս առաջինն՝ նոյն պահելով պահոց օրերուն թիւը՝ եօթն, սակայն փոխանակ Բաբելոնի՝ Արդաբ գաշտին մէջ փոխադրուած կը տեսնենք յանկարծ զպահեցողն, որ ըստ արաբացւոյն՝ թարգմանուած է՝ դաշտապետին ձոխ բոշասկաւորքեան, ուր տեսանողին կը պատուիրուի՝ ծաղկամբք միայն կերակրիլ: Երկրորդին մէջ՝ երկոտ օրուան վերածուած են պատրաստութեան օրերն. իսկ երրորդին մէջ՝ երեք օրերու:

Տեղեացս առաջնոյն եկումուտ լինելն՝ ասկէ իսկ կը տեսնուի, զի 23–25 համարներուն, ուր Ուրիէլ հրահանգ կու տայ Եզրի դաշտն երթալ, դաշտին անունը բնաւ չյիշուիր. իսկ յաջորդ (26) համարում տեսանողի բերանը դրուած առանձնախօսութեան մէջ միայն և առաջին անգամ կը կոչուի այն Արդաբ[1]: Այս անունս եթէ նոյն է երմ. խթ, 23 և ես. ԼԶ, 19 քով յիշուածին հետ, կը գտնուէր Պաղեստինոյ հիւսիսային սահմանագլուխը, այն է՝ Եմաթայ և Դամասկոսի գաւառին մէջ, և ոչ թէ Բաբելոնի քով, ուր կը հանդիպին առաջին երեք տեսիլներն: Արդ, բաղդատելով այս հատուածս՝ ե գլխու 16 համարին և ժԲ գլխու 40–45 համարներուն հետ՝ անհամաձայնութիւնն դեռ աւելի յայտնի կը տեսնուի. զի վերջնոյս մէջ՝ ժողովուրդը տեսնելով Եզրի յաւիտենալը՝ ինքն կու գայ առ Եզր, և կ'ապաչէ, որ չի քանդէ զիրենք ստորութեան մէջ, ըսելով. Nec enim

1. Ր. Կապիչ՝ Երուսաղեմի մօտերն եղած կը համարի այս տեղիս, քայց առանց աշխարհագրական կամ պատմական փաստ մի մէջ բերելու անոր է նպաստ. սակայն գրուածիս ներքին փաստերը, զոր մէջ բերինք և պիտի բերենք՝ ստոյգ հակառակ կ'երևեն:

sumus meliores iis qui *ibi*[1] mortui sunt, *որ համաձայն է աւելի Ա. տեսլեան վերջն եղած հատուածին, ուր ժողովրդեան առաջնորդն փայտիկ*[2] *գալով առ նգր՝ նմանօրինակ աղերս մի կը մատուցանէ անոր. իսկ որովհետև ինչպէս առաջին տեսլեան՝ այսպէս և ԺԲ գլխու 40–45 համարներուն պատմուած դէպքն՝ ի Բաբելոն կը կատարուի. իսկ ըստ Թ գլ. 26 համարում ասանդուածին՝ Պաղեստինու սահմանաց վերայ, ուրեմն պէտք է ըսել, թէ վերջին հատուածս՝ Արդար անուամբ, ինչպէս նաև Ժ և ԺԳ գլուխներու նոյնասեր հատուածներն, տարբեր յաղթերէ կը յառաջագային, որուն ոմն ըլլալը Դ տեսլեան վերայ խօսած ատեն պիտի պարզենք:*

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼՆ՝ *սերտիւ կապուած է առաջնոյն հետ, այնպէս որ՝ տեղին, անձն, հրեշտակն և այլ ամենայն հանգամանք նոյն կ'ե-ըևին. սակայն և այնպէս կան տեղեր և աստ, յորս աչքի կը զարնեն իրարու տարբեր ձկտումներ: Օրինակի աղագաւ, Ե գլխում՝ Եզրի աղօթքին կամ առանձնախօսութեան մէջ (էջ 23–26), յետ յիշեցնելու Աստուծոյ, թէ «Դու Տէր, յամենայն նիւթոց փայտից ընտրեցեր քեզ զորթ ծառ, յամենայն ծաղկանց՝ զշուշան ծաղիկ, յամենայն թռչնոց՝ աղաւնի, և յամենայն չորքոտանեաց՝ ոչխար, և յամենայն բազմութեան ղուրց՝ Յորդանան». և ապա յիշելով ընտրեալ ժողովրդեան՝ հեթանոսներէն կրած հալածանքը և ոգեայս՝ երջանկանալը, անդէն վրայ կը բերէ, 27 համարում, նշանաւոր խօսքերս. «Եւ յամենայնէ ընտրեալք առ ի քէն՝ օրհնիք, զորս շնորհեցեր ցանկալի ժողովրդեանն»: Իսկ 28 և 35 համարներուն՝ գայթագմամբ «ապերախտ և անօրէն» կը կոչուին ամենայն ազգք հեթանոսաց, այնու զի «ոչ ճանաչեն զԱստուած» (Երայելի):*

Արդ, *մէջ բերուած առաջին երկու տեղեաց մէջ շեշտուած է Հրէից գերազանցութիւնը՝ շնորհիւ օրինաց, և հեթանոսաց նկատմամբ ալ չափաւոր լեզու մի գործածուած. իսկ վերջնոյն մէջ, ընդհակառակն, ցոյց տրուած է սաստիկ և անհաշտ տեսլութիւն մի առ հեթանոս, զոր դժուար է միաբանել առաջնոյն հետ և մի և նոյն*

1. Բոլոր միւս թարգմանութիւնք՝ ունին այս մակբայս. հայն միայն կը դրէ «քան զհինն՝ մեռեալս նորա»: Ժողովրդեան խօսքն՝ հինաւուրց վախճանելոց մասին է, բայց յայտնի չէ, արդեօք Երուսաղեմի, թէ ընդհակառակն, Բաբելոնի մէջ: Հայն՝ առաջնոյն աւելի կը թուի նպաստել:

2. Այս անունս՝ թ—ց Կդ գլխու 26 համարին մէջ ևս յիշուած է, իբրև իշխան և առաջնորդ ցեղին Իսաքարայ: Հաւանական է, որ փոխառուն ևս այդ ցեղին կը վերաբերէր. բայց այս բանիս չունիմ ի ձեռին չօշափելի փաստեր:

հոգւոյ թելադրութիւններ համարել: Ֆօլկմար՝ Պաւղոս առաքելոյն առ Հռովմայեցիս գրած թղթոյն (Ա. 32 և Բ. 16) գլխոց մէջ բերուած տեղեաց հետ նոյնութիւն մի նկատելով՝ հետևցոյց, թէ դոքա չեն կրնար սաղաթիէլեան հին բնագրին վերաբերիլ, որ միշտ հաշտարար հոգւով կը խօսի հեթանոսաց մասին, այլ քրիստոնէի մի: Սակայն, ըստ իս, պէտք է դիտել, որ Պաւղոս առաքեալն՝ յիշեալ տեղեաց մէջ բնական օրինաց վերայ կը խօսի, զոր ունին և՛ հեթանոսք. իսկ Եզրի տեսլեան մէջ, ընդհակառակն, խօսքն բացառութեամբ Սինայ լերան վերայ տրուած աստուածատուր օրինաց վերայ է, որ Հրէից միայն սեփհական էր. հետևաբար, Պաւղոս առաքելոյն կոչումն ընելով՝ խնդիրը լուծուած չի համարուիր:

Ո. Կապիշ ընդունելով հանդերձ մեր նշանակած զանազանութիւնը, սակայն և այնպէս ինքն հաստատուած միայն 28 և 35 համարներուն արտայայտուած իրողութեան, այն է՝ առ հեթանոսս ցոյց տրուած ատելութեան վերայ, կ'ըսէ՝ թէ այդ տեղիքն սերտ կապ ունին Գ գլխու 36 համարին հետ, և երկոքեան իսկ՝ յոյն խմբագրին անկ են: Գիտնականս՝ իւր այս կարծեաց ի հաստատութիւն՝ ցոյց կու տայ մեզ Յակոբս–Քապաշի[1] մէկ վկայութիւնը, ուր ըսուած է, թէ այն ժամանակէն ի վեր՝ երբ Իսրայելացիք ընդունեցան Աստուծոյ օրէնքը, գրգռուեցան հեթանոսք անոնց դէմ. և թէ ինչո՞վ և ինչպէս Իսրայելացիք՝ հեթանոսներէն յառաջ եղան ժողովուրդ Աստուծոյ և աստուածամերձք, իսկ հեթանոսք՝ գուրկ յօրինացն՝ և ոչ իսկ մարդ անուան, կամ որդիք Ադամայ արժանի եղան կոչուիլ (ի Հրէից), այլ ինքնանուաք, անօրէնք, այրագիք: Հետևաբար, ըստ Կապիշի՝ Յակոբս–Քապաշի եղած է աղբիւր յոյն խմբագրի ձեռքով եղած յաւելուածին: Ցիրաւի, այս հեղինակիս և Եզրի անվաեր գրոց յիշեալ տեղեաց նմանութիւնն՝ առանց երկբայութեան է, բայց այն փաստն որով յիշեալ տեղին յոյն խմբագրին աւելի կու տայ Կապիշ՝ քան թէ Սաղաթիէլի, Յակոբսէն մէջ բերուած տեղուին իսկ կ'ոչնչանայ, դիտելով որ՝ սա ոչ եթէ առանձին առ հեթանոս տածած ատելութեան պատճառաւ հնարեց «անօրէն, այրագի» և այլ բացատրութիւնները, այլ իւր ազգին նուիրական, այն է՝ Ս. Գրոց և ընդհանուր աւանդութեանց համեմատ, ուր ատէպ յեղյեղուած կը գտնենք զայնս: Ուստի, ես աւելի հաւանական կը համարիմ Սաղաթիէլի ընծայել խնդրոյ նիւթ եղած տե-

1. Տես Eisenmann. a. a. O.

ղին, քան թէ յոյն խմբագրին: Եւ ատուգիւ, նախ որ Յորդանան, Միռն, սուրբ երկիր և ընտրեալ ժողովուրդ, գործածուած ձևերն՝ աւելի Հրէի մի բերանը հասկանալի են, քան թէ Յունի: Բ. Նոյն իսկ Սաղաթիելին յատուկ հատուածոց մէջ կը տեսնուի ամենուրեք ճիգն մի՝ թևակոխելու միշտ նուազէն աւ սաստիկն և անորոշէն որոշագունին:

Ե գլխու 41 – Ջ. 10 համարներն, ուր Եզրի կողմէն այս հարցս կ'ուղղուի աւ Ուրիէլ. « Ո՞չ կարէ առնել (Բարձրեալն) արդեօք, որք անցինն, և որք կան, և որք լինելոցն իցեն միանգամայն, զի վաղվաղակի անցցէ աշխարհս և եկեսցէ դատաստան, » ևայլն, և Ուրիէլ տուած այս պատասխանիս. « Զի որոշեաց Բարձրեալն՝ ըստ ժամանակի և ի ժամանակի առնել որ ինչ լինելոցն իցէ, և ոչ կարեն փութալ արարածքն ». այսպէս և 45 համարն, ուր կը հարցնէ Եզր. « Զիա՞րդ ասաց Բարձրեալն՝ դարձուցանել զամենայն մարդկեղէն արարածս » մեծ նմանութիւն ունին Դ գլխու 51–52 համարներու հարց ու պատասխաններու հետ, բայց կայ զգալի հակասութիւն մի երկուստեք. վասն զի որ ինչ անլուծանելի թողուած է այն տեղ՝ Ուրիէլի կողմէն, այն է՝ մարդկային կենաց և մահու գաղտնիքն, ըսելով. « Վասն նշանացն կարեմ ասել քեզ, իսկ վասն կենաց ձերոց՝ ոչ առաքեցայ ասել ինչ », հոս, ընդհակառակն, կը լուծուի այն՝ երկրի և ծննդական մօր և այլ ներբին օրինակներով: Ասոր այսպիսի մի խոշոր հակասութեան հանդէպ՝ անաչառ քննադատութիւնն չվարանիր եզրակացնելու, թէ Ե գլխու հարցուպատասխաններքն հնագոյն աղբեր չեն վերաբերիր, և ուրիշ բան չեն, բայց եթէ Դ գլխու 51–52 համարներն, որ յոյն խմբագրի ձեռքով ընդարձակուած են՝ աւ Ա Կորնթացիս գրուած Թղթի ԻԵ (Թ) գլխու վարդապետութեամբ. որով հին Կտակարանի անորոշ և մթին աստուածաբանութիւնն՝ նոր Կտակի կամ քրիստոնէական վարդապետութեան լուսով բարգաւաճուած է:

Զ գլուխն, ինչպէս որ կանխաւ նշանակեցինք, հայերենի մէջ մեծապէս խանգարուած է, և 6–10 համարներն այլ բոլորովին կը պակսին, որք միւս թարգմանութեանց մէջ կը ներկայացնեն՝ ժամանակի սկզբան և կատարածի և յաւիտենականութեան մասին՝ Եզրի և Ուրիէլ հրեշտակապետի մէջ եղած խօսակցութիւնը. « Et respondi et dixi: Quid erit separatio temporum? aut quando prioris aut sequentis initium? — Et dixit ad me: Ab Abraham usque ad Abraham, quoniam ab eo natus est Jacob et Esau: manus enim Jacob tenebat ab initio calcaneum Esau. Finis enim

hujus sæculi Esau, et principium sequentibus Jacob,... Hominis manus... inter calcaneum et manum, aliud noli querere, Ezra ».

Ի. Կապիշ Ուրիելի բերանը դրուած, Ab Abraham usque ad Abraham *խօսքերը՝ իբր անխմաստ կը նկատէ. իսկ ամբողջ տեղին օտար ի սկզբնագրէն Սաղաթիելի, և ի գլխուս եղած միւս աղբիւրէն յառաջ եկած, ուր Իսրայելի թագաւորութիւնն՝ իբրև սահմանաւոր տևողութիւն մ'առնուած է այս կենցաղոյս մէջ։ Իսկ մեր կարծիքով, այդ տեղին՝ ի գլխոյն հետ մերձաւոր կապ չունի, վասն զի հոս վերջին ժամանակի նշանաց վերայ կը խօսուի, իսկ նախընթացին մէջ ընդհակառակն ներկայ կենաց վերայ, որ պիտի վերջանայ Եսաւով, այսինքն է՝ աշխարհական իշխանութեամբ, և հանդերձեալոյն՝ որ պիտի սկսի Յակոբով, այն է՝ հոգևոր թագաւորութեամբ. հետևաբար, աւելի ի գլխու 51–52 համարներուն վերաբերելի է։ Այս՝ իսկապէս երրայական այլաբանութիւն մ'է և յուշի մի համար նշանակութենէ զուրկ, ուղղակի սկզբնագրի գրոցս կը վերաբերի։ Ոչ միայն անխմաստ մի բան չէ յիշեալ նախադասութիւնն, այլ Ծննդ. ԻԵ, 4–8 տեղեաց համաձայն, ուր Աբրահամ Եսաւուծոյ կողմէն և ուխտիւք կը դրուի հայր ազգաց բազմաց և տէր աշխարհաց, յորմէ կը ծնանին ապա Եսաւ և Յակոբ։ Սա կը նկատուի սկիզբն հանդերձեալ ժամանակի կամ աշխարհի, վասն զի ինքն եղաւ ժառանգ Եսաւուծոյ ուխտին և աբրահամեան անվերջ թագաւորութեան, ինչպէս Մելքիսեդեկն այլ յաւիտենական քահանայութեան. իսկ Եսաւ՝ կը դրուի իբրև վերջ այս ժամանակիս, որովհետև կորսընցնելով անդրանկութեան հետ՝ նաև Աբրահամու ուխտեաց ժառանգութիւնը, անցաւորքս պատուիրեաւ և այլազգեաց հետ ազգախառնեցաւ։ Ուստի Եսաւայ, — որ ըստ Հիլգենֆելդի՝ հոմանիշ է Եդոմայ, — այլաբանութեան նպատակն էր, կազմել աշխարհական թագաւորութիւն մի, որ պիտի տիրէր վերջին ժամանակներուն. այսինքն է՝ թագաւորութիւն Հերովդիանոսաց՝ հռովմէական կայսերութեան ներքոյ։ Ըստ Այսենմանի՝ (II, 787) բարուներաց աւանդութեան համեմատ՝ Հրէից ներկայ ժամանակի թշնամին՝ միշտ Եդոմայեցի անուան ներքև կը ներկայանար, ըլլար այն հռովմէական պետութիւնն, ըլլային քրիստոնեայք կամ Պարսիկք։ Ուստի, այսպէս կամ այնպէս, Յակոբ՝ նշանակ էր բոլոր հանդերձեալ աշխարհին, ըստ Սաղաթիելի, իսկ Եսաւ՝ այս աշխարհիս, և երկաքանչիւրն՝ ընդդիմամարտ կ'ընթանան, առանց միջնորդի։ Այ՛, Մուրթքէի և Հա-

*մանայ պատմութիւնն իսկ՝ ի գիրս Նոթերայ, այսպէս և Հրէից հա-
մալիւղ կորստեան պատմութիւնն՝ առ Ք Անտիոքոսիւ՝ (Ք. Մակա-
բայեցւոց) այս կրկին կենցաղից և իշխանութեանց իրարու հետ
ունեցած բուռն մրցութեան առհաւատչեայք են: Գրոց մէջ բե-
րուած տեղին՝ աւելի գեղեցիկ կերպով ընդլայնուած է և մեկնուած
նոյն իսկ Պաւղոսի առ Գաղատացիս գրած թղթոյն մէջ (գլ. Դ. 21–31),
ուր օրինակաւ Սահակայ և Իսմայելի կը մեկնուին Աբրահամու երկու
ծննդոց, այսինքն է՝ ապատէն և աղախնէն ծնուած որդւոց նշանա-
կութիւնքը, որով կը ջրին այլ ամենայն վարկածք. հետևաբար, և
աղբերս հնութիւնն աներկբայելի է, և ուրիշ յոյն աղբիւր մ'երա-
զելն իսկ ոչ հիմնաւոր: Այս միայն կը մնայ խնդրոյ նիւթ. այսինքն
է, արդեօք առ Գաղատացիս գրուած թղթոյն հեղինակն՝ փոխեց Եզրի
անկանոն գրոց յանուն Յակոբայ և Եսաւայ աւանդուածները՝ Սա-
հակայ և Իսմայելի վերայ, թէ ընդհակառակն: Մենք, առանց ուրիշ
տեղեաց համեմատութեան՝ առ այժմ դեռ վաղաժամ կը համարինք
միոյն կամ միւսոյն ի նպաստ վճիռ տալը:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԼԵԱՆ մէջ՝ Սաղաթիելի առանձնախօսութիւնը (գլ. Զ.
38). «Տէր Աստուած իմ, դու արարեր զերկինս և զերկիր», նոյն է
առաջին տեսլեան առանձնախօսութեան, այսինքն է Գ գլխու 4–9
համարներուն հետ: Սակայն, անմիջապէս անոր յաջորդող համարնե-
րուն, աչքի զարնող երևոյթ մ'ընդ առաջ կ'ելնէ մեզ, խորհրդաւոր
կրկնութեան ձևի ներքև. այսինքն է, դիտելով որ գրուածիս Գ
գլխու 10 և հետևեալ համարներուն, արդէն համառօտած էր ստեղ-
ծագործութեան և Ադամէն սկսեալ մինչև Սողոմոն Երրայեցւոց նա-
խահարց արարուածները, Զ գլխու 40–55 համարներուն՝ վերստին
կը սկսի նկարագրել, մի առ մի, վեցօրեայ արարչութեան գործերը,
բայց բոլորովին նոր և ընդարձակ պարագաներով: Երրորդ օրուան
գործոց մէջ՝ նշանաւոր է այս յայտարարութիւնս, թէ ծովն՝ աշխար-
հիս $^1/_7$ մասը գրաւած է, իսկ ցամաքն՝ $^6/_7$ մասը: Նշանաւոր է մա-
նաւանդ, հինգերորդ օրուան գործոց մէջ, բեհեմովթ ցամաքային և
Լեվիաթան՝ ծովային սոսկալիթխար գազանաց մասին աւանդուածն:
Այս երկու կէտերս իսկ՝ հայերէն խմբագրութեան մէջ կը պակսին:
Լատինն՝ փոխանակ Բեհեմովթի՝ ունի վիրհարի կով Եւովքայ, սա-
կայն այս՝ կամ մեկնողական յաւելուած մ'ըլլալու է յիշեալ անուան,
և կամ պարզ գրչութեան վրիպակ մի, վասն զի բաց ի միւս թարգ-
մանութիւններէ՝ Բարուքայ Յայտնութեան մէջ ևս (29, 4) Բեհեմովթ
գրուած է:

Ա.յս անուամբս, որ ծագմամբ զուտ եբրայական է, մեկնիչներէն ոմանք՝ ընդհանուր առմամբ՝ զՂոկս չորքոտանեաց կը հասկանան, իսկ այլք՝ կը մասնաւորեն ի փիղ: Ձինչ և իցէ, զմեզ հետաքրքրողն ոչ այնքան անունն է, որքան ազրիւրն՝ ուսկէ յառաջ եկած է անունս: Ի. Կապիչ՝ Սաղմոսի Ծ գլխու՝ 10 համարը, ըստ եբրայական բնագրին մէջ բերելով, կ՚ըսէ, թէ բարուներք[1] թարգմանած են զայն Բեհեմովթ ի վերայ հազար լերանց, որ կը մօտենայ անվաւեր գրքիս Ձ գլխու 51 համարի այս խօսքերուս. «Et dedisti Behemoth... ut inhabitet in ea (terra), ubi sunt montes mille»: Մենք ընդունելով հանդերձ տեղւոյս զանազանութիւնը, սակայն և այնպէս աւելի հաւանական կը համարինք զայն ուղղակի Յոբայ Խ գլխու 10 և 15 համարներուն վերայ յերիւրուած ընդունել, ուր ըսուած է այսպէս. «Ձի գազանք իբրև զարջառ խոտ ձարակին. և հասեալ ի վերայ առատպար լերին, արար խնդութիւն չորքոտանեաց ի տարտարոսն», քան թէ Սաղմոսի յիշեալ տեղւոյն վերայ, ուր ըստ Եօթանասնից բան մ՚անգամ չկայ նկատմամբ Բեհեմովթի:

Եւ ստուգիւ, Վարդան իւր Ագաթածոց մեկնուբեան հետևեալ տեղւովը կը պարզէ մեր ասածն, ըսելով. «Ի Յոբն՝ զԼեւիաթեայն ասէ սկիզբն արարածոց Ջրայնոց, զոր ասեն մի է, և պատեալ է զամենայն երկիր, զոտն մօտ եղեալ գլխոյն. և պորտովն՝ ընդդէմ կայ անհուն յորձանացն ովկիանոսի. այնչափ թողացուցանէ զՂուրն ի վեր, մինչև բաւական զոլ ծածկել զիւր մարմինն, և զայլն արգելու, զի մի կլանիցէ զաշխարհ: Ագաթ երկոտ ասեն (գազանս), և թէ փոխեն զերեսաս. այս չէ նման»: Վարդան լուած է ուղղակի յիշել այս տեղ իւր բնագիրը, սակայն իւր յիշեալ Մեկնուբեան բանիցը խօսելով Եօթանասնից վերայ, կ՚ըսէ. «Իսկ Աբգար արքայ և Թադէոս առաքեալ բերին զգրեանն յԵրուսաղեմէ, և հաւատացեալ Եբրայեցիք որ թարգմանեցին յասորի գիր և ի լեզու, յայն թարգմանուբեան այսպէս կայ. Ի սկզբանէ արար Աստուած զերկինի և զերկիր: Եւ այս գեղեցիկ է, զի ցուցանէ թէ յոչէից արար»:

Արդ, Վարդանայ առաջին տեղին՝ եթէ հին ասորի թարգմանութենէն առած համարինք և եթէ բառնականի մեկնութիւններէ, այս յայտնի է, որ Յոբայ գրքի վերայ մատնանիշ կ՚ընէ մեզ, և ոչ

1. Բարուներն Յոբանան կը համարի Բեհեմովթ իբրև մի միայն գազան, որ կը նստի հազար լերանց վրայ, որք կը մատակարարեն անոր արօտ ի հարկէ:

թէ Սաղմոսին: Վարդանայ այս խօսքերս. «Այլք երկու ասեն, և թէ փոխեն զիրեարս» հաւատարազօրեն են Յոբայ մէջ բերուած տեղւոյն. «Զի գազանք իրրև արջառ խոտ ճարակին» բացատրութեանը, ինչպէս և վերջնոյն յոքնակի գազանք բացատրութիւնն այլ՝ նոյնանիշ է Եզրի գրոց (Զ. 51) Բեհեմոթ և Լեվիաթան անուանց: Միակ դիտելու կէտն այս է, որ Յոբայ քով «գազանք», այսինքն է, Բեհեմոթ և Լեվիաթան, զուգաբար կամ իրրև մի և նոյն նկարագրուած են, և մանաւանդ անմարմին Բելիարայ հետ նոյնացուած, համաձայն Վարդանայ՝ «Մի է, և պատեալ զամենայն երկիր» բացատրութեանը, որ չրային էութիւնը կը յիշեցնէ մեզ, պատեալ զցամաքաւ հողագընդոյս: Ուստի, եթէ բարունեայ Յոբանանու՝ այս կրկին անուանքը Յոբայ յիշեալ տեղւոյն վերայ ըրած մեկնութենէ մի առաջին անգամ ծագած համարինք, այն ժամանակ Սաղաթիելէն աւելի վերջ եկող և կապալիատիկական ուսմանց տեղեակ մէկուն, այն է՝ յոյն խմբագրին ընծայելի է:

Ռ. Կապիչ՝ դիտելով, որ Դ Եզրի Զ գլխու 56 և յաջորդ համարներն, ուր Հրէաք՝ Ադամայ բուն սերունդներ և ժառանգներ կ'աւանդուին, իսկ հեթանոսք «չեն ինչ և յոչինչ համարեալ», նմանութիւն ունին նախընթաց տեսլեան վերջաբանին հետ, եզրակացոյց, թէ Զ գլխու 35–36 համարներն ևս՝ Եզրայ սկզբնագրին անկ են, և ոչ թէ յոյն խմբագրութեան: Սակայն, մենք նկատելով, որ այդ համարներն՝ ոչ մի էական կապ չունին Կապիչէն իրրև բաւական փաստ մէջ բերուած համարներուն հետ, որոնք, ըստ մեզ, աւելի նախընթաց տեսլեան կը վերաբերին, հաւանօրէն յոյն խմբագրողի կողմէն ներմուծուած կը համարինք, բարունեայ վերոյիշեալ երկու աւանդութիւնները հաղորդելու և անկէց Ադամին և հրեական ազգին՝ յաւտիս կրած նեղութեանց և անդին պատրաստեալ բարութեանց անցնելու նպատակաւ: Եւ իրօք այս բանիս յայտնի ապացոյց են՝ նախ 56 համարի. «Զայս ասացի առաջի քո», և այլ խօսքերն, որոնք ուղղակի Ե գլխու 23–30 համարները կը յարաբերեն, և ոչ թէ Զ գլխու 35–55 համարներն: Ռ. դիտել կու տանք, որ այս համարներս՝ բնաւ նիւթ եղած չեն հրեշտակապետին ձեռքով յետոյ տրուած մեկնութիւններուն, այլ ընդհակառակն, ինչպէս այլուր Սաղաթիելի առանձնախօսութեանց մէջ, առ Աստուած ուղղեալ հարցերուն՝ այսպէս այլ այս տեսլեանս 56–59 համարներուն չօշափուած նիւթերուն վերայ կը դառնան Ուրիէլի մեկնութիւններն և ըրած յայտնութիւնքն:

Ի գլխու 1–25 համարներն, ուր կը ձգուին աշխարհիս կործանման վերաբերեալ գործողութեանց հիմունքն, Ուրիէլ երրորդ անգամ կու գայ ի հանդէս՝ լուծելու Սաղաթիէլի այն դժուարութիւնները, որոնք Դ գլխու 1–26 համարներուն անլուծանելի թողուած են, և ե գլխու 31–40 համարներուն՝ վհճաբանութեամբ աւելի խըրթնացած: Նախ և առաջ, 12 համարին մէջ, ամենահամառօտ մեկնութիւն մի տրուած է Ուրիէլի կողմէն՝ 3–9 համարներուն՝ այլաբանօրէն մէջ բերուած ծովու նեղուցին և քաղաքը հանող նրբուղւոյն. իսկ, 14 համարներուն, նորէն կը խօսուի նոյն նիւթին վերայ, բայց ընդարձակելով օրինակներով անոնց միտքը. այսինքն է՝ կը բաղդատուի այս անգամ ևերկայս՝ = αἴων οὗτος ծովանեղուցի մի և նրբուղւոյ հետ, որ լի է վշտօք և վտանգօք, և հանդերձեալն = αἰων ἐκεῖνος ընդարձակ ծովու և երանաւէտ քաղաքին հետ, յորս հասնելու համար՝ հարկ է անցնել այդ նեղուցէն և նրբուղիէն, այն է՝ աշխարհիս նեղութիւններէն: Այս աշխարհս՝ Ադամայ և անոր սերընդոց համար ըրած էր Աստուած. իսկ որովհետև Ադամ և Իսրայէլ չպահեցին Աստուծոյ օրէնքն և պատուիրանքը՝ մեղանչելով, ուրեմն անդին պատրաստուած բարութեանցը հասնելու համար՝ պէտք է, որ այս տեղ նեղուին և վշտակրին:

Հատուածիս գէթ առաջին մասն՝ հաւանօրէն եբրայական սկըզբնագրին վերաբերելի է, զի այդ լեզուով եղած կանոնական գրուածոց իսկ յատուկ է, վերջին ըսելիքը՝ յառաջագոյն յիշատակել, յոյն մտածութենէ և տրամաբանութենէ օտար է այս ձևս. բայց թէ ամբողջն ևս Սաղաթիէլի գրչէն եղած է արդեօք և միայն եբրայական ժողովուրդը սրտապնդելու նպատակաւ, թէ ընդհակառակն՝ ամէն մարդու համար է և քրիստոնէական սկզբանց թելադրութեամբ. ահաւասիկ լուծանելի կնճիռն:

Ֆոլկմար՝ վերջին ընդհանուր ձկտումը կը նկատէ հատուածոյս մէջ. իսկ Ռ. Կապիչ՝ միայն Իսրայելացւոց մասին գրուած կը համարի զայն, դիտելով, որ 17–18 համարներուն եղած հարցմանը պատասխանի մ'է այն, ուր Սաղաթիէլ՝ Իսրայելի համար կ'ըսէ առ Տէր. « Ecce disposuisti in lege tua — spatiosa non videbunt », և կը յաւելու, թէ նախընթացաբար Իսրայելի՝ և ոչ թէ հեթանոսաց համար ըսուեցաւ, թէ են ժառանգ հանդերձեալ աշխարհին:

Սակայն, ըստ իս, Կապիչի ենթադրութիւնն ուղիղ չէ, վասն զի՝ նախ որ Ուրիէլի կողմէն տրուած մեկնութիւնն՝ է գլխու 17–18 համարներուն պատասխանի մի չէ, այլ 2 գլխու 56–59 համարներուն

եղած խորհրդածութեանց, ուր Իսրայելացիք և հեթանոսք հասարակաբար նկատուած են Աստուծոյ օրինաց և դատաստանին առջև: Բ. Վերոյիշեալ նրբուղղոյ և այլ օրինակներն՝ ուղղակի յարաբերութիւն են Մատթէոսի Ե գլխու 13–14 համարներու՝ «Մտէք ընդ նեղ դուռն» և այլ խօսքերուն, որք հասարակաբար առ ամենայն հաւատացեալս ուղղեալ են ի Քրիստոսէ: Գ. Եթէ ուշի ուշով դիտելու ըլլայ կապին՝ պիտի տեսնէ, որ Ե գլխու 21 համարէն վերջ՝ ինչպէս Սաղաթիէլի ընծայուած հարցերն, այսպէս ևս Ուրիէլի պատասխանիքն՝ երթալով հետ գնետ կ'ընդհանրանան և մարդկային անհատները կը չօշափեն, այնպիսի պարագաներով, զորս կարելի չէ բացառութեամբ միայն Սաղաթիէլի կամ նորա սկզբնագրին իբրև յատուկ մի բան համարել. այլ յոյն խմբագիրն ևս ունեցել է իւր յատուկ դերը, քրիստոնէական հոգւով ընդարձակելով՝ ի սկզբան Հրէից մասին միայն և համաւօտաբար իւր դիմաց ունեցած եբրայական սկզբնագրի յիշեալ տեղեաց սահմանները: Ստուգիւ, այսպիսի մի եղելութեան յայտնի ապացոյց համարելի է և այս տեսլեանս առվորականէն աւելի ունեցած ընդարձակութիւնը:

Նոյն գլխոյ 26–31 համարներն, որք Ե գլխու 1–13 համարներու՝ Ուրիէլի կողմէն աշխարհիս կատարածի մասին տրուած նշանաց մեկնութեան՝ «Ահա եկեսցէ ժամանակ, յորում եղիցին նշանք, որ յառաջագոյն ասացաւ քեզ» սկնարկութեամբ կը սկսին, բոլորովին տարբեր բնոյթ ունին նախընթաց միւս համարներու պարունակութենէն. այսինքն է, հոն կը ծանուցուի նախ սուրբ քաղաքին և հարսին յայտնուիլն, որ երկրիս տակը ծածկուած էր. ք. անոնց ամենուն, — որոնք զերծան յիշեալ նշաններով կատարուած չարիքներէն, — աքանչելահրաշ տեսութեան արժանանալն. գ. Մեսիայի՝ իւր ընտրելոց հետ յայտնուիլն և զանոնք ուրախացնելը, որք ժուժկալեցին առ ի համբերութեան, 400 տարի. այսպէս և 400 տարիներէն վերջ՝ Աստուածորդւոյն Մեսիայի և անոր հետ կենդանի ճնացողներուն մեռնիլն, աշխարհիս՝ իւր սկզբնաւորութեան եօթներորդ օրուան լռութեան վերադառնալն, առ ի չգոյէ մարդկան, և հուսկ ուրեմն մեռելոց յարութիւնն և վերջին դատաստանն:

Արդ, Սաղաթիէլի, Զ գլխու 56–59 համարներում, ըրած հարցմանց, այնքան անկապ, այսպիսի յայտնութեանց հանդէպ՝ կը ստիպուիմք հարցնել, թէ կարող են արդեօք դոքա սկզբնագրին իբրև հարազատ մասունք համարուիլ, թէ ընդհակառակն յոյն խմբագրին: Նկատմամբ վերջնոյս՝ այս հարցս ընդ առաջ կ'ելնէ ինձ. Եթէ յայտ-

նուելիք քաղաքն՝ ստուգիւ վերինն Երուսաղէմ է, ինչու համար ուրեմն ներկայապէս հողին տակ ծածկուած կը յայտարարէ զայն՝ կարծեցեալ հրեշտակն. ինչ պատճառաւ Մեսիայի թագաւորութենէ 400 տարի յառաջ յայտնուիլ կը տրուի անոր, և այնքան հարևանցի կերպով: Իսկ եթէ Սաղաթիելին՝ ապա ինչպէս մեկնենք անոր այս մասին մինչև այս տեղ պահած խոր լռութիւնը, կամ մանաւանդ Ե գլխու 52 համարին մէջ իբրև նոր ինչ յիշատակուիլն՝ «չինեալ քաղաքն» բացատրութեամբ, որ նկատուած է Եզրի և անոր նմանեաց համար պատրաստուած բարեաց իբրև հանդիսավայր մի:

Կապիչի կարծեօք՝ անկարելի է, որ գրոց հեղինակն՝ այդ քաղաքով հասկնար թէ երկնային Երուսաղէմը և թէ երկրաւորը միանգամայն. զի այս՝ թէ հակասական է և թէ հակառակ եբրայական դպրութեան, ուր, ամէն անգամ՝ երբ խօսքն երկնային Երուսաղեմի վերայ է, միշտ գերաշխարհիկ և անանցական յայտնութիւններ կը տրուին անոր: Այսպէս է Բարուքայ Յայտնութեան 4 համարում. Դ Եզրի՝ ծ գլխու 51–54 համարներուն, Յովհաննու Յայտնութեան (Spitta J²) և Ենովքայ գրոց մէջ: Հետևաբար, 26 համարի ամբողջացուցիչ այս խօսքերուս. « Ostendetur quæ nunc subducitur terra» իմաստն իսկ՝ այս է, թէ Երուսաղէմ՝ իւր ծածկութենէ յայտնուելէն վերջ, պիտի լինի անանցական. ուստի այս գաղափարիս համաձայն՝ զայն ներկայացնող յատկութիւնն իսկ՝ ոչ թէ Եզրի, այլ վերատին խմբագրողէն ներմուծուած է: Այսպէս է նաև 27 համարն, որ արդէն նախընթաց տեսլեան մէջ աւանդածին կրկնութիւն է:

Գիտնականիս մէջ բերած փաստերն և անոնցմէ հանած եզրակացութիւնը՝ կարելի չէ ընդունել իբրև բացարձակ ճշմարտութիւններ, այնու մանաւանդ, որ հրէից նախաքրիստոսեան գրոց կամ հին կտակարանին մէջ՝ երբէք երկնային Երուսաղեմի հանդիպած չենք. զի անոնց անդրերկրային ժառանգութիւնն՝ կը կոչուէր կամ երկիր կենդանեաց, կամ գոգն Աբրահամու, և կամ դրախտ ամենայն բարութեանց: Այսպէս նաև Մեսիայի հոգևոր և յաւիտենական թագաւորութեան գաղափարն՝ գրեթէ միշտ երկրաւոր Երուսաղեմի և անոր փառաւորութիւններուն հետ անբաժան և զուգաբար նկարագրուած է՝ բոլոր մարգարէութեանց մէջ. որով և թանձրամիտ Հրեայք յաճախ նիւթականը և զգալին միայն ի նկատի կ'առնուին: Քրիստոս Տէրն մեր՝ առաջինն եղաւ, որ այս չփոթ գաղափարիս դէմ մաքառեցաւ, գասելով և դտելով երկնային արքայութեան և վայելից գաղտնիքը՝ յերկրաւորէն, որուն ապա պայծառ քա-

րոզ հանդիսացան Առաքեալք և Ս. Ստեփանոս՝ իբր հրաշալի առե-
նախօսութեամբ։

Զարմանալի է, որ գաղափարաց այսպիսի մեծ յեղաշրջութենէ
վերջ իսկ՝ քրիստոնէական թուականին առաջին դարուն գրուած
Յայտնութիւնքն առհասարակ, որոնք հին Կտակարանի հետևողու-
թեամբ յօրինուեցան, դարձեալ հոգևոր և երկնային երուսաղէմը՝
երկրաւորին հետ զուգելով կը ներկայացնեն մեզ։ Բարուքայ Յայտ-
նութեան՝ յիշեալ տեղւոյն մէջ ըսուած է. «Illa est quæ revelabi-
tur apud me, quæ hic præparata fuit, ex quo cogitavi *ut fa-*
cerem paradisum... sublata est ab eo ut etiam paradisum».
Յովհ. Յայտնութեան մէջ (ԻԱ, 1–2). «*Եւ տեսի երկին նոր և երկիր նոր... և զքաղաքն սուրբ՝ զնորն Երուսաղէմ, զի իջանէր յԱստուծոյ և յերկնից (իմա յերկիր), զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն՝ առն իւրոյ։ Եւ լսեայ ձայն յերկնից՝ որ ասէր. Ահա տաճիկ խորանն Աստուծոյ՝ ի մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա*»։

Դիտելու ենք, որ ինչպէս Յովհ. Յայտնութեան սոյն տեղւոյս
վերջին բացատրութիւնն՝ նման է Բարուքայ Յայտնուհքեան 4 հատ-
ցի. «Etiam Moysi ostendi eam (urbem) quando ostendi ei *ima-*
ginem tabernaculi» *բացատրութեան, այսպէս ևս Եզրի 26 հատ-*
ցի. «Et apparebit sponsa[1], et apparescens civitas et osten-
detur, quæ nunc subducitur terra[2]» *բացատրութիւնն՝ նման է*
Յովհ. Յայտնութեան 2 հատցին։ Երկաքանչիւրին մէջ իսկ, Աստու-
ծոյ քաղաքն՝ զարդարուած և պատրաստուած հարսի նմանեցուցուած
է. երկուքին մէջ ևս երկնային է՝ բայց երկրիս վերայ և մարդկանց
մէջ կը բնակի. երկաքանչիւրին մէջ իսկ այդ քաղաքն՝ իբրև այս
աշխարհիս վերայ Քրիստոսի հաստատած զգալի թագաւորութիւն,
կամ յաւ ևս՝ Եկեղեցի[3] նկատուած է, որուն վախճանը սակայն երկ-
նային է և յաւիտենական։ Ասոր, ոչ հակասական է և ոչ այլ հա-
կառակ եբրայական աւանդութեան, որ երկնաւորն և իմանալին՝

1. Այս բառս կը պակսի հայերէն խմբագրութեան մէջ, բայց արաբականն ունի coronatam.

2. Ասորին չունի այս բառս, այլ nunc մակբայն, որ նախորդ subducitur բային հետ՝ հայերէն «Որ այժմ ոչ երևի» բացատրութեան յաւ կը համաձայնի։

3. Արաբական խմբագրութիւնն, որ ուղղափառն է, այս մտքով կը ներկայացնէ յայտնուելիք քաղաքը, ասելով (26 հատ.). «Et cognosces coronatam (sponsam) *quæ existit*, et congregabitur *quod dispersum et perditum erat*, et conspicietur fundus».

երկրաւոր և գգալի պատկերօք նկարագրուին. հետևաբար, այս կողմանէ արգելք մի չկայ, որ զայն նկարագրող հատուածքն ևս Սաղթիելի ըլլան՝ քան թէ յոյն խմբագրին։

Բայց դժուարութեան մեծագոյն կնճիռն՝ կայացած է, ըստ իս, անվաւեր գրուածիս՝ նոր Կտակարանին և ի մասնաւորի Յովհ. Յայտնութեան հետ ունեցած սերտ առնչութեան և նմանութեանց մէջ, որ Եզրէն վերջ գրուած կը համարուի։ Այո՛, Եզրի 32 համարն, ուր երկիր և ծով կու տան իրենց մեռեալները, բառ առ բառ նոյն է գրեթէ Յայտնութեան յիշեալ գլխու 13 համարին հետ. և 36 համարն, ուր չարք կը պատժուին անշէջ հրով և բարիք կը վարձատրուին՝ Քրիստոսի հետ թագաւորելով, նման է Յայտնութեան 14 համարին։ Այսպէս ևս Եզրի 39–42 համարներն՝ նման են Յայտնութեան 23–26 համարներուն։ Միով բանիւ՝ քրիստոնէական գաղափարաց փոխանակութիւնն՝ առանց երկբայութեան է նաև այս տեղեաց մէջ, եթէ փոխառուն կեղծ Եզրն եղած համարինք և ոչ թէ Յայտնութեան հեղինակը։ Բարուքայ Յայտնութեան Գ գլխու այս տեղիս. «Et sæculum redibit ad silentium pristinum, et recipiet se multitudo animarum, et natura hominum iterum non nominabitur», որ գրեթէ բառ առ բառ կը գտնուի Եզրի է գլխու 30 համարում[1], կը թուի հաստատել մեր եզրակացութիւնը. այս ինքն թէ՝ այս գլուխս այլայլուած է նորանոր յաւելուածներով, և յայտ իրաւացի է Կապիչի ենթադրութիւնն։ Սակայն պէտք է ըսել և զայս, թէ նոյն իսկ Յովհաննու և Բարուքայ Յայտնութեանց հետ ունեցած աղերսներու մէջ՝ յայտնապէս կը տեսնուի նոյնանիւթ նիւթոց տարբեր կարգաբանութիւն մի երկուստեք. այսինքն է, Յովհ. Յայտ. Եզրաս. Բարուքայ

1. Բայց նորանոր պարագայիւք, այսպէս. «Revelabitur filius meus *Jesus* cum his, qui cum eo, et iucundabit qui relicti sunt annis quadrigentis. — Et erit post annos et morietur filius meus Christus et omnes qui spiramentum habent homines. — Et convertibitur sæculum in *antiquam* silentium, *diebus septem*, *sicut in primis* initiis, ita ut nemo derelinquatur».

Յիսուս անուանն՝ միայն լատին թարգմանութեան մէջ կը գտնուի, զոր Կապիչ շատ վերջ եղած յոռի սրբագրութեան մ'արդիւնք կը համարի. սակայն Ս. Ամբրոսիոս (Մեկն. Ղուկ. Ա. 60) նոյնպէս ունէր՝ իբր առջև եղած յոյն կամ լատին թարգմանութեան մէջ, զի կը գրէ բառ առ բառ. Revelabitur enim, inquit (Ezra), filius meus *Jesus*». Diebus septem, նոր պարագայն՝ յոյն խմբագրէն յաւելեալ է, Բարուքայ յիշեալ տեղւոյն վերայ, զոր առորին ևս հաւատարմաբար պահած է։ Հայերէնի մէջ ամբողջ նախադասութիւնս կը պակսի. արաբացին կը գրէ՝ Et mundus erit silens quietus, qualis erat *die septimo*.

Հաննու և Բարուքայ քով, կը պատմուի նախ մեղաց և մոլորութեան՝ արդարոց վերայ գործած բռնութիւնն, յետոյ Քրիստոսի յայտնութիւնն և յաղթանակն, հուսկ ուրեմն՝ անոր արքայութեան և սուրբ քաղաքին՝ մարդկանց մէջ երևիլն: Իսկ Եզրի յիշեալ գլխուն՝ բոլորովին ասոր հակառակ կ'ընթանայ. այսինքն է, նախ քաղաքին և հարսին յայտնութիւնն, յետոյ Մեսիային՝ իր ընտրելոց հետ երկրիս վերայ 400 տարի թագաւորելն և մեռնիլն, ապա աշխարհիս՝ իր սկզբնական լռութեան և ունայնութեան դառնալն, և հուսկ ուրեմն՝ Մեսիայի վերջին գալուստն և յաւիտենական թագաւորութիւնն: Արդ, աստի կարեմք հետևցնել, թէ սուրբ քաղաքին և հարսին յայտնութիւնն, այսպէս նաև վերջին կէտերը շօշափող հատուածներն՝ յետոյ ուրեմն Յովհաննու և Բարուքայ Յայտնութեանց վերայ յերիւրուած են, որոնք հին բնագրի պէտ այս գլխոյս մէջ չկային: Իսկ 400 ամեայ[1] թագաւորութեան (որ ըստ իս ուրիշ բան չէ, բայց եթէ դանիէլեան եօթներորդաց գումարումն) վերաբերեալ հատուածքն՝ բուն Սաղաթիէլի են, և յաղորդ գլխոց մէջ աւելի ևս բարգաւճուած պիտի տեսնենք՝ այրի կնոջ կամ մայր Սիոնի տեսլեամբը:

Ի գլխու 32 համարն, յորում կայանի հոգւոց՝ ի կեանս վերադարձի մասին կը խօսուի. «Et promptuaria reddent quæ eis commendatæ sunt animæ», *և այլն, Կապիչի կարծիքով՝ յոյն խմբագրողէն ներմուծուած է, և ոչ թէ Սաղաթիէլի գրչէն: Սուտիս, այսպիսի մի գաղափարի արտայայտութիւնն աւելի քրիստոնէական է՝ ըստ ինքեան, քան թէ հրէական, վասն զի խօսքը պարզ հոգւոց մասին է, զոր բաժանաբար առած է, հեղինակն, երկրէս և անոր ծոցն ամփոփուած մարմիններէն: Եղեկիէլի քով եղած մեռելոց յարու-*

1. *Ամբի թարգմանութիւնն՝ փոխանակ 400ի՝* triginta = երեսուն *կը պրէ. իսկ արաբականին մէջ՝* mille annos (1000) *գրուած է, համաձայն Յովհաննու Յայտնութեան ի գլխուս աւանդուածին, որով հնարեցաւ Հազարամեայ* (Millenarisme) *վարդապետութիւնն, փրկչական թուականի Ա. դարէն՝ սկսեալ, կերինթոսի ձեռքով:*

Սակայն Հրէից մէջ շատ աւելի հին է դոկտրինա կամ Մեսիայի երկրիս վերայ թագաւորութեան աւանդութիւնն և դասանանքը. մանաւանդ թէ կարծելի իսկ է, թէ Յովհաննէս ինքնին այդ աւանդութիւններէն օժանդակուած է, փոխելով սակայն մարքիաւորը՝ հոգեկան թագաւորութեան, ինչպէս յայտնի կը տեսնուի հետևեալ տեղերէն: Եւ յիրաւի, նա ժէ գլխուս, Բռնէ Ասոտծոյ՝ Արմաքեդոնի քով, մեզաց և մոլորութեան դէմ տարած յաղթութիւնը պատմելէն վերջ, ի գլխոյն մէջ կը պրէ. «Ընտրեալ զհօտն չարչարելոց վասն Յիսուսի... և կացին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ»: Եւ ՃԻ համարուն՝ կը յաւելու. «Եւ յետ այնորիկ է ՀԵՏԷՑ ԿՈՒ ԵԿԱՑ, մինչև ի կատարել հազար ամին»:

թեան նկարագիրն՝ ցոյց կու տայ մեզ, թէ Հրէից իսկ ծանօթ էր յարութեան գաղափարն. սակայն այս տեղ յիշուած հանգամանքները՝ բոլորովին կը տարբերին մերինէն. այսինքն է, Եզեկիելի քով՝ ոչ կայանք կը յիշուին և ոչ այլ հոգիք, այլ չուննչն աստուածային՝ որ չնչելով ի չորից հողմոց՝ կը կենդանացնէ ցամաքեալ ոսկրատիքը: Հատուածիս վերձաւոր աղերսը կը գտնենք Մատ. Իէ. 52, Ղուկ. ԺԲ. 27. Ռ. Թես. Գ. 13, Ննովքայ գրոց 22 և Բարուքայ Յայտնութեան ԺԱ, 4, 49 և 51 տեղեաց հետ: Հատուածիս պակասութիւնն իսկ, հայերէն խմբագրութեան մէջ, կարծէք թէ աւելի կատածելի կ'ընէ անոր հնութիւնը: Բայց որովհետև մես թարգմանութեանց մէջ ուրիշ երկու տեղ ևս կրկնուած է նոյնը, տարբեր պատգամներով, որոց՝ հայերէնն իսկ իւրք, – ինչպէս կանխաւ տեսանք, – կը համաձայնի. ուստի դէթ առաջին տեղին՝ կարէ գրոցս սկզբնագրին յատուկ և հին լինել: 37–40 համարներն, ուր զատուելով մեղաւորք արդարներէն՝ կ'երթան ի հուրն յաւիտենական, իսկ արդարքն՝ ի կեանս, անտարակոյս փոխառութիւնք են Մատթ. Իե գլխու 34–41 համարներուն: Այս բանս՝ հայերէն խմբագրութենէն աւելի որոշ կը տեսնուի, ուր աչքի զարնող նմանութեամբ ընդարձակուած են:

Նոյն գլխու 75 համարին մէջ, — բարեաց և չարաց հատուցման վերաբերեալ նկարագրէն վերջ, — հետևեալ նշանաւոր հարցն ուղղեալ է Եզր Սաղաթիէլի կողմէն առ Տէր, այսինքն թէ՝ հոգիք մարմնէն անջատուելէն վերջ՝ արդեօք ջուրկ յերանութենէ պիտի պահուին մինչև ցժամանակ հատարակաց յարութեան, թէ ընդհակառակն պիտի մտնեն իսկոյն ի փառս, կամ ի տանջանս: Ա. որ պատասխանուած է այսպէս. «Դու մի՛ հաշուեր զքեզ ընդ մահապատն, զի՛ քեզ և նմանեաց քոց պատրաստեալ է դանձն՝ ի բարեօք, որ ոչ յայտնեացին քեզ մինչև ի վախձան ժամանակաց»: Ա. յս պատասխանիս՝ կը պատչաճի քալ Եզրի ըրած հարցի առաջին նախադասութեան: Սակայն յաջորդ համարներուն, Ուրիէլ կամ հրեշտակն Տեառն, իբրև թէ նախնաբար բան մ'ըսած չըլլար բնաւ, կը յարէ. «Արի այսուհետև վասն որոց հարցերդ», և կը յայտարարէ այս անգամ, թէ հոգին՝ հատարակարար մարմնէն անջատուելէն անմիջապէս վերջը՝ կը դառնայ ըստ ինքեան զինքն արարչագործող Հատուծոյն քով զնա փառաւորելու համար. բայց ի մանաւանդ այն հոգիներն, որոնք ամպարշտելով չպահեցին Հատուծոյ պատուիրանները և զանոնք պահողները անարգեցին, պիտի չմտնեն ի տեղի

հանգստեան, այլ վաղվաղակի պիտի մատնուին տանջանաց, եօթնեակ ճանապարհաւ. իսկ որոնք ամբծութեամբ ծառայեցին Աստուծոյ, մեծաւ ցնծութեամբ պիտի վայելեն Բարձրելոյն փառքը, որ զիրենք իւր քով առաւ, և պիտի ուրախանան ի հանգստեան, եօթնեւրանեան ճանապարհաւ:

Այս տեղ մեծ զանազանութիւն կայ, մանաւանդ հակառութիւն, մէկ կողմէն՝ Եզրի հարցման առաջին նախադասութեան և անոր վերաբերեալ պատասխանուոյն, իսկ միւս կողմէն այլ՝ երկրորդ նախադասութեան և անոր տրուած վերջին պատասխանուոյն մէջ. վասն զի յառաջին դէպքում՝ իբրև որոշ սկզբունք դրուած է, թէ նոյն իսկ Եզրի նման պատուիրանապահաց համար յետ մահուան անմիջապէս հատուցումն չկայ, այլ ի ժամ հասարակաց յարութեան, և այս համաձայն է եբրայական նախաքրիստոսեան ուսանդութեան [1]: Իսկ երկրորդին մէջ, ընդհակառակն, արդարք անմիջապէս կը տեսնեն Աստուծոյ փառքը և կ'ուրախանան եօթն երանութեամբ, և մեղաւորք կը տանջուին եօթն վայիւք: Այս վարդապետութիւնս՝ ոչ Եզրի և ոչ այլ անկէց դարեր վերջը ապրող Սաղաթիելին կամ ուրիշ ո՛ր և է Հրէի մի, այլ Քրիստոսէ վերջ ապրող մէկուն, այն է՝ յոյն խրճիթաբնակին է, որ հին դնելով իրեն, հաւանօրէն, Ղուկասու և Պետրոսի յիշեալ տեղիքը, ապա Պաղեստինու Հրէից նորադարձ եկեղեցւոյ քրիստոնէական վարդապետութեան համաձայն բարգաւաճած է գայնս: Ցայտ է թէ մասնաւոր ձկտմամբ և նպատակաւ չանացեր է անծանօթ գրիչն՝ հրէական հին ուսանդութիւնը՝ նորին հետ միացնել, սակայն անաչառ քննադատութեան կանոնաց համաձայն՝ մենք մեծ խտրոց մի կը տեսնենք այդ և յարակից հատուածոց մէջ: Այո՛, այդ

1. Ըստ որում Աբրամայ յանցանաք կամ սկզբնական մեղօք վարակուած նահապետաց և արդարոց հոգիք իսկ, ինչպէս Սահակայ և Յակոբայ, պէտք էին սպասել (ի դռն Աբրահամու) մինչև ցգալուստ Մեսիայի և վերանորոգութեան ապրիլեան: Այս ուսանդութիւնս յայտնապէս կը տեսնուի մեծաւան և Ղազարու առակէն իսկ, զոր պահած են մեզ Ղուկաս՝ ԺԶ գլխուս, իբրև օրինակ հանգստեան արդարոց և տանջանաց մեղաւորաց, նախ քան զկատարումն փրկագործութեան, և Պետրոս առաքեալ՝ Ա կաթոլիկեայց Թղթոյն Գ գլխուս, 19, բարեփոխելով զայն ընդարձակ առմամբ:

Արդարոց՝ ի դռն Աբրահամու ունեցած եօթն երանութեան և մեղաւորաց ի դժոխս կրելիք եօթն տանջանաց մասին իսկ հաւաքական մի ուսանդութիւն հին կտակարանին մէջ ինձ յայտնի չէ: Այլ կարեմ ասել, թէ եօթնեակն թիւն՝ առ Հրեայս բազմաւորական իմաստիւք ասելի գործածուած է, փոխաբերաբար. օրինակ հին. «Եօթն չարիք են ի սրտի նորա», այսինքն է՝ բազում:

հատուածներն իրենց բանապատօրէն ընդմիջելովը՝ բաժնած են 44 համարի՝ « Tibi solo autem ostendi hæc » *վերջին գատաստանի վերաբերեալ յայտնութեան վերջին խօսքը, 116րդ համարէն, ուր Եզր կը սկսի իւր նոր առանձնախօսութիւնը՝ համաձայն 34–38 համարներուն արտայայտուած գաղափարաց, և ոչ թէ 45–115 համարնեբուն աւանդուածին, որոնք անյարմար են և օտար նախընթացէն։*

100–103 *համարներուն՝ երկու նշանաւոր հարցեր յարուցուած են և լուծուած, Ուրիելի ձեռքով. այսինքն թէ՝ ննջեցեալ հոգւոց անջատմանէն վերջ՝ ե՞րբ օր ապատ ժամանակ պիտի տրուի,— նախքան իրենց Հանգստեան կամ տանջանաց կայաններըը մտնելը,— տեսնել ի կատարածի աշխարհիս՝ իրենց համար պատրաստուած երբ վայելքն և կամ տանջանքը. բ. թէ իւրաքանչիւր ոք՝ վերջին գատաստանին օրը՝ իւր բարի կամ չար գործոց համեմատ միայն պիտի գատուի, և թէ ազգականաց աղօթք և պաղատանք պիտի չօգնեն այնուհետև։*

Վարդապետութեանցս վերջինն՝ գուտ քրիստոնէական է՝ իւր ներկայ վիճակին մէջ. իսկ առաջնոյն՝ ուրիշ օրինակ չունինք երբայական աւանդութեան կամ եկեղեցական պատմութեան մէջ, բաց ի Ս. Կալիստրատոսի վկայաբանութենէն[1]*, ուր, ըստ հայկական թարգմանութեան, առաջին անգամ կը ներկայանայ մեզ Կայանադրաց վարդապետութիւնն։ Երօթևական թիւն՝ մատնանիշ կ՚ընէ Եզրի Է գլխու 31 համարի.* « Et erit post *dies septem* » *բացատրութիւնը. իսկ ճնացածն՝ սերտ կապ ունի նոյն գլխու* 80 *համարի.* « Hæc inspirationes (*հոգիք*) in habitationes non ingredientur, sed vagantes erunt a modo in cruciamentis » *մէկ տեղւոյն և 32 համարներուն հետ, և հաւանօրէն ըստ այնմ թարգաւաճուած։*

Տեսլեանս վերջին, այն է՝ Ը գլխու 63 – Թ գլ. 13 համարներն ևս նոր ներմուծութիւններ ըլլալու են. ահաւասիկ փաստերը։ Նախ որ 62 համարով կը կնքուին վերջին գատաստանի մասին՝ Ուրիելի ատ Եզր ըրած յայտնութիւնները, և կը հրամայուի անոր՝ վերջ դնել իւր հարցմանց, ըսելով. « Դադարեաց այսուհետև, և մի՛ ինչ հոգար վասն նոցա », *այսինքն է՝ կորուսելոց։ Ս.րդ, չնայելով այս խիստ որոշ պարագային՝ դարձեալ, 63 համարին մէջ, հետևեալ հարցն*

1. Տես Վրդ. Հ-Յ-Բ-Ն-Ի-Ն արբ., Վենետիկ 1874, հա. Ա. էջ 670–673։ Ս. Կալիստրատոսի քերթը գրուած այս անուանի վարդապետութիւնս՝ ժամանակ է որ հարազատ լինի, թէպետև կ՚ըսուի որոշակի, թէ նա յաւանդութենէ հաւտյն իւրոյ Ոնուֆրեէ լսած էր զայն, որ էր իբր թէ ժամանակակից Առաքելոց։

*ուղղուած է անոր կողմէն՝ առ Տէր. «Վասն այսորիկ յաձախեցեր ինձ գբազմոբթիւն ևշտևացն, և ոչ ասացեր ինձ՝ թէ երբ իցէ կամ յորո՞ւմ ժամանակի», որուն ապա իրրև պատասխանի կը տրուին այսպիսի նշաններ, օրինակի աղագաւ. «Խռովութիւնք ժողովրդոց, շարժմունք տերևաց հեթանոսաց», և այլն, համաձայն Մատթ. ԻԴ, 7. Մարկ. ԺԳ, 8. և Ղուկ ԻԱ, 10–11 տեղեաց: Բայց դիտելով որ գրուածիս Ե գլխու 2–10 համարներուն տրուած են արդէն պէտք եղած յայտնութիւնք այս մասին, և տրուած տարբեր պարագայիւք, ինչպէս կը ցուցնեն նաև նօտրագրեալ խօսքերն: Ոստի, եթէ հրէական ազգին՝ Ս. Գրոց մէջ յաճախ տեսնուած յամառութեան և կրկնաբանութեան արդիւնք մի չէ այս թախանձանքս, և չեմ այլ կարծեր որ լինի, այնուհետև կարեմք իրաւամբ հետևցնել, թէ յոյն խմբագրէն և դիտմամբ ներմուծուած են այդ հարցուպատասխանքն, մէկ կողմէն Սաղաթիէլի՝ Ե գլխուն ամանդած նշաններուն քրիստոնէական գոյն տալու, և միւս կողմէն այլ՝ յաւելլու այն մի քանի խրատները, ի գգուշութիւն և ի խրախոյս հաւատացեալ ընթերցողաց, որք հայերենի մէջ կը սկսին. «Բայց ասեմ քեզ համառօտիւք», և կ'աւարտին Մատթէոսի վերոյիշեալ գլխու 35 համարի համանման այս նախադասութեամբս. «Եւ ո՛չ ինչ ի ևոցանէ (այսինքն բանից իմոց) անցցէ, մինչև եղիցի դատաստան»: Թէ իրօք քրիստոնէական գոյն ունին այդ հատուածներն, բաւական է ընթեռնուլ. «Նենգութիւն առաջնորդաց, հալածանք քահանայից, խոտորումն ի սուրբ հաւատոց», և այլն, տողերը, որոնք բոլորովին անյարմար են Եզրի ժամանակի Հրէից կացութեան, և ուղղակի վերկչական թուականի առաջին դարերում ապրող և կրող եկեղեցւոյն կը վերաբերին: Բ. Այս հատուածս կը գտնուի նոյն իսկ Է–Ը դարում գրուած Ենովքայ, Դանիէլի և այլ տեսիլներու մէջ, ինչպէս ցոյց տուինք կանխաւ:

ՁՈՐՈՐԴ ՏԵՍԻԼՆ՝ մէկ կողմէն սերտ կերպով միացած կ'երևի Ը գլխու 16–18 համարներուն հետ՝ որ կը կանխէ Եզրի բերանը դրուած ընդարձակ աղօթքը, և կը կազմէ՝ ըստ իս՝ նախընթաց տեսլեան վերջաբանը, իսկ միւս կողմէն այլ Թ. գլխու 29–36 համարներուն հետ, որոնք են իրր նախաբան այս տեսլեանս: Եւ ստուգիւ, Սաղաթիէլ կ'ապաչէ այս տեղ զԱստուած՝ մանաւանդ կերպով իւր ազգին և Երուսաղեմի համար. «Ողորմեա՛ և առելի ևս քոյոց ժողովրդեանն, վասն որոյ ես սգամ... զի լուայ ես զանխայութիւն մեծ, որ առ յապային լինելոց է» (Երու-

սաղեմի)։ Եւ իրօք, տեսլեանս բովանդակ առարկայքն են Երուսաղէմ և ազգն Իսրայելի, որուն նախկին թշուառութիւնքը ուզած է հեղինակն նկարագրել՝ ի դէմս որդեկորոյս այրի մօր, իսկ ապագայ փառաւորութիւնն այլ՝ հաստատուն հիման վերայ շինուած և փառազարդեալ քաղաքի մի, ուր կը մատչին պատարագք Իսրայելին Աստուծոյ։

Այս տեսիլս՝ համեմատութեամբ նախընթացին՝ շատ աւելի միապաղաղ է, հետևաբար՝ և եկամուտ հատուածներէ ազատ կ'երևի, ըստ արտաքին երևութին. սակայն ըստ իրին կան նաև յայտմ պարագաներ, որոնք կասկածել կու տան մեզ գէթ, թէ նախընթաց տեսիլները գրողն՝ ըլլայ հեղինակ նաև սորա։ Ինչպէս կանխաւ ծանուցինք, տեսլեանս հանդիսավայրն՝ փոխադրուած է ի Պաղեստին, անմարդաբնակ և ծաղկալից դաշտի մի մէջ, ուր տեսանողն՝ երկնային տեսլեան արժանանալու համար, փոխանակ եօթնօրեայ պահեցողութեան՝ ձաշակևաւք ծաղկաց կը պատրաստէ զինքը։ Արդ, այս նոր օրինակ պարագաներս՝ պէս պէս ենթադրութեանց պատճառ տուին քննադատից՝ նաև աղբերաց նկատմամբ. ուստի վերը կախ թողած խնդիրն՝ ժամանակ է որ այժմ բոլորովին պարզենք։

Հիլգենֆելդի կարծիքով՝ ծաղիկներով կերակրուիլն ոչ այլ ինչ է, եթէ ոչ զգուշանալ ի կերակրոց։ Ֆօլկմար կը համարի, թէ որովհետև նոր յայտնութիւնն, որուն կը պատրաստուէր տեսանողն, էր ուրախալի, անոր համար պէտք չկար պահեցողութեան։

Սակայն, այս երկու կարծիքս ևս անբաւական են և անընդունելի. որովհետև մենք ուրիշ յայտնութիւններ և պատմական դէպքեր ևս կը ձանաչենք կանոնական գրոց, որոնք թէպէտև նոյնպէս ուրախալի են, սակայն և այնպէս տեսանողքն միշտ պահեցողութեամբ կը պատրաստուին անոր ընդունելութեանը. այս ընդհանուր սովորութիւն մ'է առ Հրեայս։ Այո՛, այսպէս կը գտնենք Դանիելի մարգարէութեան, Բարուքայ Յայտնութեան և Սամանեթայ պատմութեան մէջ։ Այսպէս կ'ընեն Սամսոնի ծնողքը (Դատ.), Իսրայելի ազատարարին ծննդեան աւետիսն առնելէն յառաջ. այսպէս կը պահեն Յուդիթ և Եսթեր. այսպէս մանաւանդ Քրիստոս Տէրն մեր, և ուրիշ շատեր։ Ծաղկաք կերակրուելու բնաւ օրինակ չունինք ի Ս. Գիրս։ Յովհ. Մկրտիչ իսկ՝ մարախ և մեղր կը ճաշակէր անապատին մէջ։ Իսկ անկանոն գրոց գալով՝ առաջին անգամ կը հանդիպինք Ելևով-

քայ և Ադամգրոց մէջ, և այն իսկ, ինչպէս տեսանք Ա. գլխում, բո-
լորովին տարբեր հանգամանքներով [1]:

Ո. Կապիչի կարծիքով՝ ծաղկամբ կերակրուելու բուն պատճառն
և նշանակութիւնը՝ որոնելու է կրօնական այն դրութեանց մէջ,
որոնք խաւարամած այս աշխարհիս և լուսաւոր երկնից
մէջ առկայացեալ բնազանցական հակադրութեանց վերայ հաստա-
տուած են, և այս կը գտնուի Եսաւեանց քով, որոց աւանդական
պատկերն անցաւ ապա, ըստ վկայութեան Եպիփանու, առ Եբիո-
նեանս, Գնոստիկեանս և հուսկ ուրեմն անապատական ուրիշ ճգնա-
տորաց: Արդ, Եսաէեանց սկզբունքով, — որ երկուռութեան կը տա-
նի, — երկրիս վերայ գտնուող ստեղծուածոց մէջ՝ ամենէն աւելի
բոյսերն, բայց ի մասնաւորի ծաղկունք, կը մօտենան երկնային
գոյացութեան, վասն զի նոքա աւելի կամ պակաս լուսանիւթով
կազմեալ են. հետևաբար, ասոնց ճաշակմամբ՝ լուսանիւթն թան-
դուզեալ կ'ընդմտանէ մարմնաւորութեան խորը. որով մարմինն՝ ազա-
տուելով իւր զգայական թանձր տպաւորութիւններէն՝ կը լինի ըն-
դունակ՝ ձկտելու դէպ ի լոյն, քան թէ լոկ պահօք, որ մարմ-
նական կարողութեանց հետ հոգեկանն ևս կարէ տկարացնել եր-
բեմն: Ցետոյ իւր խօսքը մերձեցնելով ուղղակի տեսլեանն հեղինա-
կին՝ կը յարէ գիտնականս. Յայտնի բան է, որ պահեցողութեամբ՝
մարմինն, որ անօթ է հոգւոյն, ընդհանրապէս կը նրբի և արբի՝ իւր
մէջ ընդունելու երկնային լուսաւորութիւնը, և մէկն որչափ ընդեր-
կար պահէ, այնչափ ևս ընդունակ կը լինի Բարձրելոյն յայտնու-
թեանցը: Բայց որովհետև մեր պահեցողն երկնային Երուսաղէմը
պիտի տեսնէր և անոր գերաշխարհիկ փառքը, հետևաբար՝ բաւա-
կան չէր որ նա անցաւոր նիւթերէն դատարկանայր, ըստ սկզբան
վերոյիշեալ աղանդին, այլ և թևակոխէր առ լուսանիւթն. և ահա
այս պատճառաւ է, որ այս անգամ փոխանակ եօթնօրեայ պահոց՝
հրաման կ'ընդունի եօթն օր ծաղիկ միայն ճաշակել:

Այս երկու կէտերս չանացեր է ապացուցանել գերմանացի գիտ-
նականս, Եզրի գրոց ուսումնասիրութեան Բ մասին մէջ, խօսելով
անոր աստուածաբանական արժեքին վերայ: Անտարակոյս հանճա-
րեղ է Կապիչի դրութիւնն, բայց քանի որ ուրիշ ներքին կամ ար-

1. Այս ինքն են՝ դրախտի երկոտասան բոյսերն, որոնք նկատուած են իբրև
վարձք և վայելք երանացուցիչք, զորս հրեշտակն կը շնորհէ Աղամայ և անոր ժա-
ռանգաց՝ վկնի աքսորման և ապաշաւանաց:

տաքին փաստեր չկան Սաղոմթիելի, — եւ առաւել Ուրիէլ հրեշտակապետին՝ որ կը պատուիրէ անոր այդ տեսակ պահեցողութիւն մի, — Եսդեան կամ Երիոնեան լինելուն, մանաւանդ թէ՝ քանի որ բոլոր գրուածիս մէջ եղած վարդապետական այլ եւ այլ կէտերն իսկ՝ իբրեւ ճշգրիտ հակապատկեր կը ներկայանան մեզ յիշեալ աղանդոց վարդապետութեան, դժուար է ընդունել զայն իբրեւ ճշմարիտ, եւ այնու լուծուած համարել աղբերս վերաբերեալ հանգոյցը։ Բ. տեսլեանս տեղւոյ անակնկալ փոփոխութիւնն ապա ի՞նչպէս մեկնենք, որ յայտնապէս կը տեսնուի դարձեալ գրոցս ներքին փաստերովը։ Ոսամի՝ ըստ իս՝ ինչպէս Արփադ կամ Արդաբ դաշտին, այսպէս եւ ծաղկամբք կերակրուելուն վերաբերեալ երկու նախադասութիւններն, 24 և 26 համարներուն, որոց մին կը սկսի. «Եւ մի՛ ինչ ճաշակեացես, բայց միայն ի ծաղկանց» և այլն, և միւսն՝ «Ի տեղին որ անուանեալ կոչի Արդաբ — և լինէր ճաշակն նոցա ինձ ի քաղցրութիւն և ի յագուռնի և ի կարողութիւն զօրութեան իմոյ», բոլորովին տարբեր աղբերէ կը յառաջագային։ Աւոր յայտնի ապացոյց է նախ՝ յիշեալ համարներէն առաջնոյն մէջ պահուած. «Պահեա դու այլ եւս առաքս եօթն» նախադասութիւնն, որ դարձեալ սաղաթիէլեան աղբիւրը կը յիշեցնէ մեզ, կամ լաւ եւս միւս տեսլեանց մէջ գործածուած սովորական ձեւը։ Դժուար է, այո՛, այդ երկու հակառակ ձեւերը՝ մի և նոյն հեղինակին ընծայել, առանց հակասութեան։ Գ. 24 համարին մէջ՝ ծաղկալից դաշտն միայն կը յիշուի հրեշտակին կողմանէ, առանց անուան. իսկ 26 համարուամ, ընդհակառակն, կեղծ Եզր՝ Արդաբ կը կոչէ զայն։ Արդ, այս անունս եթէ նկատուի իբրեւ լոկ այլաբանութիւն մի, և եթէ աշխարհագրական անուն, ըստ Վիքէի և Ֆոլկմարի, արաբական խմբագրութեան մէջ կը պակսի, իսկ միւսներուն մէջ՝ Արզարեբ եւս կը գրուի, որ կը յիշեցնէ ԺԹ գլխուամ յիշուած Արզափ = Arzaph երկիրն, — որ ըստ ասորի բնագրին՝ finis mundi թարգմանուած է, — ուր, ինչպէս տեսանք, կը դեգերին Նաբուգոդոնոսորէն առաջին անգամ գերուած ժողովուրդն. հետևաբար, շատ հաւանական է, որ երկուքն իսկ՝ մի և նոյն աղբերը վերաբերին։ Ոստի, ինչպէս Յովհաննէս Մկրտիչն իբրեւ անապատի քարոզ՝ մեղրով կը կերակրուէր, որուն ապա հետևեցան և Հարք անապատաց, այսպէս և ծաղկալից դաշտին մէջ բնակող տեսանողն, բնական էր որ ծաղկամբք կերակրուէր, բառիս ընդարձակ նշանակութեամբ, — որով բոյս իսկ կը հասկցուի, — վասն զի ուրիշ բան չէր գտնուեր հոն։ Արդ, այս պարագային մէջ՝

եթէ կայ մեկնութեան կէտ մի, դա այն է, թէ հատուածքս հեղինակն ներշնչուած է մէկ կողմէն՝ Եզրի ԺԹ գլխում աւանդուածէն, իսկ միւս կողմէն այլ Մատթէոսի Գ. գլ. 4 համարէն, տալով անոնց արուեստական միութիւն մի:

Ի նկատի առնելով տեսլեանս հիմնական և գլխաւոր մասը, ըստ նկարագրին, որ կը դառնայ Երուսաղեմի վերաշինութեան և Իսրայէլի կրօնական նուիրապետութեան վերանորոգութեան վրայ, որոնք քրիստոնեայ կամ հեթանոս մէկու մի համար բնաւ նշանակութիւն չունին կամ խիստ երկրորդական, կարելի է ըսել, թէ ուղղակի և ամբողջապէս Սաղաթիէլի և միայն Սաղաթիէլի մտաց և գրչի ծնունդ եղած լինի: Բայց, եթէ դիտենք անոր այլաբանական ձևը, որ կարող է և ուրիշ նշանակութիւն ունենալ, այն ժամանակ խնդիրն կը փոխուի:

Եւ իրօք գրուածիս ուսումնասիրութեամբ զբաղուող երկու գիտնականներ, Յոլկմար և Ռ. Կապիշ, իրարու հակառակ կարծիքներ յայտնեցին այս մասին, հաստատուած մի և նոյն ներքին փաստերու վերայ: Առաջինն՝ տեսլեանս նիւթ եղող քաղաքը՝ Բաբէլ ձեռքով հիմնուած Երուսաղէմը կը հասկնայ, որ առաջինէն աւելի մեծափառ կը կանգնի, ապա, Սաղաթիէլի որդւոյն Զօրաբաբէլի ձեռքով, ինչպէս աւանդած են մեզ Հրէից կանոնական գրքերն: Այս կարծեաց նպաստաւոր են ստուգիւ հետևեալ պարագաներն, այսինքն՝ նախ որ գրոցս կեղծ հեղինակն իսկ՝ այն ժամանակի և դիպաց հետ կապ ունեցող և ծանօթ անունը՝ Սաղաթիէլ՝ իր վրան առեր է: Ռ. Ուրիէլի բերանը դրուած մեկնութեան այս խօսքերս. «Այս կին՝ այն Սիոն է, զոր տեսանէիր, զոր և այժմ տեսանես քաղաք շինեալ»: Արդ, եթէ տեսանողին այժմ, այսինքն է՝ յետոյ տեսածն՝ յառաջագոյն տեսածին հետ նոյն է. կը հետևի ապա, թէ ինչպէս այն՝ այսպէս և այս քաղաքս և Սիոն՝ երկրաւորն ըլլան ուղղակի, և ոչ եթէ երկնաւորն:

Իսկ ըստ կարծեաց Կապիշի ընդհակառակն՝ բացարձակապէս երկնաւոր և յաւիտենական Երուսաղէմն է այդ, զոր, Սաղաթիէլ այնքան պատրաստութենէ ետքը, աքանչելահրաշ կերպով կերպարանափոխուած կը տեսնէ, և երկրաւորէն տարբեր հանգամանքներով կը ներկայացնէ մեզ: Գիտնականս՝ այլևայլ մեկնութիւններով ուզած է հաստատել զայս. սակայն մենք ուշի ուշով քննելով այդ նախապատրաստութիւնքն և տեսիլն ինքնին, երկու տեղեր կը գտնենք միայն, որոնք կը թուին նպաստել Կապիշի պաշտպանած կարծեաց, բայց իրօք

երկուքն իսկ յոյժ առաձգական են և երկդիմի։ Նախ 45 համարին մէջ, Ուրիէլ յիշեցնելով տեսանողին՝ այլաբանական այրուն խօսքը. « Եւ զի սաաց ցքեզ, ամուլ եղէ աւս երեսուն », կը մեկնէ զայն այսպէս, *ըստ սարի թարգմանութեան.* Quoniam fuit in sæculo *tria millia annorum, quando*[1] *non offerebatur in ea oblatio.* Et factum est post tria millia annorum *ædificavit Salomon civitatem,* et obtulit in *ea* oblationem : tunc ipsum fuit quod peperit sterilis filium » : **Ա.***րաբականն՝ համաձայն է այսմ. լատինն ունի ընդհակառակն.* « anni sæculo tres ». *Հայկականն՝ անորոշ կերպով կը գրէ. « Չի աւս բազում ունէր յայամ աշխարհի » : Ա.Ղ, այրի կնոջ բերանը դրուած ամլութեան յայտարար 30 տարիներն, որք յետոյ Ուրիէլի մեկնութեան մէջ 3000 տարուան փոխուած են, եթէ խանգարուած չեն, անտարակոյս աւելի երկնային Երուսաղեմին կը պատշաճին՝ քան թէ երկրաւորին. վասն զի այս միայն կապող էր սողոմոնեան տաճարի չինութենէն 3000 տարի յառաջ, — այսինքն է՝ արարչագործութեան թուականին սկիզբը, — գոյութիւն ունենալ, և ոչ թէ երկրաւորն : Սակայն, այս այսպէս ենթադրելով, այն ժամանակ անոր աւկուբիւնն կը մնայ մեզ համար բոլորովին անհասկանալի և հակասական : Յիրաւի, ինչպէս կրնար երկնային Երուսաղէմն մնալ այնչափ դար ամուլ, այսինքն է՝ առանց նուիրաց և բանաւոր պատարագաց, զոր դիտմամբ չեշտած է հեղինակն : Ի՞նչ եղան ապա Ադամայ, Աբելի, Ենովքայ, Նոյի, Աբրահամու, և ուրիշ նահապետաց կատարած զոհերն և նուիրագործութիւնքն : Ի՞նչպէս մեկնենք, Տոբիթայ գրոց մէջ, Ռափայելի՝ առ նա յայտնած այս ճշմարտութիւնս. « Յորժամ կացեր դու յաղօթս և նոյն քո Սառայ, ես մատուցի զյիշատակս աղօթից ձերոց առաջի Սրբոյն », և թէ. « Ես եմ Հռափայէլ յեօթանց անտի... որք հանիւն մատուցանել զաղօթս սրբոց, մտանեն առաջի փառաց Սրբոյն » : Ի՞նչպէս մեկնենք Մելքիսեդեկի մշտնջենաւոր քահանայութեան մեծ խորհուրդը, որուն համար կը գրէ Պաւղոս. « Որոյ ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած », և թէ « Առ իբրև մարդ մահկանացու առաք-*

1. Հայերէնն՝ նշանաւոր տարբերութեամբ մի կը գրէ. « Եւ յորժամ եղեն և չինեցա, մոխե՛ր է նմա պատրաստ », որ սողոմոնեան տաճարն և նոյն կատարուած զոհերը կը յիշեցնէ, մինչև ցկործանումն Երուսաղեմի ի Նաբուզոդոնոսորայ : Ասոր, 45 համարին մէջ յիշուած երեսնամեայ ամլութիւնն իսկ՝ որ քանի կը համաձայնի եզրի գրոց սկիզբը չեշտուած երեսներորդ ամին, այն է՝ յետ կործանման Երուսաղեմի վրայ է :

նորդս առնու, բայց անդ (յերկինս) վկայեցաւ թէ կենդանի է »։ Ի նչպէս մեկնենք հրէական ազգին աւանդական հաւատքը, զոր Երկոտ. Ղահապետաց (Վեհայ) կտակին հեղինակն այսպէս կը ներկայացընէ. « Հրեշտակք են երեսաց նորա պաշտօնեայք, քաւարանք առաջի Տեառն՝ ի վերայ գիտուբեան արդարոց, և մատուցանելն հոտ անուշից Տեառն բանականաւ և առանց արեան պատարագ »։ Գարձեալ, ինչ բանաւոր պատճառ մի կայ ենթադրելու, որ բոլոր Նահապետաց և արդարոց պատարագօք հանդերձ՝ 3000 տարի ամուլ մնացող երկնային Երուսաղէմն՝ յանկարծ Սողոմոնի մատուցած պատարագաւն յղացած և ծնած լինի զորդի այրոյն։ Ոսատ, Եզրի առաջին տեղին բնաւ նպատակաւոր չէ Կապիչի կարծեաց։ Տեսանենք երկրորդը։

Տեսլեանս 50–56 համարներուն կ'ըսուի, Ուրիելի կոչմէն՝ առ Սաղաթիէլ. Propterea dixi tibi, ut expectares me in campo ubi domus *non*[1] *esset* ædificata... ubi non est fundamentum ædificii. Nec enim poterat *opus hominis manere* in loco, ubi futurum erat, ut Altissimi *civitas* ostendetur... Ingredere et vide claritatem gloriæ ejus et magnitudinem ædificii ejus, quantum capax est visus oculorum tuorum videre, et post hæc audies quantum capit auditus aurium tuorum audire ».

Կապիչ՝ բաղդատելով այս տեղիս՝ Ե գլխու 52 համարին հետ, ուր ըսուած է, առ Սաղաթիէլ–եզր. « Ի բաց կայ քեզ ճշմարիտ դրախտն և տնկեալ ծառն ճշմարիտ դրախտին, և պատրաստեալ են կեանքն՝ հանդերձեալ փափկութեան. շինեալ է քաղաքն, յօրինեալ է հանգիստն », կ'ըսէ թէ, որովհետև առանց երկբայութեան այս վերջին խօսքերս՝ սաղաթիէլեան աղբեր կը վերաբերին, և ուղղակի հանդերձեալ աշխարհը = αἰων ἐκεῖνος, և ոչ թէ այս = αἰων οὗτος կը նշանակեն. ուրեմն այսպէս և 50–56 համարները՝ մի միայն երկնային Երուսաղէմը ցոյց կու տան մեզ, անչէն դաշտի, հիմն չունեցող տան և բարձրելոյն քաղաք և այլ բացատրութեամբք։

Սրդ, ընդունելով հանդերձ 52 համարի հարազատութիւնն՝ իբր ճշմարիտ, սակայն և այնպէս մենք ոչ կապակցութիւն կը գտնենք այդ երկու տեղեաց մէջ և ոչ իսկ նոյնութիւն գաղափարաց։ Եւ ատուգիւ, եթէ նոյն էին, ուրեմն ինչ հարկ մի կար, որ հեղինակն այս տեղ որոշակի ծանուցանելէն վերջ « ճշմարիտ դրախտն, տնկեալ

1· *Այս տեղ ևս, – ինչպէս ի վեր անդր, – հայերէնն՝ ունի ասոր հաստատականը, այսինքն է, « Ուր տունն չիներ »։*

ծառն ճշմարիտ դրախտին և չինեալ քաղաքն » այլուք հանդերձ, դառնայր վերստին և ծանուցանէր զայն իւրայոց, իբրև անակնկալ նորութիւն մի. և որ զարմանալին է, նախընթացէն աւելի աղօտ և քօղարկուած կերպով, որով մեզ հետ՝ իւր ժամանակակիցներն ևս վարանէին իմանալ զայն։ Այո՛, բաց աստի՝ գրութեանս ներքին փաստերու վերայ հաստատուած կրկին անտեղութիւնք իսկ՝ Կապիչի կարծեաց դէմ կը գինին։ Նախ, որ անծանօթ հեղինակ՝ եզրի անուանն հետ՝ նորա ժամանակն և պարագաներն ևս ի հարկէ ջանացեր է իւրեն յարմարեցնել. արդ, ինչ յարմարութիւն կարող է լինել աստ, որ Բաբելոնի գերութեան մէջ ինք գինքը կեղծող մէկն, որ այլուր միշտ երկրաւոր Երուսաղեմի անցեալը կը յիշէ, ներկայ աղէտները կ'ողբայ, և Իսրայելի գերութեան վերադարձը և քաղաքի և տաճարի վերաշինութիւնը կ'երազէ[1], յանկարծ խօսքը փոխէ երկնային Երուսաղեմի վերայ. և խօսի մանաւանդ առ այն ժողովուրդն, որ ըստ կանոնական գրոց՝ առ գետս Բաբելացւոց նստած՝ կը յիշէր միշտ իւր ամայացեալ մայրաքաղաքը, կը յիշէր իւր մայր Սիոնը, օր մի յառաջ հոն վերադառնալու և բնակելու մեծ յուսով։ Ուստի, եթէ Հրէից ակնկալածն այն չէր, այլ Դաւթի քաղաքը. եթէ մեր Սաղաթիէլն Զօրաբաբելի հայրը չէր, այլ անոր օրով և ձեռքով կատարուած մեծ գործին, այն է՝ տաճարի շինութեան նկարագրողն, ուրեմն, անոր մեզ նկարագրած Երուսաղէմն ևս՝ երկնայինը չէ, այլ Զօրաբաբէլեանն։

Աւելի, մեր կարծիքն կը հաստատուի նախ այն ընդհանուր երևութովն՝ որ ի յաջորդն, այն է՝ ԺԱ գլխու 42 և ԺԲ գլխու 48 համարներուն, դարձեալ տեսանողն կը շարունակէ խօսել երկրաւոր Երուսաղեմի վերայ, և անոր վերաշինութեան յուսովն կը մխիթարէ անմխիթար ժողովուրդը։ Ր. սրաբական թարգմանութեան հետևեալ խօսքերով, որք աւելի բացայայտ են և կարծանուած քաղաքի վե-

1. Ցիրաւի, բաւական է առ այս՝ բանալ Ժ գլխու 6–11 համարները, ուր հետևեալ խօսքերն ուղղուած են առ լքեալ և այրիացեալ Սիոնն՝ ի դէմս այրի կնոջ. «Ո՞չ տեսանես զսոփ ձեր, որ եհաս ի վէրայ Սիոնի, որ է մայր մեր ամենեցուն. հեծելով հեծեծ եղեալ ես, և փրփուր ես և պատրաստել յոյժ... զէ՞ն զինուց ձեր է նահանջ բազմութիւն՝ յապխանութիւն պղծոյն»։ Արդ, ինչպէս այս տող և 21–23 համարներուն եղած նկարագիրքն՝ միայն երկրաւոր Երուսաղէմին կրնան պատշաճիլ. այսպէս ուրեմն և 25–34 համարներուն եղած նկարագիրն՝ ուրիշ բան չէ, քայց եթէ այլաբանական անցք մի, այն է՝ երկրաւոր Երուսաղեմի սխալ կործանումէն՝ անոր ուրախալէտ վերականգնումը։

բաշինութիւնը կ'ակնարկեն ուղղակի. « Hanc tibi pulcram et decoram mostravit, qualem vidisti mulierem effulgentem, et *fundamenta ejus* (*այսինքն է Երուսաղեմի*) *denuo extructa* ». *գ. բաղդատելով տեսլեանս մէջ նկարագրուած Երուսաղէմը՝ նայեցայ կ'լսու, Բարուքայ Յայտնութեան, Զաքարիայ մարգարէութեան և Յովհաննու Յայտնութեան մէջ նկարագրուածին, այն է՝ վերին Երուսաղեմի հետ, երկուստեք ամենամեծ տարբերութիւնն յայտնապէս կը տեսնուի: Թէ Սաղաթիէլի (Դ տեսլեան) և թէ Յովհ. Յայտնութեան մէջ կին մ'է՝ որ կու գայ ի հանդէս՝ իբրև ներկայացուցիչ Սիոնի կամ Եկեղեցւոյ. առաջնոյն քով, իբրև վաղամեռիկ որդւոյ սգաւոր և այրիացեալ մայր, կ'ողբայ անմխիթար, իսկ վերջնոյն քով՝ իբրև անդրանկածին որդւոյ ծնող՝ կը ճչէ և կ'երկնէ ի ծնանելն: Ըստ առաջնոյն՝ փոխակերպուածն է ամայացեալ Սիոն լեառն, որ վերստին փառահեղ քաղաքի մի կը վերածուի, առանց անդրագոյն գերաշխարհիկ ձրից. իսկ ի վերջնումն՝ է վշտակիր Եկեղեցին Քրիստոսի, որ յետոյ կը փոխուի յաղթականի, այսինքն է, « յաւիտենական արքայութեան որբոց Աստուծոյ, և անմահ գառին », յորում ամենայն հանգամանք տարբեր են երկրաւորէս: Այո՛, ըստ խս, կայ երկուքին մէջ հասարակաց նմանութիւն մի. և ինչպէս Յովհ. Յայտնութեանն՝ իբրև հիմն և սկզբնական աղբիւր ծառայած են Զաքարիա և Դանիէլ, այսպէս և Յովհ. Յատնութիւնն ծանօթ ըլլալու էր Եզրի գրոց խմբագրին, որուն կը վերաբերին բաց ի վերը նչանակուածներէն, նոյնպէս և 57 և 55 համարներն, որք կրկնութիւնք են Զ գլխու 30 և 33 համարներուն և դիտմամբ տեսլեանս մէջ ներմուծուած են. հետևաբար, հաւանական է՝ որ Սաղաթիէլի այս տեսլեանս իսկ՝ ուրեք ուրեք պերբնական գոյն տուողն նա եղած ըլլայ:

Հուսկ ի վերջոյ, կարևոր կը համարիմ ուղղել վերը ասուրի բնագրէն մէջ բերուած տեղեաց մի քանի անճշդութիւնքը, որոնք զարտուղելու պատճառ եղան Կապիչի: Դիտել կու տանք նախ, որ ժ գլխու 45 համարի « in sæculo » բացատրութիւնն՝ ըստ հայերէն խմբագրութեան « յայսմ աշխարհի » ἀίων οὗτος պէտք է հասկանալ և ոչ թէ αἰων ἐκεῖνος. *բ.* Ædificavit Salomon civitatem *բացատրութիւնն՝ խանգարուած է յայտնապէս, վասն զի Սողոմոն ոչ թէ Երուսաղէմ քաղաքին, այլ տաճարին միայն հիմնադիր եղած է. հետևաբար, հայկական և արաբական խմբագրութեանց համաձայն՝ կարդալու է այն. « Սողոմոն շինեաց և զտաճարն »: *գ.* Et

obtulit *in ea*, *առարին միայն ունի, որ Երուսաղէմ քաղաքը կը յա-*
բաբերէ. իսկ ըստ Հայերենին և արաբականին՝ ուղղելի է « ի նմա »
= in eo, *այսինքն է ի տաճարին:*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԻԼՆ՝ *անաւոր կերպով մի կը սկսի, որ միայն*
իրեն յատուկ է, քան թէ ընդհանուր գրուածին: Այս տեղ՝ չկայ
բնաւ յիշատակ Սաղաթիելի եօթնօրեայ պահոց, չկան անոր ա-
ղօթաբար առանձնախօսութիւնքն՝ Իսրայելի կամ Երուսաղեմի մասին:
Կեղծ Ուրիէլ՝ նախընթաց տեսիլը կնքելէն անմիջապէս վերջ, այս
տեսլեանս կը պատրաստէ զՍաղաթիէլ, պատուիրելով 58–59 հա-
մարում. « Մնա՛ դու աստ՝ զվաղուեան գիշերն, և ցուցից քեզ ո՛րչափ
Բարձրեալն ի տեսիլ երազոյ ցուցցէ քեզ, որ լինելոցն իցէ ի վերայ
բնակչաց երկրի առաջս վախճանի »:

Աւրդ, *տեսանողին մտքէն չանցած և աղօթիւք չխնդրած այս ան-*
ակնկալս, այսինքն է՝ ԺԱ գլխու 1 համարով, — որ կը յաջորդէ
նախընթացի 60 համարին, — անմիջապէս ե տեսլեան փոխուիլն,
այսպէս. « Եւ եղև յերկրորդումն գիշերին՝ ահա ելանէր ի ծովէ
արծուի », և այլն, շատ կասկածելի է և պէսպէս դժուարութեանց
կը բաղխի, որոց մէջ պահուած խոր լռութեան՝ կը յաջորդեն բնա-
կանաբար քննադատական այս հարցերս. Ո՞րն է արդեօք « աստ » բա-
ռով արտայայտուած տեղին, ուր երկիցս կը գիշերօթէ տեսանողն.
Դ տեսլեան Աւրդաբ դա՞շտն, թէ նախընթաց երեք տեսիլներուն
թատր եղող Բաբելոնն, կամ բոլորովին մի ուրիշ տեղի: Առաջինը
չկարէ լինել, վասն զի այս հնարուած է միայն, ինչպէս տեսանք,
իբրև հիմն ծառայելու վերականգնելիք Երուսաղեմին, որոյ մասին
իւր խօսքը աւարտեց հեղինակս Դ տեսլեամբը: Չկարէ լինել նաև
Բաբելոն, վասն զի նկարագրելիք տեսլեանս նիւթն չունի, ինչպէս
պիտի տեսնենք, որ և է վերաբերութիւն Բաբելոնի կամ այն ժա-
մանակի դիպաց հետ: Հայկական խմբագրութիւնն՝ Ժ գլխու 60 րդ
համարի հետևեալ նշանաւոր տարբերութեամբ. « Եւ մոխ ի տոհմ
զերիոռս գիշերս, որպես և հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն », ըստ
բառականին կը պարզէ այդ մթութիւնը, որով մենք կը տեսնենք
58 և 60 համարներու մէջ երևցող խոշոր հակասութիւնը: Ես չեմ
կարծեր, որ այսպիսի մի տարբերութիւն դիպուածով սպրդած
լինի հայկական թարգմանութեան մէջ, այլ, կամ այն է թէ թարգ-
մանիչն այսպէս գտած էր նաև հին բնագրին մէջ, և կամ յարմար
չդատելով առտ բառը վերաբերել դաշտին, ի տան փոխած է զայն:
Ցամենայն դէպս, կը հետևի, թէ ոչ միայն տեսլեանս նախընթաց,

այն է 51–58 համարներն՝ եկամուտ նախապատմութիւններով խարդախուած են, այլ թէ նոյն իսկ ԺԲ գլխու 60 և ԺԱ գլխու 1 համարներուն մէջտեղ եղած ըլլալու էր և մի ուրիշ հատուած, որ պարունակէր Սաղաթիելի առանձնախօսութիւն մի՝ կատարեալ յայտնութեան մասին, որ ապա յոյն խմբագրի կողմէն դուրս թողուած է դիտմամբ:

Տեսլեանս գլխաւոր նիւթն է՝ նախ հռովմէական պետութեան բռնակալութիւնն, գործած անօրէնութիւնքն և ապա Մեսիայի աստուածութեան վերայ այս տեսլեանս մէջ, ամենամեծ կարևորութիւն պիտի ունենային քրիստոնէութեան պատմութեան նկատմամբ, եթէ ստուգիւ Քրիստոսէ յառաջ ապրող հրէի մի մտքէն և գրչէն ելած լինէին, այն է Սաղաթիելի. սակայն, ժուռար է որ այդ այդպէս եղած լինի, դիտելով որ նախընթաց տեսիլներուն, այսինքն է Ե, Զ, Է գլուխներուն, արդէն կրկին և կրկին դարձաւ նա վերլին ժամանակները հեթանոսաց տիրապետութեան նկատմամբ կատարեալ նշանաց, Օծեալն երկրաւոր թագաւորութեան և վերլին գալստեան վերայ, և ինչ որ պէտք էր ըսել՝ ըսաւ, և անոր աւածներն ուղղակի Հրէից գերութեան վերաբերելով՝ մեզ վատահութիւն կը ներշնչէին: Իսկ այս տեսլեանս մէջ յայտնուած գաղափարներն և նկարագիրքն՝ թէ պատմականօրէն և թէ վարդապետական տեսակետով բոլորովին տարբեր բնաւորութիւն ունին. այսինքն է, որ հեղինակի բուն նպատակն է՝ ոչ թէ Ասորեստանեայց կամ Պարսից՝ Հրէից դէմ, այլ ընդհակառակն փրկչական թուականէն մի քանի յառաջ և վերջ հռովմէական արծուոյն՝ նախ ընդհանուր արևելքի և ապա քրիստոնէութեան դէմ գործած հալածանքները տեսանելի վերայ առնուլ, և յետ այնորիկ քրիստոնէութեան ձեռքով կրած նորա պարտութիւնն և կործանումը: Սա՝ աւելի աշխարհաքաղաքացի՝ քան թէ հրեայ, աւելի ջատագով լինելով քան պատ-

միչ՝ պատմական անձինքն և անցքերն իսկ քօղարկած է, և ամենայն ինչ կրօնական երկու տեսակետի վերածած. այսինքն են՝ հեթանոսութիւն և Մեսիականութիւն, մին՝ աշխարհական և միւսն՝ հոգևոր և աստուածային զօրութեամբ գինաւորուած:

Տեսիլս՝ Դանիէլի մարգարէութեան Է գլխոյն վերայ յօրինուած է՝ ըստ հիման և ըստ գաղափարին. բայց անոր պարագաներն և աղբիւրներն՝ բոլորովին անկէց տարբեր են և նոր: Մտուգիս, այս երկու կէտերս իսկ՝ մէկէն ի մէկ կը տեսնուին, 11 համարում, Ուրիէլի բերանը դրուած այս խօսքերէս. «Արծուին՝ որ եկանէր ի ծովէն՝ չորրորդ թագաւորութիւնն է, որ յայտնեցաւ եղբօր քումդ Դանիէլի, այլ ոչ յայտնեցաւ նմա այսպէս, որպես ես յայտնեմ քեզ»:

Հեղինակս՝ ինքզինքը Դանիէլի «եղբայրակից», այսինքն է՝ ազգակից կ'անուանէ. և այս կարելի է, եթէ ԺԲ գլխու 34 համարում արտայայտուած՝ «Եւ գիւնացեալս ժողովրդեան նորա փրկեսցէ գթութեամբ» և այլ խօսքերով՝ հրէական ժողովուրդը կ'ակնարկէ, ըստ Ռ. Կապիշի: Սակայն, իմ կարծիքովս՝ այդ ազգակցութիւնն Դանիէլի յիշեալ գլխոյն և իւր տեսլեան պարզ նմանողութեան մէջ կայացած է, քան թէ յայլ ինչ: Դարձեալ, ասոյգ է և այն յայտարարութիւնն, թէ Դանիէլէն տարբեր յայտնութիւններ պիտի ընէր, «ոմն զի ընդհանուրէն՝ անոր մասնականին պիտի անցնէր, հեռաւորէն՝ մերձաւորին, և գուշակութիւններէն՝ պատմական կերպով արդէն կատարուած մեծ յեղափոխութեան: Եւ իրօք, նա արծուոյն 3 գլխոց, 12 թևոց և 8 աւելորդ կամ ստորակայ թևերու այլաբանական նկարագրով՝ կը ներկայացնէ մեզ այն ինչ, զոր ի զուր է որոնել Դանիէլի քով. այսինքն են՝ Կեսարէն սկսեալ մինչև վերջին հեթանոս կայսրը, մանաւանդ թէ կայսերական իշխանութեան ներքոյ բռնաբարող թագաւորաց իսկ արարուածքը, քրիստոնէից դէմ յարուցած հալածանքով և արիւնհեղութիւններով հանդերձ: Այս խիստ յայտնի պարագաներս, որոնց նա ինքն, հաւանօրէն, ոչ միայն ականջալուր, այլ և ականատես եղած էր՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ՝ Հրէից մասին պահած լռութիւնն և կայսերաց հպատակ հեթանոս ժողովրդեան մի մասին՝ Մեսիայի ձեռքով փրկութիւն և հոգևոր սահմանաց վերայ անդորը տպրիլն մինչև ցերկրորդ գալուստը ցոյց կու տան մեզ, թէ նա՝ կամ քրիստոնէութեան հաստատուելէն և հեթանոսաց մի մասի դարձէն վերջ տպրող քրիստոնէացած հրեայ մ'էր, և կամ քրիստոնեայ մէկն յետոյ այն գրուածին մէջ ձեռք խառնելով՝ այն կերպարանքը տուած է:

Այս տեսլեանս՝ միւսներէն ունեցած մեծ գանազանութիւնն ընդունեցան նաև Կապիշ և Գլիքրէորէր։ Գիտնականներէս առաջնոյն կարծիքով՝ տեսլեանս հեղինակն տարբեր ոմն է ոչ միայն Եզրէն և Սաղաթիելէն, այլ նոյն իսկ գանոնք ի մի խմբագրողէն, այնու զի վերջինս՝ ոչ հրեայ է և ոչ քրիստոնեայ, այլ հեթանոս մէկն, մինչդեռ A (Արծուի) աղբիւրն՝ է նախանձայոյզ հրեայ մի, հին գաղափարներով և սովորութեամբք տոգորեալ։ Սակայն, մենք քննելով գիտնականիս 95 իջումէ և ուրիշ տեղ մէջ բերուած կառուցները, ոչ միայն խաւսա կը գանենք գանոնք, այլ նոյն իսկ այլուր անոր ըրած դիտողութեանցը հակասող. հետևաբար, ըստ մեզ՝ ո՛չ առաջին երկու աղբերքը խմբագրողն հեթանոս մէկն կարող է լինել և ոչ այլ տեսլեանս հեղինակն՝ անկէց բոլորովին տարբեր մի անձն, այլ մի և նոյն, և կրօնիւք իսկ քրիստոնեայ. վասն զի մի և նոյն ատելութիւնն կը տեսնուի, երկուքին ընծայուած Հատուածոց մէջ իսկ՝ հեթանոսաց դէմ, և մի և նոյն համակրութիւնն առ հաւատացեալս Օծելոյն կամ մարդկութիւն կենդանւոյն քով ժողովեալ հօտին նկատմամբ։ Ուղիղ չէ Կապիշի նաև այս դիտողութիւնս, այսինքն թէ տեսլեանս հեղինակն՝ ինչպէս արծւոյ այլաբանութեամբ՝ հռովմէական պետութիւնը, այսպէս այլ առիւծի նկարագրով՝ Հրէից աշխարհական թագաւորութեան վերջնական յաղթանակն ուզած ըլլայ ներկայացնել։ Սակայն, ինչպէս դիւրաւ կարեն տեսնել ընթերցողք, 31–34 համարներուս՝ բուռ մ'անգամ չկայ յայտարարող աշխարհական թագաւորութեան, այլ ամենայն ինչ Քրիստոսի մարմնաւոր կերպով աշխարհ գալը ցոյց կուտայ մեզ, համաձայն Յովհ. Յայտնութեան, ուր Քրիստոս նոյնպէս յազգէ Դաւթի անուանուած է։

Տեսլեանս բազմակնճիռն հանգուցին հետ՝ անոր աղբեր ժամանակն ևս մերձաւորապէս որոշելու համար՝ պէտք էր մանրամասնաբար վերլուծել զայն. սակայն, այս՝ շատ հեռու կը տանէր զմեզ. ուստի, մենք՝ ըստ կարելւոյն՝ չէսկանս պիտի համառօտենք մեր սահմանը։ Երկու նշանաւոր մեկնութիւններ տրուած են ծովէն ելնող արծւոյն, անոր թևոց և գլուխներուն. որոց միոյն ներկայացուցիչք են Գիլման և Ցոլկմար, իսկ միւսոյն՝ Կապիշ և Գլիքրէորէր։ Առաջինն՝ աւելի ժամանակագրական հիման վերայ հաստատուած է. իսկ երկրորդն՝ աստուածաբանական և մեկնաբանական։ Գիլման նկատելով որ, ինչպէս բնական արծիւն՝ այսպէս և հռովմէական պետութիւնը ներկայացնող՝ ոչ թէ մէկ, այլ երկու թևօք միայն կարող է թռչել. հետևաբար, եզրակացոյց թէ տեսլեանս մէջ յիշուած

արծուոյն 12 թևերը զոյգ զոյգ առնելով 7 կայսերք հաշուելու է, և ոչ եթէ 12. և այս կայսերքս են Յուլեանք, այսինքն է՝ Յուլ. Կեսարէն սկսեալ մինչև Ներոն: Ութ աւելորդ թևքն՝ ըլլալու են (նոյն հաշուով) երեք Ֆինուորական կայսերքն, այսինքն են Գաղբա, Ոթոն, Վիտելիոս և անոր նախորդն Ներուա՝ ընկերակցութեամբ Դոմետիանոսի: Իսկ երեք գլուխներն՝ են փղաւեանք, — որ Տիտոս Փղաւիոս Վեսպասիանոսով կը սկսի և կը վարի յառաջ:

Ոխ. Կապիչ անյարմարութիւններ նկատելով Վիլմանի և Ֆուլմարի այս դրութեան մէջ, ինքն՝ Գըֆրէօրերի համաձայն մեկնեց զայն. այսինքն, նա կ'ընդունի թէ 3 գլուխներն՝ են ատուգիւ փղաւեանք, բայց 12 թևերն առանձին առմամբ՝ կեսարին յաջորդող նոյնաթիւ կայսերքը կը նշանակեն. դիտելով ասկայն, որ սոցա մէջ եղան ոմանք, ինչպէս Գաղբա, Ոթոն և Վիտելիոս, որոց թագաւորութիւնն եղաւ սակաւօրեայ, և այլք՝ որք միայն ձկտեցան թագաւորել՝ բայց չի հասնելով թագաւորութեան, լոկ թեկնածուք աթոռանեցան կամ յափշտակողք, որպիսիք են ըստ Գըֆրէօրերի՝ Վինդիկիոս, Նիմիդիոս և Պիսոն Լիկինիոս: Աւելորդ 8 թևերով հռոմէական կայսերք չեն հասկցուիր, այլ անոնց ատորակարգեալ օտար իշխեցողներ, որոնք այն ժամանակի պատմութեան վերաբերեալ Հրէաստանի թեկնածու իշխաններ նկատելի են:

Ընդունելով որ այս դրութիւնքս իրարու հակառակ են, սակայն և այնպէս նոցա հեղինակներն՝ գրեթէ փոքր ի շատէ մի և նոյն եզրակացութեան յանգեցան՝ նկատմամբ տեսլեանս գրութեան ժամանակին. այսինքն է Դոմետիանոս կայսեր ժամանակ, որ է՝ յամի Տեառն 90 գրուած: Նոցա իրարմէ ունեցած տարբերութիւնն այս է, որ ըստ Վիլմանի՝ յոյն խմբագրողի ձեռքով գրուած է առաջին անգամ տեսիլս, և ներմուծուած Սաղաթիէլի գրութեան մէջ. իսկ ըստ Կապիչի՝ նախանձայոյզ հրէի մի ձեռքով, որ թշնամի էր հռոմէական իշխանութեան և պաշտպան Իսրայէլի կրօնական շահերուն և անկախութեան. հետևաբար, յոյն խմբագիրն՝ զայն այնպէս գտած էր տեղ մի, և ոչ եթէ յօրինած: Կապիչի դրութիւնն ըստ իմիք աւելի հիմնաւոր է, ըստ որում՝ արծուոյն թևերը առանձինն մի մի կայսեր պատշաճեցուցած է. այս մասին ըսելիք չկայ: Բայց ատորակարգեալ թևոց և երեք գլուխներուն տուած անոր մեկնութեանց մէջ՝ թէ Կապիչ և թէ Վիլման գոհացուցիչ չեն. որովհետև երկուատեք Փղաւեան կայսերաց սահմանն որոշուած չէ. այսինքն թէ, բնագրի «գլուխք երեք» բացատրութեամբն՝ երեք կայ-

ներք կամ եռապետք հատկանալի են, թէ ընդհակառակ երեք հարբուտութեանց պատկանող 15–23 կայսերք, որոց թագաւորութիւնն կը հասնի մինչև վրկչական թուականի Գ դարը: Ա.յս վերջին կէտս Վիլմանի տեսութենէն վրիպած չէ, ատոյգ է, բայց դժուար էր՝ որ նա կարենար միտքանել զայն՝ յոյն խմբագրին համար իւր վերը գծած ժամանակին հետ: Իսկ Կապիչ՝ առարկելով հակառակ Վիլմանի, Գ դարու սկիզբն եղած քրիստոնէական յաւելուած մի կը համարի զայն: Յամենայն դէպս, Կայսերաց ժամանակին վերաբերեալ անորոշ — մեկնութենէ մի՝ տեսլեանս գրութեան որոշ ժամանակը գծող տարեթիւն՝ դեռ ատոյգ չէ կարելի համարել: Ատոյգ չէ, դարձեալ, մեզ համար, որ յոյն խմբագիրն՝ Դոմեսիանոս կայսեր ժամանակ ապրած և գրած ըլլայ, և կամ կայսերաց վերաբերեալ մասը միայն, — ինչպէս Կապիչ ենթադրած է, — Գ դարուն սկիզբը ներմուծուած ըլլայ: Ոստի, իմ կարծիքով՝ ամբողջ տեսիլն ինքնին չէր կարող քրիստոնէական թուականին Գ դարէն յառաջ գրուած լինել. և թէ կանխաւ ըրած մեր դիտողութեանց համեմատ՝ նախանձայոյզ հրեայ մի չէ տեսլեանս հեղինակն, այլ կայսերաց հալածանքներէն նոր ազատուած և քրիստոնէութեան բերած խաղաղութիւնը տեսնող քրիստոնեայ մէկն, և քրիստոնէական ձկտումով գրած է զայն: Դա կարող է լինել նոյն ինքն յոյն խմբագիրն[1], եթէ նկատենք, որ նա այնքան հին չկարէր լինել, որքան ենթադրած են Վիլման և Կապիչ. այսինքն է յամին 90, և ոչ այլ հետեանոս, զի հետեանոսի մի համար բնաւ նշանակութիւն չունէր՝ ձեռք զարնել Հրէից պատմութեան կամ քրիստոնէութեան վերաբերեալ նիւթի մի, և հետեանոսաց հակառակ լեզու մի գործածել անոր մէջ: Ակնարկեցանենք այժմ այդ եղելութիւնքը թէ արտաքին և թէ ներքին փաստերով:

Ինչպէս մեր տեսլեան՝ այսպէս և Յովհաննու Յայտնութեան ԺԳ և ԺԷ գլխոց մէջ նկարագրուածին իրրև հիմն ծառայած է, անտարակոյս, Դանիելի մարգարէութեան Է գլուխն, ուր չորրորդ գազանին տրուած են տասն եղջիւրք, յորմէ ապա կը յառնէ միւս այլ[2], որուն

1. Թերևս առարկուի, թէ յոյն խմբագիրն ինչպէս կարէր Գ. դարուն ապրող մէկը լինել, քանի որ Ն. դարուն կղեմէս Աղեքսանդրացւոյ քով (Stromat. III, 16) եբրի անկանոն գրոց Ե գլխու 33 համարն մէջ բերուած է, որուն բուն բուն կը համաձայնին բոլոր թարգմանութիւններն: Սակայն, այս առարկութիւնս՝ անպօր է, ըստ ինս, քանի որ ապացուցուած չէ գլխովին, թէ կղեմեսի գործածածն՝ եբրի յունարէն խմբագրութիւնն էր. կարող էր դա նոյն իսկ եբրայական սկզբնապիրն լինել: Ն. կղեմեսի քով եղած տեղին՝ մեր տեսլեան հետ վերաբերութիւն չունի:

2. Տես a. a. O. s. 363 ff. 385 ff.

համար կ'ըսուի, թէ «Առաւել իցէ չարեօք քան զամենայն առաջինան, և զերիս թագաւորս խոնարհեցուսցէ». ասկայն Յայտնութեան հեղինակն՝ նոյնը պահելով իւր բնագրի եղջերաց, այն է՝ թագաւորաց թիւը, ահագին կերպարանափոխութիւն մի ըրած է չորրորդ գազանի նկարագրին մէջ, իւր ժամանակի հռովմէական պետութեան կացութեանը և իր դրած նպատակին համեմատ։ Այո՛, այդ գազանին մէջ անձնաւորած է նա (ԺԳ. 2) Դանիէլի չորս գազանները, այսինքն են՝ վիշապն, ինձն, առիւծն և արջն, ըստ որում նա իրեն իւրացուցած էր իւր նախորդ չորս թագաւորութիւնները։ Կարմիր է նա՝ արբեալ արբոց արիւնով, կարմիր գոյացած է նաև անոր վրայ նստող կինն. այսինքն է քաղաքն մեծ (Հռովմ), որ լուաց իւր պատմուճանը բիւրաւոր մարտիրոսաց անմեղ արիւնով։ Եօթն գլուխներն՝ են ծանօթ եօթն բլուրներն, որոց վերայ չինուած էր, և այն «թագաւորք եօթն». տասն եղջիւրքն՝ «տասն թագաւորք, որոց չև ևս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազանին», որուն պատերազմին է Գառին դէմ, որ երկու եղջիւր ունի, և Գառն է որ կը յաղթէ անոնց, վասն զի «Տէր է նոցա և թագաւոր թագաւորաց» և այլն։ Սպիտակ՝ արդէն ապացուցած է, թէ Յայտնութեան եօթնապլխեան գազանն՝ ի դէմս Կալիգուլայի հնարուած է, որ կը յաջորդէ եօթներորդ թագաւորին. մանաւանդ թէ ըստ կարծեաց գիտնականին՝ անկէ առեղծուած են հռովմէական եօթն կայսերքն (որիշ ի տասանց), որոց յիշատակութիւն չկայ Դանիէլի քով. այսպէս նաև 616 թուէն չինուած է թիւս 666։ Ապ, եթէ փրկչական թուականին 90 ամին գրուելով Յայտնութիւնն՝ այսքան փոփոխութիւն կրեց, և այդ փոփոխութիւնքն արդիւնք են ժամանակին և պարագայից, ուրեմն նոյնը պէտք ենք խորհիլ նաև Եզրի Ե տեսլեան նկատմամբ, որ Յայտնութեան հետ ունեցած առընչութեամբ հանդերձ՝ ուրիշ նորութիւններ ևս ցոյց կու տայ մեզ, որոնք անկէց շատ վերջ հանդիպած ըլլալու էին. և այդ նորութիւններն ոչ եթէ մտանական տեղեաց, ինչպէս կարծեց Ռ. Կապիշ, այլ բոլոր տեսլեան մէջ կայացած են. հետևաբար, այդ հանգոյցը լուծել պէտք է, և ոչ թէ կտրելով անցնիլ։

Նախ և առաջ, տեսլեանս հեղինակն՝ Դանիէլի եօթներորդներէն գիտէր, թէ Քրիստոսէ յառաջ արդէն դադարած էր Հրէից թագաւորութիւնն՝ ի տանէն Յուդայ և քահանայութիւնն՝ ի ցեղէն Ղևեայ. թէ քիչ ատենէն պիտի գար պղծութիւն աւերածոյն տաճարին վերայ, և անոր յաջորդէր Բարձրելոյն հոգևոր արքայութիւնն, ըստ

Դանիելի « արքայութիւն յաւիտենական և ամենայն իշխանութիւնք նմա ծառայեսցեն և հնազանդեսցին » : Գիտէր նա արտաքին պատմագրութենէ ապացուցած, թէ նոր թուականէն յառաջ իրօք ժողովեցան Հրեայք յՆրուսաղէմ և սկսան հաստատել տեսակ մի իշխանութիւն, սակայն այս եղաւ Կեսարու և Օգոստոս կայսեր գերիշխանութեան ներքև, և ոչ թէ Մեսիայի ձեռքով կատարուած յաղթութեամբ և կամ հռովմէական արծուոյն բնաջինջ բարձմամբ, որ չնշուած է տեսլեանս մէջ : Գիտէր թէ Հերովդէսեանք իսկ՝ ոչ այլ ինչ էին, բայց եթէ ազգապետք և չորրորդապետք՝ Հռովմայեցւոց գերիշխանութեան ներքև. և այս՝ Արքեղայոսի պատմութենէն իսկ յայտնի է, որ թեկն ածելով անկախ թագաւորութեան՝ մէկէն ի մէկ ի Հռովմ կանչուեցաւ և աքսորուեցաւ ի Վիեննա Գաղղիացւոց, և այնուհետև Հռովմայեցւոց կողմէն դրուած Վաստաւորներով կը կառավարուէր Հրէաստան : Իսկ փղաւեան կայսերաց ժամանակ՝ Երուսաղէմ ի հիմանց կործանուեցաւ և աւօրտրբեցաւ, և Հրեայք ցրուեցան ի սիւուս հեթանոսաց, առանց մարմնաւոր և հոգևոր իշխանութեան : Ուրեմն, այս ամէն բանով հանդերձ՝ երբ տեսլեանս հեղինակն կը պնդէ դարձեալ արդարութեան և խաղաղութեան և փրկութեան բերող թագաւորութեան մասին, որ կը հաստատուի Հռովմէական արծուոյն բնաջինջ բարձմամբն, դա մարմնաւոր չկարէ լինել, այլ հոգևոր, դա հրէական աշխարհահաւժարի մ'աւթիւ և հրէի մի ձեռքով չէ կարող գրուած լինել, այլ քրիստոնէի. միով բանիւ՝ դա փղաւեան կայսեր Դոմեատիանոսի հետ գործ չունի առանձինն, այլ Քիւնեոդրակաև կայսերաց, որոնք եղան ոխերիմ հալածիչ քրիստոնէից. ուրեմն, ուղղակի այդ ժամանակին պէտք է վար իջնել և ատոր մէջ որոնել տեսլեանս գլխաւոր նպատակը :

Ուստի, մենք հետևեալ կերպով կը մեկնենք արծուոյ տեսիլը : Արծիւն՝ է հռովմէական պետութիւնն, երկոտասան թևերն՝ են Յուլեան 12 կայսրներն, Յուլիոս Կեսարէն մինչև Ներվաս, և ատոր յայտնի ապացոյց են 15 համարի. « Իսկ երկրորդն ի թագաւորաց սեղի ժամանակս կալցի քան զերկոտասանեան ». այս ինքն է Օգոստոս, որ երկրորդ է ի Յուլեայ, և ամենէն երկայն թագաւորողն եղաւ, այն է՝ 30 տարի ն. զԿրիստոս և 14 յ. Ք. = 44 :

ԺԲ գլխու 17–18 համարներն, ուր արծիւն « ոչ ի գլխոյն, այլ ի մէջոյ մարմնոյն » կը խօսի, և թէ « որ ի մէջ ժամանակի այնր արքայութեան եղիցին յուզմունք ոչ սակաւք » խօսքերով կ'ակնարկուին յոչնաւի Հարստութեան վերջն և փղաւեանց սկիզբն եղող պա-

բաղ միջոցն և չփոթութիւնքն. այսինքն է՝ 63–79 տարիներն, երբ Պաղեստինոս մէջ պայթեցաւ Հրէից ապստամբութիւնն՝ իւր տխուր հետևանքներով, և սա տնին՝ Գաղբա, Ոդոն, Վիտեղիոս և Վեսպասիանոս կը Ջանային իրարու ձեռքէ կորզել կայսրութիւնը. բայց փղաւեան առաջին կայսեր՝ Տիտոս Փղաւիոս Վեսպասիանոսի ձեռքով կը նորոգուի Հարստութիւնն, և ըստ տեսլեանս՝ վտանգուած պետութիւնն կը «կանգնի յառաջին իշխանութեան» այն է՝ կայսրութեան մէջ: Ժ. գլխոս 20 համարի համաձայն՝ ութ աւելորդ թևերուին՝ ոչ թէ Հրէից պատմութեան վերաբերեալ օտար թեկնածուներ կամ Հերովդէսեանք՝ այլ ուղղակի հռովմէական արծուոյն վերաբերեալ կայսրներ կը հասկացուին, ինչպէս ցոյց կու տայ. «Յարիցեն ի ևմանէ ութ թագաւորք» բացատրութիւնն: Խնդրական կը մնայ միայն այս կէտս թէ, արդեօք այդ ութ թագաւորներն, Փղաւիանոս Վեսպասիանոսէն մինչև Կոմոդոս, անընդհատ իրարու յաջորդող կայսե՞րքն հասկնալի են, թէ ընդհակառակն: Վերջին կէտն՝ ինձ աւելի հաւանական կը թուի, ըստ որում Ժ. գլխոս 21 համարում երեք իրարմէ տարբեր միջոցք ժամանակի նշանակուած են: Ա. Փղաւեան հարստութեան սկիզբն, կամ ըստ բնագրին՝ «ի հաստանել իշխանութեան», որում յիշեալ թևերէն երկուքն կը թագաւորեն և կը կորսուին. բ. միջին ժամանակ, յորում ըսուած է, թէ «չորքն պահեցին». գ. կատարած կամ վերջ հարստութեան, երբ ծնացած երկու թևերն կամ կայսերքն կու գան ի հանդէս և յետոյ կը կորսուին: Ըստ այսմ մենք կը տեսնենք, որ Փղաւեան կայսերաց հետ միացուած են նաև Ջինուորական անուանեալքն. հետևաբար, չենք սխալիր ըսել, թէ ութ աւելորդ թևոց կամ կայսերաց կարգին և չարքին մէջ նկարուած են ոչ եթէ անպայման կերպով Փղաւեանք առհասարակ, այլ Ջինուորական կայսրներէն անոնք միայն, որոնք իրենց յարուցած տմարդի հալածանքներովն ահագին հարուած եղան ոչ եթէ Հրէից, այլ քրիստոնեայ ժողովրդոց: Եւ իրօք, ասոնց շատ լաւ կը յարմարի պատուաստեալ թևոց նմանութիւնն, վասն զի տարբեր ծագումն ունէին բուն հռովմէական արիւնէն, բայց ըստ բնագրին ի նմանի, այսինքն է՝ հռովմէական արծիւէն կը համարուին, որովհետև յաճախ արծուէնշանը կրող հռովմայեցի զօրքէն կ'ընտրուէին և ժառանգական չէին: Նոյն գլխոս 20րդ համարի. «Ոտք եղիցին ժամանակք թեթևք և ժամք փութով» բացատրութիւնն իսկ՝ աւելի Դիոկղետիանոսի նախորդ Ջինուորական այն կայսերաց կը պատշաճի, որոնք կարճ ժամանակամիջոցում թագաւորեցին և կորեան, առանց վնասելու քրիստոնէութեան:

22–23 համարներն, ուր արծուի 3 գլուխներուն իրրև մեկնութիւն կը յիշուին իրարմէ անկախ երեք թագաւորներ, որոնք կը յուզեն բոլոր արևելքն և արևմուտքը իրենց գործած անօրէնութիւններով, սերտիւ միացած են Չինաւորական կայսերաց իշխանութեան վերջին ժամանակի մասին աւանդածին հետ, ինչպէս ցոյց կու տան բնագրի «ի վախճանի նորա» խօսքերն: Այո՛, ծ՚ր գլխու 25 համարի համաձայն՝ հռովմէական արծուոյ տիրապետութիւնն արդէն երեքի բաժնուած կը նկատուի. և այդ երեք գլուխքն են, ըստ ս, Գաղերիոս, Մաքսիմիանոս և Սևերոս: 26 համարին մէջ աւանձնաբար չեշտուած մեծ գլուխն, որ կը «մեռանի չարչարանօք», այսինքն է՝ եղեխանդական սխտիւ որդնոտած, չէ բարեբարոյն Դիոկղետիանոս, այլ բուն հեղինակ ամենայն չարեաց Գաղերիոս. այս յայտնի է նաև Եւսեբիոս Կեսարացւոյ եկ. պատմութենէն: Իսկ միւս երկուքն, որոնք սրով կը մեռնին և անոնց հետ կը կորնչի նաև գլուխն, այդու հասկանալի է Մաքսիմիանոսի և Մաքսիմոսի մահը, ընդ որս և Դիոկղետիանոսին, զոր լաւ կերպով նկարագրած է Լակտանտիոս՝ իբր De morte persecutorum կոչուած երկասիրութեան մէջ: Նոյն գլխու 27 համարում յիշուած երկու աւելորդ թևերն, զորս հեղինակն «ի յաջակողմն կոյս գլխոյն», այն է արծուոյն, փոխուած և «ի վախճանի նորա», այսինքն է՝ հեթանոս Հռովմայ իշխանութեան, պահուած կը նկատէ, են Մաքսենտիոս և Լիկինիոս, որոնք Կոստանդիանոսի ձեռքով հասուցած մահուամբ՝ բարձրեալն կը «կորուսանէ զնա», այսինքն է արծիւն: Իսկ Օծեալն, այսինքն է Քրիստոսի Տեառն մերոյ թագաւորութիւնն, որ ի սկզբանէ ցվերջ տեսլեանս ներկայացուած է իբրև հակապատակեր մի հռովմէական թագաւորութեան, կը տիրէ վերջապէս արդարութեամբ աշխարհիս վերայ, բերելով փրկութիւն, ուրախութիւն և խաղաղութիւն հալածանքներէն նեղուած և աստուածապաշտ ժողովրդոց: Այս թագաւորութիւնս՝ մի միայն Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն համար հասկանալի է, վասն զի անոր թագաւորել կը տրուի «մինչև եկեսցէ վախճան դատաստանի», այսինքն է՝ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստն, համաձայն Դանիէլի և Յովհաննու Յայտնութեան:

Արդ, բնագրին և արտաքին պատմագրութեան համաձայն տուած մեր այս մեկնութեամբս՝ կը վերցուին այլ ամենայն տարակոյսք, և մենք կարող ենք եզրակացնել վստահութեամբ, զոր յառաջագոյնն ենթադրեցինք ի սկզբան. այսինքն թէ, տեսիլս՝ Սաղաթիէլի կամ մի այլ հրէի հետ գործ չունի, այլ յետոյ յօրինուած և ներմու-

ծաւած [1] է Եզրի անկանոն գրոց մէջ: Այս բանս կատարուած է հաւանօրէն Դ դարու առաջին քառորդին, Մեծին Կոստանդիանոսի յաղթութենէն և բարեկորոգութենէն անմիջապէս վերջ, այն է՝ 313–324 ամաց մէջ:

Տեսիլ՝ համեմատութեամբ Ենովքայ Տեսլեան շատ աւելի հին է առաջիւ, և անոր իբրև աղբիւր ծառայած: Յիրաւի, վերջնոյս անծանօթ հեղինակն՝ քրիստոնեայ Հռովմի արձագ նկարագիրը առաջինէն փոխ առած է, այնպիսի պարագաներով, որով ամէն տարակոյս կը փարատի. այսինքն է՝ նա հռովմէական արձուեդրօշին դէմ կառնել կու տայ ո՛չ եթէ քրիստոնէութեան հեղինակին, կամ Յուդայի առիւծին, այլ Աբրաթոյ ծովափնեայ վիշապին, այն է Խամաչելացւոց. և թէ յայսմ՝ մանաւանդ հռովմէական արծիւն է, որ կը պաշտպանէ քրիստոնէութեան չահերը՝ Մահմէտականութեան դէմ: Դարձեալ՝ այն տեղն, ուր կ'աւարտի մեր տեսիլն, դարձիւ հռովմէական արծուոյն ի քրիստոնէութիւն, անտի կը վերսկսի և կը շարունակուի Ենովքայ տեսիլն: Տեսիլս ծանօթ էր նաև Մեթոդիոսի:

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԻԼՆ, յորում կը ներկայացուի դարձեալ նախորդ տեսլեան մէջ ի հանդէս բերուած Մեսիան, արտաքին ձևով բոլորովին կը տարբերի անկէց. որովհետև անտառէն ելնող կամ յազգէն Դաւթի սերող առիւծին տեղ՝ այժմ Մարդադէմն է, որ ծովէն կ'ելնէ ահեղ յուզմամբ, և հողմի և ամպի մէջ ծրարուած՝ կը թռչի արագութեամբ աշխարհիս չորս կողմը, դողացնելով զամէնքն առ հասարակ: Այս տեղ այլ ևս հռովմէական իշխանապետութիւնն չէ՝ որ կը կռուի անոր դէմ, այլ «ժողով բազմութեան մարդկան՝ ի չորից կողմանց երկրի», այսինքն են՝ հեթանոսք և մոլորեալք առհասարակ: Նա կը կռփէ այնպիսի մեծ լեռնի մի, որուն տեղին ոչ ոք գիտէ: Հոն կ'ամբանայ, և անտի կ'ոչնչացնէ իւր դէմ պատերազմող ժողովուրդները. և կ'ոչնչացնէ ոչ թէ զինու զօրութեամբ, այլ իւր բերնէն տեղացող հրոյն և հողմով, այն է աստուածային օրինաց: Նորա քով կը ժողովի մի այլ խառնաղակաւ բազմութիւն, որոնք ըստ բնագրին՝ են անոնք, «որ յանւարգ հեբրաւեուսաց ժողովեալ վարեցան, և ի գաւառակեն Աբրահամու խառնեցան ընդ նոսա»: Նախընթաց տեսլեան մէջ առիւծակերպ երեցող Մխիային տրուած

1. Դիտել կու տանք, որ այս ներմուծուն դիւրացնելու համար՝ անցեալ գրքին Սոզոմենեայ յաճախակի կրկնուած տառնձնախօսութիւններէն փոխ առած է ԺԲ. գլխու 7–9 համարները. այսպէս նաև 33–38 համարներն փոխառութիւնք են ԺԴ գլխու 8–9 համարներուն:

է, — իբրև քաղաքական և ընկերական գործ, — ազատել զաշխարհս հռովմէական արծուոյն բռնութենէն, բայց անոր աստուածպետական արքայութեան հաստատութիւնն թողուած է ի կամս թագաւորաց թագաւորին Եհովայ. իսկ հոս, ընդհակառակն, ներկայացուած է նա իբրև աստուածային Որդի մարդոյ, ճոխացեալ հոգեղէն հրով և աքանչելագործ զօրութեամբ: Նախընթացին ամէն բոլոր աշխարհ նկատուած է իբրև աշխարհ Աստուծոյ, և թատր պատերազմական հանդիսից ամէկ կողմէն հռովմէական արծուոյն և անօրէնութեան, իսկ միւս կողմէն այլ արդար վրէժխնդրութեան Բարձրելոյն: Այս տեղ՝ ընդհակառակն՝ Պաղեստին միայն կը ներկայացուի իբրև միակ երկիր երջանկութեան, զայն միայն կը ճանաչէ հեղինակն իբրև երկնային Երուսաղէմ, բայց ոչ եթէ ի յաւիտենական յերկինս, ինչպէս տեսանք Սաղաթիէլի քով, այլ Մեսիային հետ միաժամանակ իջած յերկիր: Բոլոր ազգաց դիմեցման և չփոթից նպատակակէտն՝ նա է. նա զարձած է աստղարէզ նոյնպէս աստուածային Մեսիայի բոլոր գործառնութեանց, որուն արգասեաց մեծագոյնն է՝ ի սիրեաց ցիրուցան եղող Իսրայելի տասն ցեղերու ժողովուրդն և վերադարձն ի սուրբ տեղիս. մինչդեռ ճնացեալ երկու և կէս ցեղից հոն դառնալու պէտք չի նկատուիր, իբրու այն թէ վերջինքս բնաւ ի Բաբելոն գերի տարուած չըլլան, այլ միշտ հաւիգաստեաւք բնակած սուրբ քաղաքում և անոր շրջակայքը: Ահաւասիկ գայդ աւանդող տեղին՝ ըստ աստղական թարգմանութեան. « Sed et *qui derelicti sunt* de populo tuo, salvabuntur illi, qui invenientur *in terminis* meis sanctis ».

Այս կէտս՝ յոյժ նշանաւոր է, զի կը թուի ցուցանել, թէ յամին 70 Հրէից ունեցած կացութենէն յառաջ գրուած է, երբ անոնց մէջ այն գաղափարն կը տիրէր, թէ գերեվարութիւնն և գրումը՝ 10 ցեղերուն միայն հանդիպած էր մասնակի, իսկ ժողովրդեան մեծամասնութիւնն՝ միշտ իւր բնակավայրին մէջ մնացած էր: Իբրև ծանօթ եղելութիւն՝ կը կարծուի, թէ երկու ցեղերու կացութիւնն 70էն վերջ և յայտնութիւնական գրուածոց, — որպիսիք են Բարուքայ և Սաղաթիէլի Յայտնութիւնքն, — ազգեցութեամբ յաճախ բաբելոնական գերութեան հետ նոյնացուած է, ուրեմն ըստ այսմ հիմնական և մեծ զանազանութիւնք կան ոչ միայն նախընթաց տեսլեան և սորա, այլ և սորա և Սաղաթիէլի ընծայուածին հետ:

Ոչ. Կապիշ, ժԹ գլխու 39–48 համարներուն, տասն ցեղից վերադարձը այսպիսի մի աւանդութեան վերայ հաստատուած, այսինքն

է, գիտնականիս կարծիքով Մ (Որդւոյ մարդոյ) տեսիլն՝ բոլորովին անկախ է Ե (Եզրի), Տ (Սաղաթիելի) և Ա (Արծւոյ) անուանեալ աղբիւրներէն, և թէ գրոցս խմբագրին չէ կարելի վերագրել զայն։ Տեսիլս այնպիսի ժամանակի մի մէջ յօրինուած ըլլալու է, երբ եր-կիրս ամբողջապէս իրր պատերազմական դաշտ մի դարձած էր, և հռովմէական պետութիւնն այլ ոչ այնքան զօրեղ. պարագայ մի, որ փղաւեան չրջանը մատնանիշ կ'ընէ մեզ։

Գերմանացի քննադատն՝ այսպիսի մի անկանոն գրուածի մէջ ամենայն ինչ լուրջ կերպով և ըստ պատմական կամ ժամանակա-գրական եղելութեանց գրուած կը դատի. սակայն դիտելու է, որ յաճախ անգամ դարեր վերջ ապրող կեղծ գրիչներուն յատուկ է՝ իրենցմէ դարեր յառաջ գրուած վիպօք և դիպօք ճոխանալ։ Հե-տեւաբար, 39–48 համարներուն մէջ բերուած աւանդութիւնն իսկ, որ Ուրիելի բերանը գրուած է՝ իրրև նոր յայտնութիւն, խիստ ան-յարմար է և կասկածելի. այնու մանաւանդ, որ Հայկական խըմ-բագրութիւնն՝ փոխանակ այն ընդարձակ հատուածին՝ ունի հե-տեւեալ տողերը, որոնք բոլորովին տարբեր բաներ կը նշանակեն։ Ահա այդ տեղին. «Եւ զի տեսեր զնոսա զի ժողովէր այլ բազմու-թիւն խաղաղութեան, ևորպա եւն որ յանւարգ հեթանոսաց ժողովեալ վարեցաւ, և ի գաւառակն Արտահարևոռ խառնեցաւ ընդ նոսա. այս է բազմութիւնն ժողովեալ և խաղաղական, և որք համբերենն ի նո-ցանէ՝ ցուցցէ նոցա Բարձրեալն աւելի նշանս. և պաշտպանեսցէ նոցա։ Եւ ասացի՝ թէ երանի՛ իցէ այնմ ազգի, քան այժմուռ ժողո-վըրդեաւս»։ Արդ, այս տեղ՝ ինչպէս կը տեսնէ ամենայն ոք, չկայ բնաւ յիշատակութիւն ոչ գերի գացող տասն ցեղերու առանձինն, և ոչ բնիկ հայրենիքում մնացող երկու ցեղերուն, այլ հեթանոս ազ-գերէն և Աբրահամու զաւակներէն անխտիր առ Քրիստոս կոչուած և ժողովուած բազմութեան, այն է՝ հաւատացեալ Եկեղեցւոյ վերայ է խօսքն, զոր կեղծ Եզրն՝ իրրև ապագայ լինելիք մի բան կը նը-կատէ, և աւելի երանիկ և երջանիկ կը համարի զանոնք, քան իւր ժամանակակից Հրեայքը. և անոնց երանութեան բուն պատճառքն իսկ կը նշանակուին (23 համարում) Բարձրելոյն կողմէն առաքուող փրկչին վերայ ունեցած հաւատքն, ձշմարտութիւնն և բարեգործու-թիւնքն։

Մէջ բերուած տեղիս, նկատմամբ երկրատասան ցեղից, միւս թարգ-մանութեանց մէջ ևս կը տարբերի։ Արաբական բ. խմբագրութիւնն՝ երկիցս յիշելով անորոշակի Իսրայելի գերութիւնը՝ բնիկ երկրին

մէջ ծնողները միայն երկու ցեղերուն չի սեփականեր, ինչպէս կ'ենթադրէ Կապիշ, այլ ամենուն առհասարակ։ Նախ ԺԹ գլխու 40 համարին մէջ կը գրէ Նա. « Et *populus peregrinus, quem vidisti ad pacem vocasse, reliquiæ sunt tribuum novem* ». *և 47–48 համարներուն.* « Et multitudo, quam vidisti, ordinatum consistere in quiete, *ei sunt, qui e populo meo superstites erunt in monte sancto* »։ *Իսկ որովհետև երկու ցեղերն առանձինն չէին Աստուծոյ ժողովուրդը կազմեր, այլ միաներուն հետ իրենց միասին. հետևաբար՝ ինչպէս իրենց բնիկ երկրին մէջ ծնողներն՝ ամէն ցեղերէն ևս էին անխտիր, այսպէս և գերի գացողները. ուրեմն նոյն իսկ արաբական խմբագրութենէն չի հետևիր այն ինչ, որ Կապիշ հետևցուցած է։*

Աւրդ, տեղեացս առաջինն՝ ըստ իմաստին աւելի մօտ լինելով հայկական խմբագրութենէն քիչ յառաջ մէջ բերուած տեղւոյն առաջին մասին, կրնանք ըսել, թէ այս վերջինս՝ ըստ քմաց հայ խըմբագրին չինուած չէ, այլ հաստատուած մի ուրիշ հնագոյն աւանդութեան վերայ, որ եղած ըլլայ աղբիւր նաև անյայտացած յոյն խմբագրին։

Յիրաւի, Դ թագ. ԺԷ գլ. 6 և 24 համարներուն, սրբազան գրիչն նախ կը պատմէ Իսրայելի գերեվարութիւնը, այսպէս. « Յաջին ինններորդի Յովսիա՝ առ արքայ Ասորեստանեայց զԱսմարիա, և խաղացոյց զԻսրայէլ յԱսորեստանեայս, և բնակեցոյց զնոսա յԱլաթ, յԱբովր և զգետովն Գովզանայ և զլերամբք Մարայ ». իսկ յետոյ կը յարէ ուրիշ հեթանոս ժողովրդոց գաղութն ի Սամարիա, և անոնց հետ ունեցած բնակակցութիւնը, այսպէս. « Եւ ած արքայն Ասորեստանեայց Սաղմանասար ի Բաբելոնէ, և ի Քութայ, և յԵմաթայ և ի Սեփարուիմայ, և բնակեցան ի քաղաքս Սամարիա՝ փոխանակ որդւոցն Իսրայելի »։ Յովսեպոս՝ (Հնախ. Հր. Գիրք Ժ. գլ. Թ.) Սաղմանասարայ ձեռքով կատարուած այս դէպքս՝ տասն ցեղից Նաբուգոդոնոսորայ ձեռքով ի Բաբելոն գերի տարուելէն վերջը եղած կը պատմէ։ Աւրդ, եթէ ուզենք ըստ Կապիշի պատմական ընդհանրութիւն տալ մեր տեսլեան մէջ տասն ցեղերու մասին պահուած հրէական աւանդութեան, պէտք է ըսել, թէ Դ Թագաւորութեանց գրքէն յառաջ եկած է այն, իբրև հնագոյն յաղբերէ. բայց որովհետև այս տեղ որոշակի յիշատակութիւն չկայ տասն ցեղերու մասին՝ բացառութեամբ երկու ցեղից. ուրեմն այդ զանազա-

նուիրեալն ևս յետոյ ուրեմն ներմուծուած է, և ոչ այնքան եղրակացուցիչ:

Այս քննութենէս վերջ յայտնապէս կը տեսնուի նոյնպէս, թէ երկուց ցեղից՝ իրենց բնիկ երկրին մէջ մնալու հրէական աւանդութիւնն՝ 70էն վերջ գրուած անկանոն գրուածոց լոկ հնարագիտութիւն մի չէ. և թէ տեսլեանս 48 համարի. «Qui derelicti sunt de populo tuo salvabuntur, illi qui inveniuntur in terminis meis sanctis» խօսքերն՝ Դ Թագ. Իե գլխու 22 համարում՝ աւանդուածին համաձայն՝ Պաղեստինու մէջ թողուած ազգաբնակութիւնքն հասկանալի են, առանց բացառութեան այս ինչ կամ այն ցեղերու: Այսպէս հասկացուած է նաև Բարուքայ Յայտնութեան Իբ գլխում:

Արդ, ԺԹ գլխու 39–48 համարներում աւանդուածին, այն է Հրէից և հեթանոսաց իրարու հետ ազգախառնուելով՝ մի ժողովուրդ կազմելուն,—ըստ հայկական խմբագրութեան,—պատմական հին աղբիւրը ցոյց տալէն վերջ, ժամ է արդ՝ ցուցնել նաև անոր նոր աղբիւրն ևս՝ որուն ազդեցութեան ներքև Դ Թագաւորութեան յիշեալ տեղին՝ բոլորովին այլաբանական և քրիստոնէական կերպարանք առած է տեսլեանս մէջ: Ուշ. Կապիչ՝ այս ամենայայտնի եղելութիւնս կ'երևի թէ անդրադարձած չէ, որ սակայն ճշմարիտ է և բաւական՝ յեղաշրջելու տեսլեանս աղբեր մասին նորա արտայայտած կարծիքը: Յովհաննու Յայտնութեան, Զ գլխու 15 համարին մէջ, հեղինակն յետ նկարագրելոյ ամենայն ազգաց, թագաւորաց և իշխանաց երկրի մեծ շարժուն և շփոթութիւնքը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ Բարձրելոյն մեծ բարկութեան և յաղթութեան վերջաց ժամը, նախ կը կնքէ (Է գլխում) Աստուծոյ ծառայից կամ ժողովրդեան թիւը, թուելով մի առ մի Իսրայելի 12 ցեղերու ճիւղերը: Ապա 9 համարում կը յարէ այս նշանաւոր խօսքերս. «Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ բազում, որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց, որք կային առաջի աթոռոյն և առաջի Գառին» այլաւքն հանդերձ:

Արդ, այս տեղ մենք աւելորդ կը համարինք որոնել, թէ ինչ

1. Այս նկատմամբ ուշադրութեան արժանի է Մխիթար Այրիվանեցւոյ քով պահուած մէկ տեղին, ուր յիշեալ դէպքին մէջ՝ Եզր ևս գերուած է ի հանդէս: Հիւղինակ՝ ակնարկութեամբ Դ Թագ. ԺԷ. գլխու 28 համարին՝ կը գրէ այսպէս. «Իսկ ի սատակել զնոսա գաղտնացն՝ առաքեաց (ի Սամարիա) Սաղմանասար գերհանօյ Եզր և զհին գիրսն Մովսէսի՝ սոսկերեն»:

պատճառաւ Յայտնութեան հեղինակն Իսրայելի 12 ցեղերէն թուարկեալ բազմութեան մէջ՝ յանկարծ կը յիշէ ապա նոյնպէս և ամենայն ինքեանս ազգեր և լեզուները, այլ այս միայն դիտել կու տանք, որ ինչպէս Յայտնութեան Զ գլուխն եղած է առաջիւ աղբիւր Եզրի ԺԲ գլխուն յիշուած հեթանոսաց կողմէն չփոթից և պատերազմաց, և Որդւոյ Բարձրելոյն՝ անոնց դէմ տարած յաղթանակին, այսպէս այլ Է գլուխն՝ Եզրի ԺԳ գլխուն նկարագրուած խաղաղական բազմութեան, որոնք «յամենայն ինքեանս... և ի գաւակէն Աբրահամու» խառնուած՝ կը ժողովին յաւիտենական լեռնէն Մարդոյն քով և կը վրկուին: Որովհետև մարդոյ կամ Առաւածամարդն, որ Յովհ. Յայտնութեան մէջ (գլ. Դ) հաւաքաբար չորս առարգելեօք կ'երևի և կը սրբաբանուի, ըստ չորից աւետարանական ծանուցմանց. այսինքն՝ առիւծու, զոհարակի, մարդոյ և արծուոյ, Եզրի քով առանձնաբար առնուելով Մարդադեմի և առիւծակերպի և այլ, տեսիլներու վերածուած է: Ուստի, ըստ այսմ կ'իմացուի թէ իննչ հիման վերայ և ինչպիսի կրօնական ձկտումով յերիւրուած կամ ձևակերպուած է տեսիլս: Այժմ կ'ուզենք համառօտիւ ապացուցանել հակառակ Կապիչի, թէ տեսիլս նոյն իսկ իւր ամբողջութեամբն առած, ինքնուրոյն մի գործ չէ, այլ սերտիւ կապուած է Դ տեսլեան հետ, և հետևաբար՝ մի և նոյն աղբեր վերագրելի ըստ սկզբնական մասին:

Արդ, Դ տեսլեան վերայ խօսած ժամանակ՝ տեսանք արդէն, որ սորա հեղինակն՝ ի դէմս այլաբանական այրուոյն, ցոյց տուաւ մեզ Երուսաղեմի սքանչելահրաշ հիմնարկութիւնն և ապագայ փառաւորութիւնը: Տեսանք դարձեալ, թէ անակնկալ կերպով խզուեցաւ այնուհետև այդ նկարագրի թելն՝ յաջորդ տեսլեան, այն է հոովմէական արծուոյ միջանկեալ այլաբանութեամբ, թողլով ընթերցողաց հետ՝ նաև շատ մի իրեր անհետևանք: Սակայն Զ տեսլեամբ կը պարզուի այն ամենայն. վասն զի այժմ մենք կը տեսնենք այս և այն տեսլեանց մէջ այնպիսի աղերսներ, որոնք փոխադարձաբար վերստ կը գրկեն և կը լրացնեն, այնպէս որ մենք այլևս չենք վարանիր եզրակացնելու, թէ Զ տեսիլն՝ շարունակութիւն եղած ըլլար, — ի սկզբնագրին, — Դ տեսլեան, ինչպէս և Ե տեսիլն՝ վեցերորդին: Այո՛, այսպիսի մի նշանաւոր տեղափոխութիւն անծանօթ էր գրոց եբրայական բնագրին, հետևաբար յոյն խմբագրութեան և խմբագրի ձեռքով առաջին անգամ կատարուած ըլլալու է: Եղելութեան բուն շարժառիթն յայտնի չէ, սակայն դիպուածական պատ-

ճառներէ աւելի խմբագրի որոշ ձկտման մէջ որոնելու ենք զայն։ Եթէ քրիստոնեայ մէկն էր այն, ինչպէս ես կը կարծեմ, շատ բնական է, որ նա Դ տեսլեան մէջ Սաղաթիէլի նկարագրած երկրաւոր երուսաղեմին և զօրաբաբէլեան տաճարի վերաշինութեան՝ գերբնական և համաշխարհի նշանակութիւն տալէն վերջ, անմիջապէս անցնէր ցոյց տալու, թէ ո՛յք են այն համաշխարհական քաղաքի քաղաքացիները, յորո՛ւմ կայացած է նոցա ազատութիւնն և կոչումն. որո՞նց հետ է նոցա պատերազմն և կրած հալածանքները. ո՛վ է նոցա ամենայաղթ թագաւորն և ինչպիսի՛ թագաւորութիւնն։ Արդ, այս ամենայն իրօք կը գտնենք նախ Զ տեսլեան և ապա հինգերորդին մէջ կարգաւ. և կը գտնենք իրարու հետ ունեցած այնպիսի մերձաւոր աղերաններով, որոնցմով ամէն տարակոյս կը փարատի։

Խմբագրի այս կերպ վարուելն իւր բնագրին հետ, այս ինքն է՝ Ե տեսիլը՝ վեցերորդին տեղ փոխադրել և Զրդը՝ հինգերորդին, ժամանակական մեծ պահանջի մի վերայ հաստատուած է. այսինքն է՝ Դանիէլի մարգարէութեան յիշեալ տեղերն, — որոց վերայ ինչպէս ըսինք բարգաւաճուած է Զ տեսիլն, — քրիստոնէութեան առաջին դարերում կամ մանաւանդ չորրորդին ամենամեծ նշանակութիւն ունէր քրիստոնեայ հասարակութեան համար, նկատմամբ Հրէից իշխանութեան բարձմանն և Քրիստոսի նորայաղթ թագաւորութեան հաստատութեան. զի Հրեայք կը պնդէին, թէ Դանիէլի (Է գլ. 13) նկարագրեալ Որդին մարդոյ և անոր ընծայուած անեղծանելի և անանցանելի թագաւորութիւնն՝ ըլլալու էր դաւթեան [1], զուտ ազգային և երկրաւոր։ Ուստի, խմբագիրն՝ հրէական աւանդութեան այս ցնորքը փարատելու համար, հարկ համարած է զուգել նախ հռովմէական արծուոյն տիրապետութեան պատկանող արարուածքը՝ հանդերձ Փղաւեան կայսերօք, որոնք ըստ նախագուշակութեան Դանիէլի, Երուսաղէմը ի հիմանց կործանելով՝ Հրէից կարծեցեալ աշխարհական իշխանութիւնն իսկ բարձին խապար. և թէ ազգաց և աշխարհաց տիրապետող այդ արծիւն՝ ոչ թէ դաւթեան աշխարհական իշխանութեան և վինու զօրութեան, այլ աստուածային զօրութեան առջևը միայն, որ կը «տիւէ թագաւորութեանց», խոնարհեցուս ինկաւ։

Թէ ստուգիւ այս այսպէս եղած է, ունինք մենք զօրեղ կռուան-

1. Դեռ ե դարում այս աւանդութիւնս տիրած էր, թէ ի վերջ ժամանակաց Դաւիթ պիտի գայ և Հրէից աշխարհական թագաւորութիւնը նորոգէ, եզնիկ իսկ իւր եաշ աստուածաբան մէջ կը յիշէ զայն, ինչ տատապելին Արտաւազդայ։

ներ նոյն իսկ գրոցս մէջ։ Ա. Վեցերորդ տեսլեան նախերգանքի մէջ, նախ 39 համարում կ'ըսուի Ուրիելի կողմէն առ տեսանողն. «Բայց դու կաց ինա աստէն այլ ևս աշուրս ետրև, զի ցուցից քեզ զայն՝ զոր կամի Բարձրեալն յայտնել քեզ», և 51 համարին մէջ կ'երկրորդէ տեսանողն ինքնին, թէ «Եւ ես նստայ ի դաշտին զեւթն օր որպէս հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն, և ուտէի ի ծաղկանց և ի բանջարոց դաշտին»։ Գիտել կու տանք, որ եօթնօրեայ պահոց վերաբերեալ այս տեղիքս՝ յայտնապէս կը հակառակին անմիջապէս նախորդ՝ այն է Ե տեսլեան սկիզբն եղած յայտարարութեան, ուր (58 համ.) գրուած է ընդ հակառակն. «Մնա դու աստ զվաղուընեան գիշերի»... և թէ «Մտի ի տուն զերկուս գիշերաւն, որպէս հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն»։ Իսկ բաղդատելով Դ տեսլեան նախերգանաց 23–24 համարները՝ Ե տեսլեան նախերգանքի յայտարարութեան հետ, կը տեսնենք որ յար և նման են իրարու։ Ոսոտի այս տեղիքս եթէ բնագրին յատուկ մաս համարի ոք, և եթէ խմբագրչէն դիտամբ կրկնուած, ցոյց կու տան մեզ մէկ կողմէն Դ և Զ տեսլեներու, և միւս կողմէն այլ Ե և Է տեսլեանց իրարու հետ ունեցած աղերսն և նոյնութիւնը։ Բ. վեցերորդ տեսլեան մէջ (ԺԲ. 45) յիշուած երկիրն Արզափ, ուր կը բնակին գերի վարեալ Իսրայելի ցեղերն՝ մինչև ցգալուստ Մեսիային, նոյն է Դ տեսլեան նախերգանքի մէջ (թ. 26) յիշուած Արդաթ դաշտին հետ, ուր ինքզինքը գերութեան մէջ կեղծող Եզր–Սաղաթիէլն եօթնեակներ կ'անցնէ՝ յայտնութիւններ ընդունելու աստուածային Մեսիայի և անոր հոգևոր թագաւորութեան նկատմամբ։

Գ. Վեցերորդ տեսլեան փակման մէջ՝ առ տեսանողն ուղղուած այս բացատրութիւնս. «Եւ վասն այսորիկ քեզ միայնոյ յայտնեցաւ այս յերկրի, զի ցկեանս քո վարեցեր իմաստութեամբ և գիտութեամբ» և այլն, նման է Դ տեսլեան վերջաբանի. «Զի դու երանելի եղեր քան զբազումս, և հաճոյ եղեր Բարձրելոյն որպէս սակաւք» բացատրութեան։ Դարձեալ Թ գլխու 7–8 համարներու հետևեալ տողերն. «Et erit omnis qui salvus fuerit... ipse relinquetur de predicto periculo, et videbit salutare meum in terra mea, et in finibus meis quæ sanctificavi mihi a sæculo», զոր Դ տեսլեան իրրև նախապատրաստութիւն կրնանք համարել, նոյն են Զ տեսլեան (ԺԳ. գլ. 48). «Sed et qui derelicti sunt de populo meo, salvabitur illi, *qui invenientur in terminis meis sanctis*» տեղւոյն հետ։ Այսպէս Դ տեսլեան վերջ (ժ. գլ. 59) Ուրիէլ պատրաս-

տելով զԱստուածէլ յայնմ տեսլեան՝ կը ծանուցանէ համառօտիւ կա-
տարուելիք իրաց ընդհանրականութիւնը, այսպէս. « Et ostendit tibi Altissimus visionem revelationum quas faciet *habitatoribus terræ* in novissimus diebus ». *Արդ, ևնթագծուած խօսքերս՝ որ-*
քան անյարմար են Ե. տեսլեան, այնքան ևս լաւ կը պատշաճին վեցե-
րորդին. դիտելով որ՝ առաջնոյն ևնթակայն կազմողն՝ է հռովմէական
արծիւն միայն, որ կը պատերազմի Աստուծոյ սրբոց դէմ. իսկ վերջ-
նոյն մէջ ընդհակառակն, ազգեր և թագաւորութիւններ երկրի առ-
հասարակ յուզուած են և կը պատերազմին Որդւոյ մարդոյ դէմ.
հետևաբար, ուրեմն այն նախապատրաստութիւնն՝ սկզբնագրին մէջ
Զ. տեսլեան մասը կը կազմէր երբեմն, և ոչ թէ հինգերորդին:

Գ. Զօրեղ կռուան մ'այլ կ'ընծայէ մեզ Է տեսլեան մէջ (գլ. ԺԲ.
15–17) *հետևեալ տեղին, ուր հրեշտակն յետ յիշեցնելու տեսանո-*
ղին, ԺԱ գլխուամ, հռովմէական արծուոյն գործելիք չարիքը, վրայ կը
բերէ այս նշանաւոր խօսքերս. « Ահաւասիկ փուռքայ արծուոյն գալ,
զոր տեսեր ի տեսլեան », այսինքն է՝ նախընթացին մէջ. իսկ որով-
հետև այժմեան բնագրի համաձայն՝ այս ակնարկութիւնս անյար-
մար է անմիջապէս նախընթաց, այն է Զ. տեսլեան, վասն զի հոս
ոչ թէ արծուոյ, այլ Որդւոյ մարդոյ վերայ կը դառնայ բովանդակ
ճառն. ուրեմն...:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԻԼՆ՝ *բառին բուն նշանակութեամբ չի կրնար տեսիլ ըսուիլ, վասն զի յերիւրուած է ելից գրքի Դ, Ի՝ և ԼԴ. 27–28 գլխոց մէջ Մովսէսի համար աւանդուած ծանօթ եղելու-*
թեանց, այսինքն է մորենւոյն միջէն առած պատուերին և Սինա լե-
բան վերայ 40 օր և 40 գիշեր նօթի մնալուն և Աստուծոյ կողմէն
գրաւոր պատգամներ գրելուն վերայ: Էվալդի կարծիքով՝ այդ տե-
սիլն, այն է ԺԴ գլուխն, որով վերջ կը տրուի անկանոն գրուա-
ծիս, նշանագուրկ և աւելորդ յաւելուած մ'է հինաւուրց Եզրայ
կեանքէն ինչ ինչ մէջ բերելու և գրութիւնը հաւատարիմ և հին
ցուցանելու սին նպատակաւ: Ուիլ. Կապիչ, ընդհակառակն, այն հա-
մոզումն ունի, թէ տեսիլս՝ բացառութեամբ այն մի քանի տեղեաց,
որոնք գրոցս խմբագրէն ներմուծուած են, մնացածն ամբողջ բոլո-
վին տարբեր աղբիւր մի է, այնպիսի բնորոշ յատկութիւններով,
զոր անկարելի կ'ընեն միւս չորս աղբիւրներէն միոյն կամ միւսին
հետ նոյնացնել: Եւ այս տեղ յիշուածն՝ ոչ եթէ կեղծ Եզրն է, այլ
պատմականն՝ իւր վերայ շինուած հին՝ բայց առասպելայօդ վի-
պօք: Այս աղբիւրս կոչած է Ուիլ. Կապիչ՝ E². այսինքն է՝ Եզր բ·

Մեր կարծիքով՝ այս ենթադրութեանց ոչ միւն և ոչ միւսն կրնայ ընդունուիլ իբրև ուղիղ, առանց ինչ ինչ բացառութեան: Իրաւ է թէ որոշ ձկտումմ մի կը տեսնուի այս տեղ մէջ բերուած Եզրի գրուածքը իբրև Աստուծմէ ներշնչուած, և հետևաբար՝ ամէն հաւատարմութեան արժանի ցոյց տալու: Բայց թէ այդ յիշատակուած գրոց մէջ կը հանդիպին արդեօք նաև այն վեց տեսիլները, որոց վրայ արդէն խօսեցանք, թէ ընդհակառակն՝ այնու հին կտակարանի 24 կանոնական և 70 անկանոն գրքերը, այսինքն են Միշնայք և Հագգատայք միայն պէտք է հասկանալ, որոնցմէ առաջինները Աստուածայնութիւնն, ըստ Ս. Գրոց, Եզրի ձեռքով եղած կ'ատանդուի: Առաջին կէտն ի նկատի առած՝ ապերդ կը թուի ինձ Ֆոլկմարի դիտողութիւնն, վասն զի վերոյիշեալ տեսիլներուն արդէն կրկին և կրկին չանք եղած է անձանօթի կողմէն ցոյց տալ նոցանէ իւրաքանչիւրի հեղինակութիւնը, Աստուծոյ և անոր պատգամաւորին Ուրիէլի բերանը դրուած յայտնութիւններով. հետևաբար, նոր ճիգն թափելու պատճառ չկար: Իսկ երկրորդ տեսակետով՝ անհասկանալի պիտի ձնան այն խիստ աչքի զարնող տեղերն, որոնք կամ մասամբ յառաջերութիւնք են յիշեալ տեսիլներէն, և մասամբ այլ այնպիսի կրօնական հայեացներով լի, որոնք բնաւ չեն յարմարիր Կապիչի ենթադրած աղբեր և ոչ նորա ժամանակի ոգւոյն, թէև գերմանացի գիտնականն՝ իւր գործադրած գրութեան համաձայն և՛ հասկացած և՛ մեկնած կը համարի զանոնք: Ասոր, ըստ մեր առանձին կարծեաց և ըստ իրին այս վերջին տեսիլս՝ բոլորովին մի անկախ աղբիւր չէ և չկարէ լինել, վասն զի բոլոր գրուածին հանգոյցն՝ այդ տեղ հանգրիմեալ է և այդու կը լուծուի, այլ կամ Եզրի ընծայուած աղբեր (E) կը վերաբերի, կամ (S) Սաղաթիէլի և կամ լաւ ևս գրոց խմբագրողին: Հետևանիկ մեր փաստերը:

Ա. Մենք կանխաւ դիտեցինք արդէն, որ ծ գլխու 58–60 համարներու մէջ, փոխանակ առաջին եօթնօրեայ պահոց՝ յանկարծ հրեշտակի պատուէրն երկու գիշերներու կամ եռօրեայ հակման փոխուած է, իբրև պատրաստութիւն Դ տեսլեան և յայտնութեան, և թէ առանց այլուր տեսնուած սովորական առանձնախօսութեան կամ աղօթից՝ անմիջապէս կ'ունենայ մեր տեսանողն խոստացուած տեսիլն և յայտնութիւնը: Արդ, մի և նոյն երևոյթն՝ կրկնուած է նաև վերջին (է) տեսլեան նկատմամբ, ժԳ գլխու 56 և 58 համարներուն, այսպէս. « Զի յետ աւր երից աւուրց առացից քեզ », և թէ « Կացի անդ վերխս աւուրս ». և ապա անմիջապէս կը սկսի տեսիլս: Բաւա-

կան չէ առարկել, թէ այդ տեղերն՝ հաւանօրէն խմբագրէն ներմուծուած լինին, վասն զի այն ժամանակ հարկ պիտի լինի տարակուսիլ նաև այն տեղեաց վերայ, ուր կը յիշուին ուրիշ տեսլեանց ժամադրութեան եօթն օրերն. այլ պէտք է խորհել, թէ կար բանաւոր պատճառ մի, որուն համար խմբագիրն (եթէ ոչ իսկ իրօք խմբագրին) դրաւ այդ զանազանութիւնը, ինչպէս կար պատճառ 3 եօթնեկաց ներմուծման՝ առաջին երեք տեսիլներու մէջ: Հետևաբար, այդ պատճառն, ըստ, իս ուրիշ բան չէր, բայց եթէ կամ նոյնութիւն աղբեր, զոր Սաղաթիէլ բաժանաբար իսկ տրամադրած ժամանակ՝ պահած է անոր յատուկ այդ պարագային, և կամ նոյնութիւն խմբագրին, որ ուզած է հաւատարիմ մնալ իւր խմբագրած աղբիւրներուն, և կամ իւր յառաջին էջերում սկսած դերը՝ մինչև վերջ չարունակել մեծ ճարտարութեամբ:

Բ. Տեսլեանս 28–33 համարները, – ուր կը յիշուին Հրէից յետգիպտոս պանդխտելն, անկէց ելնելն, անապատին մէջ Աստուծմէ օրէնք ընդունելն, և իրենց պարգևուած բարիքէն ապաշնորհութեամբ զրկուիլն, – կը գտնենք աւելի ընդարձակ նոյնպէս Ա գլխու 17–19 համարներում: Ուրեմն, այս մասին ոչ մի նորութիւն չկայ հակառող իրարու և ոչ այլ տարբերութիւն աղբերաց: Այսպէս և 7–8 համար. «Եւ այժմ քեզ ասեմ զխորհուրդս զայս՝ զոր յառաջ եչրևակեցի, և գերազն՝ զոր տեսեր, և զմեկնութիւնն՝ զոր իմացար» բացատրութիւնները՝ բացարձակապէս նախընթաց տեսիլները կը յարաբերեն, զորս տեսլեանս հեղինակն չէր կարող յիշել, եթէ նա իրօք միանեբէն բոլորովին մի անկախ գրիչ եղած ըլլար: Այս բանս անկէց իսկ յայտնի կը տեսնուի, զի 17 համարին մէջ՝ տեսլեանս գրիչն յետ կրկնաբանելոյ Դ գլխու 2 և 10 համարներուն մէջ վերջին ժամանակները կատարուելիք նշանաց մասին ասելիքը, կը շեշտէ և տեսիլը. «Ահաւասիկ փութայ արծուին գալ, զոր տեսեր ի տեսլեան»: Գարձեալ, 35 համարին մէջ յարութեան մասին եղած այս նշանաւոր նախադասութիւնս. «Զի դատաստան յետ մահու եկեսցէ. յորժամ դարձեալ կենդանասցուք՝ յայնժամ արդարոցն անուն յայտնեսցի», զոր Կապիչ յետագայ մեկնչի մի գրչէն ներմուծուած կը համարի, մենք ընդհակառակն համաձայն կը գտնենք և գլխու 32, 35, 49–50 համարներում ասանդուածին: Կ'երևի թէ Կապիչ տեղեաց նոյնութիւնը չկարենալ ուրանալուն համար է, որ կը յայտարարէ ապա, թէ իւր նշանակած հնգաթիւ աղբիւրներէն E (Եզր) միայն է որ կը հաւատայ յարութեան: Եթէ այդ այդպէս է, այսինքն է 32, 55,

49–50 Ե աղբեր կը վերաբերին, և մեր տեսլեան 35 տեղին նոյն է դոցա հետ. ապա ուրեմն բանաւոր պատճառ մի չկայ ամէն մի քայլափոխին մի նոր աղբիւր յայտնել. ուստի, և բոլոքն Կապիչէն առ Կապիշ ըլլալու է: Հուսկ ապա դիտել կու տանք, որ 9–14 համարներն, ուր Աստուծոյ կողմէն կը ծանուցուի առ Եզր. «Հրաժարեա դու այսուհետև յապականացու կենաց, և մերժեա ի քէն զվիճեալ միտս, և հեռացո ի քէն զմարդկեղէն խորհուրդս — զի դու համբարձցիս ի մարդկանէ, և ընդ իս (Ա. Լատ. Արբ. ընդ որդւոյ իմոյ) լինիցիս այսուհետև, և որ քեզ նմանի ոք իցէ, մինչև ի կատարումն ժամանակաց» համաձայն են Ը գլխու 51–54, Ե գլխու 15, 16 և 28 համարներուն, ուր ունին ասորին և լատինն համաձայն սոյն ենթագծուած տողերուն, այսպէս «Revelabitur enim filius meus Christus cum his, qui cum eo, et jucundabit», etc. Այսպէս նաև 20–21 համարներն, ուր Եզր կ'ազդայ գրաւոր օրինաց կորստեան և իւր ժողովրդեան առանց լուսոյ ճեալուն վերայ, նոյն են Դ գլխու 20–24 համարներուն Սաղաթիէլի բերանը գրուած այս խօսքերուս. «Եւ մոռացան օրէնք հարցն մերոց և. գրեալ կտակարանք ոչ ուրեք գտանին, և կամք աստ իրրև զմարախս, որոց ոչ գոն օրէնք, ոչ հրամանք, ոչ կտակարանք, և գնամք յաշխարհէս չեղեալք արժանի քո ողորմութեանդ»: 45–47 համարներն, ուր կը պատուիրուի Եզրայ՝ իւր գրուածոց մի մասը դնել «յայտնի տեղւոջ» հանրամատչելի ընթալու համար, իսկ միւսը ծածուկ պահել՝ իմաստնոց միայն ուսուցանելու համար, նոյն են ԺԲ գլխու 37–38 համարնեըուն, ուր կ'ըսուի. «Գրեա զայդ ի գիրս, զոր տեսեր. և դիր զդա յանքոյր տեղւոջ (ըստ Ա. և Լատ. in loco abscondito), և ուսուցես զիմաստունս ժողովրդեան քո» այլովք հանդերձ: Ուստի, այս և նման համեմատութիւնք՝ յայտնապէս ցոյց կու տան, թէ վերջին տեսիլն, այսինքն է ԺԴ գլուխն՝ ոչ միայն անկախ և ինքնուրոյն լինելու բնորոշ յատկութիւն չունի, այլ, ինչպէս տեսանք, անոր աղերսն կարծուածէն աւելի է միւս տեսիլներուն հետ:

Տեսնենք այժմ, թէ այս տեսլեանս էութիւնն ինչ բանի մէջ կայացած է, և թէ ինչ պատմական արժէք ունի: Առաջին անգամ զայն ընթերցողին թերևս այնպէս թուի, թէ անոր խմբագրողի նպատակն եղած լինի յայտնել նախ Եզրի՝ իւր մօտալուտ մահը. ք. պատուէր տալ անոր, որ գրի առնու մինչև այն ժամանակ իւր վերայ կատարուած տեսիլներն և յայտնութիւնքը: Սակայն, ըստ իս, այս կերէս վերջինն՝ անյարմար է և նշանակութենէ զուրկ, բայց ոչ եթէ

ԺԲ գլխոյ 8 համարում ասանդուած՝. «Այժմ ասեմ զխորհուրդս զայս, զոր յառաջ նշանակեցի, և զերազս՝ զոր տեսեր, և զմեկնութիւնն՝ զոր խմացար, ի մոխ քում պահեա» բացատրութեան համար, որուն վերայ ուշադրութիւն դարձուցեր է Կապիշ. այլ ԺԲ գլխոյ 37–38 համարներում արդէն իսկ ասանդուածներուն համար, զոր քիչ յառաջ մէջ բերինք: Նոյնը կարող ենք ըսել նաև առաջին կէտին համար. որովհետև յինքեան հարազատութեան դրոշմն չունի, այլ յերեւուած է Երկրորդ Օրինաց գրքի ԼԲ գլխոյ 48–50 համարներու նմանողութեամբ, նպատակ ունենալով պարզապէս զուգակշիռ մ՚ընելու առաջին գրչին, այն է Մովսէսի, և Եզրի մահը յիշատակող երկրորդ գրչին: Այս կէտս՝ իբրև բուն պատճառ դրուած է տեսլեանս մէջ. սակայն դա լոկ պատրուակ մ՚է, ըստ որում նախընթաց տեսիլներուն ի գրի առնուելու յիշատակութիւնն իսկ պատահաբար կրկնուած է հոս՝ անոնց և վերջնոյս մէջ միութիւն մի և նոյնութիւնը երաշխաւորելու դիտամբ: Իսկ անոր իսկական և բուն նպատակն է, ըստ իս, 94 գրոց կամ նորոգութեան մեծ դէպքն, որոց առաջին յիշատակութիւն եղած չէր նախընթաց վեց տեսիլներու մէջ. ինչպէս նաև լռելեայն ծանօթացնել ընթերցողին՝ այն հնագոյն աղբիւրը, որուն՝ իբրև հիման վերայ չինուեցան այն տեսիլներն: Սակայն այդ նպատակներէն առաջնոյն նկատմամբ՝ պէտք է զանազանել հինը՝ նորէն: Բ Եզրի Զ գլխէն և Նեեմեայ Ը գլխէն ծանօթ է մեզ, որ հինաւուրց Եզրն է գրիչ կամ նորոգող օրինացն Մովսէսի. բայց Բ Մակաբայեցւոց Բ գլխէն կ՚իմանանք, թէ Նեեմեայ ժամանակ Եզր Գրչի ձեռօք վերակազմուած գրեանն միայն Մովսէսի հնգամատեանն չէր, այլ «և զայլ մատեանս թագաւորաց, և մարգարէից և զԴաւթի ինքն գլխովին», ըստ հայկական թարգմանութեան, որ ըստ մասին կարող է ճշմարիտ լինել: Այսու հանդերձ կանոնական գրոց թիւն, զոր Հրէից ժողովարանն ի վաղուց հետէ իբրև սրբազան ճանչցած էր և կը գործածէր, 22–24ի հազիւ կը հասնէր. հետևաբար, ասոնց համար կարելի է առնուլ տեսլեանս 26 համարի՝ «Է՛ ինչ ի նոցանէն, զոր յայտնեացես» բացատրութիւնը, և կամ ըստ 45 համարին՝ «Զառաջինն՝ զոր գրեցեր յայտ դիջիր» նախապատրաստութիւնն: Իսկ մնացած 70 գրքերն, որոց համար կ՚ըսուի, թէ «Է՛ ինչ՝ զոր գաղտնի ի ծածուկ իմաստնոց ուսուցես», և կամ «Զերկրորդն պահեսջիր՝ ուսուցանել զիմաստուն ժողովրդեանն» ոչ իբրև աստուածաշունչ ներշնչեալ ճանչցուած են առ Հրեայս հնոյ ուխտին, և ոչ իսկ պատմական Եզրի գործ, այլ կամ Եզրի

կարծուած և 70 հատածներէ բաղկացեալ անանուն գրուած մ'էր, յորմէ յետոյ փոխակերպուելով ձևացաւ այժմեան Եզրի անկանոն գիրքն, և կամ կապակիտանիերոյ՝ Ծաժոռկը կոչուած գրութիւնն հասկանալի է: Ինչ և իցէ, այս կարգի գրուածքը Աստուծմէ ներշընչուած ցոյց տալու և նոցա վարկը բարձրացնելու համար նուիրուած է վերջին տեսիլը. ահա նորա բուն նպատակն:

Սակայն, այսու ամենայնիւ անոր մէջ երևցող հակապատմական պարագաներն՝ զայն մեծապէս կասկածելի կ'ընեն մեզ: Ցիրաւի, ինչպէս տեսանք, գրոցս ծ գլխու 57 համարին և ուրիշ տեսիլներու մէջ՝ հեղինակն բաղմից յիշելով Եզրի դաշտին մէջ օթելը՝ բնաւ յիշատակութիւն չըներ կաղնւոյ մի կամ արմաւենոյ. յաջորդ համարին՝ այն է վերջին տեսլեան պատրաստութեան մէջ ընդհակառակն յանկարծ մէկտեղ կու գայ նշանաւոր կաղնին, որոյ տակ նստած մեր խորհրդաւոր տեսանողն՝ անմիջապէս հանդիպակաց մորեհիւն կը լսէ «այլաբէմ» բարբառը, որ կը կոչէ. «Եզրա, Եզրա»: 37 համարին մէջ դարձեալ սովորական դաշտն միայն յիշուած է. «Եւ գնացի ի դաշտն, և եղէ անդ». Հոն կ'լսէ իմաստութեան բաժակը և կ'անցնէ 40 օր և 40 գիշերներ, գրելու համար յիշեալ 94 գրքերը, սակայն առանց յիշելու զկաղնին: Արդ, այս երեք տեղերու բաղդատութենէն ակներև կը տեսնուի, թէ կաղնւոյն և մորենւոյ վերաբերեալ հատուածն՝ (58 համարը) բոլորովին միջանկեալ բան մ'է, որ միւս երկու տեղեաց և նախորդ երեք տեսիլներուն իբրև թատր նկատուած դաշտին հետ բնաւ ազգակցութիւն չունի. այլ սխալ հասկացողութեամբ կամ ծաւալական նմանողութեամբ մի ուրիշ պատմական աւանդութեան՝ մէջ բերուած է հոս, գրոցս խմբագրողի կողմէն:

Այս ամենայն կը պարզուի աստրսկան թարգմանութեամբ մեզ հասած Բարուքայ Յայտնութեամբն, որ շատ կը տարբերի Պատուհասի և Երեմիայ և Աբդամելեքայ կոչուած գրուածէն, զոր արդէն ուսումնասիրեցինք: Գրութեանս 2 գլ. 1 համարին մէջ՝ խօսելով Քաղդէացւոց ձեռքով Երուսաղեմի պաշարման մասին, կ'ըսէ կեղծ Բարուք. «Reliqui populum ego Baruch, et exivi et *steti apud quercum*»: Երկրորդ անգամ անորոշ կերպով նոյնը կ'ակնարկէ տեսանողս (Ա. 1) այսպէս. «Sedi subtus *arborem*»: Իսկ երրորդն՝ բացորոշակի կը յիշատակէ (Ա. 18). «Et sedi subtus *quercum*.. *et scripsi has duas epsitolas*», այսինքն է, մին՝ ինն և կէս ցեղերուն, իսկ միւսն՝ առ Հրեայս, որոնք էին ի Բաբելոն: Արդ, վերջին տեղէս

կը տեսնուի յայտնապէս, որ Բարուք Երուսաղեմէն կը գրէր իւր թըղթերը. հետևաբար, նաև այդ համբաւաւոր կաղնին՝ Երուսաղեմի մօտերը լինելու էր, և ոչ թէ ի Բաբելոն: Եւ իրօք, այս ամենայն որքան հասկանալի է Բարուքայ համար, այնքան և անյարմար և անհասկանալի է կեղծ Եզրի նկատմամբ, որ թէ՛ նախընթաց երեք տեսիլներուն և թէ վերջնոյն մէջ ինք զինքը Բաբելոնի գերեալ ժողովրդեան հետ լինել կը ներկայացնէ տակաւին: Եւ որ աւելի զարմանալին է՝ նոյն գերութեան մէջ գրած կը կեղծէ նոյն իսկ վերոյիշեալ 94 գրքերը. մինչդեռ ըստ վկայութեան կանոնական գրոց՝ յետ գերութեան նորոգած կամ ի գրի առած կը համարուի Եզր Հնգամատեանը և ուրիշ գրքերը: Եզրի տեսլեան մէջ՝ բաց ի ծառոյն յիշատակութենէն՝ ուրիշ բան չկայ, առ Բարուքայ ընդհակառակն կը տեսնուի, որ թէ՛ այդ կաղնին և թէ տեղին՝ ուր կը գըտնուէր, էր ոչ միայն պատմական, այլ և յոյժ նուիրական, որպէս հինաւուրց կաղնին Աբրահամու, այն է Մաւերդ: Բարուքայ Յայտնութեան Խ՚ գլխու 1 համարէն այնպէս կ՚երևի, որ այս տեղիս էր Քեբրոն, զի զայն կը ցուցնէ մեզ տեսանողն՝ իբրև հանդիսավայր իւր եօթնօրեայ պահեցողութեան և ունեցած տեսիլներուն, այսպէս. « Et cum exissem ac dimissem eos (*ժողովուրդը*), abii et dixi eis : Ecce, ego vado *Hebron*... et veni *ad eum locum*, ubi sermo factus fuerat a me, et sedi ibi, et jejunavi septem diebus ». Ուր. Կապիշ, հաստատուած Բարուքայ Յայտնութեան, Զ. 3 համարին « Et ecce, subito spiritus fortitudinis sustulit me, et extulit me supra murum Jerusalem in altum » վրայ՝ կ՚ըսէ, թէ յիշեալ կաղնին Քեբրոնի մէջ չկարէր լինել, այլ Երուսաղեմի մօտ, պարսպի ներքսակողմը՝ առանձնափակ տեղւոջ. վասն զի դուրսը Նաբուգոդոնոսորայ զօրքով պաշարուած էր: Այս տեղ է, որ գրել կու տայ մեր տեսլեան հեղինակն՝ Եզրայ իւր 94 գրքերը:

Այս ամենաստոյգ կ՚երևի նաև ինձ, այսինքն թէ, դուրս ըլլալու էր այդ տեղին և հաւանօրէն ե և ԼՒ գլուխներուն յիշուած Cedron = Կեդրոնի հովիտն ըլլալու է, որ վրիպակաւ Hebronի փոխուած է: Ուշի ուշով քննելով Բարուքը, կը տեսնենք յիրաւի, որ կաղնին կը գտնուէր հոն, ուր Բարուք առանձնանալով տեսիլներ կ՚ունենար. իսկ որովհետև ծ և ԼԲ գլուխներուն՝ այդ առանձնավայրը նշանակուած է Սիոն լերան վերայ, ուր էր յայնժամ աւերեալ տաճարն և այժմ ընդարձակ դաշտագետին մի. հետևաբար, սորա հիւսիս արևելեան կողմը կ՚իյնար նաև մեր ասպնջականող կաղ-

նին, որ կը նայէր կեդրոնեան ձորին վերայ: Բարուք իսկ ատուգիւ Ե գլխոյն վերջը կը ծանուցանէ, թէ ինքն մինչև իրիկուն կեդրոնեան հովտին մէջ էր իւր ընկերաց հետ և կը պահէր. իսկ Զ գլխուամ, թէ ի ժամ երեկոյին անկէց ելաւ և նոտաւ ընդ կաղնեաւ, երբ Ասորեստանեայց զօրքն աւելի մօտեցաւ և պնդեց քաղաքի պաշարումը:

Գալով Կապիչի յայտնած այս կարծեաց, այսինքն թէ այս նըմանութենէն պէտք չէ հետևցնել, որ մեր տեսիլը՝ Բարուքի Յայտնութենէս կախումն ունեցած լինի, որովհետև ուրիշ հեղինակներ ևս հոս կը դնեն յիշեալ կաղնին, չենք կարող համաձայնիլ, նկատելով որ ուրիշ աղբիւրներէն ոչ մին չյիշեր զկաղնին՝ Եզրի վերջին տեսլեան հետ այնքան մերձաւորութիւն ունեցող այն պարագայով, ինչպէս կը յիշէ Բարուք. այսինքն է՝ որոյ ներքև ևստած ևաևակաևիներ և յայտնուորիւններ գրած ըլլալ առ գերեալ ժողովուրդն Բաբելոնի. հետևաբար, մեր կարծեօք՝ ընդհակառակն՝ Բարուքէն դուրս ուրիշ աղբիւր ունեցած չէ տեսլեանս անծանօթ հեղինակն:

Տեսլեանս վերջին, այն է՝ 47 համարին մէջ, որով կը կնքուի Եզրի անկանոն գիրքն, կը նշանակուին իրրև տարեթիւք ոչ միայն գրութեան եօթն տեսիլներուն, այլ մանաւանդ որ զարմանալին է Եզրի մահուան, ըստ հայերենի. «Յամին չորրորդի շաբաթիւն ամաց, յետ ամաց հինգ հազար արարածոց աշխարհի և երկուց ամաց այլ աւուրց»: Ասորին ունի աւելի որոշ կերպով. «In anno septimo, in hebdomada sexta post quinque millia annos creationis, et menses tres, et dies duodecim»: Հայկական խմբագրութեան մեզ ընծայածը խանգարուած է. հետևաբար, անոր վերայ հաշիւ ընել չըլլար. իսկ ասորւոյն՝ anno septimo բառերն՝ Արտաշէս երկայնաբազուկի թագաւորութեան եօթներորդ տարին կ'ակնարկեն, յորում եղաւ Հրէից գերեդարձն: Իսկ hebdomada sexta, այն է եօթևերորդք վեցն, ըստ դանիելեան թուարկութեան առնելով 7×6, կ'ունենանք արարածոց աշխարհի 5042 թիւը: Արդ, տարեթիւս չմիաբանիր ամենևին ոչ հինաւուրց Եզրի, ոչ Սաղաթիելի, — որ Դաւթի գահակալութիւնը կը դնէ յամի 3000 արարչութեան աշխարհի, — և ոչ իսկ Ս. Գրոց եբրայական բնագրի և եօթանասնից թարգմանութեան: Եւսեբիոս, համաձայն եօթանասնից, Արտաշէսի գահակալութիւնը կը նշանակէ յամին 4680 ար. աշ. իսկ Քրիստոսի ծնունդը՝ 5228ին, որով Արտաշեսի 7ե տարին կ'իյնայ 458 նախ քան զՔրիստոս: Ուստի ըստ այսմ, — եթէ խանգարուած չէ Եւսեբեայ

այս տեղիս, — Եզրայ Բաբելոնէն դառնալն և գրութեան ժամանակամիջոցն է՝ մերձաւորապէս 4770–4763 ամք աշխարհի, և ոչ թէ 5042. իսկ ըստ եբրայականին՝ կու գայ 3721–3714 ամի աշխարհի: Ուրեմն՝ տեսլեանս վերջն եղած Եզրի Դ գրքի գրութեան, ինչպէս և անոր մահուան տրուած թուականն՝ պատմաբանօրէն ոչ ինչ է և բնաւ անյարմար. ուստի, կամ Եզրէն 279 տարի վերջ, կամ Մակաբայեցւոց ժամանակը չօշափող մէկու մի ձեռքով և ըստ կամս յերիւրուած է:

Ի գուր ջանացեր է մերժել զայս տեսլեանս հեղինակն, ի վերջ գրոցս չեչտելով ուժգնակի. «Եւ ինքն Եզր վերացաւ և հարքարձաւս ի գունդ ևևաւորաց իջոց ընդ սուրբս և ընդ արդարս», և թէ «Գրեցի զայս և յորջորջեցայ գպիր Բարձրելոյն»: Նախադասութեանց գէթ առաջինն՝ միջանկեալ է և յոյժ կասկածելի, զի գրիչն, — եթէ իրօք Եզր եղած լինէր, — չէր կարող իւր գրոց գրութեան ժամանակին առընթեր յիշատակել նաև մահը. հետևաբար, ոչ այլ ինչ է այդ՝ բայց եթէ կրկնութիւն մի Ցրւ Համարին, ուր ըսուած է անորոշակի առ Եզր, թէ «Զի դու հարքարձիս ի մարդկանէ, և ընդ իս լինիցիս այսուհետև, և որ քեզ ևևաև ոք իցէ»: Միով բանիւ, գրոցս հանգոյցն ոչ ինչ նուազ կնճռոտ է և կասկածելի վերջաբանին մէջ, որքան ի սկզբնաւորութեանն:

Ուզելով ամփոփել գրոցս և անոր աղբերաց ուսումնասիրութեան ընդարձակ սահմանքը մէկ գլխաւոր կետի վերայ, կը նշանակենք նախ Ռիչ. Կապիչի վերլուծութեանց արդիւնքը: Գիտնականիս կարծիքով Եզրի անկանոն գիրքն բաղկացած է հետևեալ վեց աղբիւրներէն. այսինքն են E (Esdras Apocal.) Եզրայ Յայտնութիւն, գրուած մօտ ամին 31 յետ Քրիստոսի. S (Salathiels Apocalypse) Սաղաթիէլի Յայտնութիւն, գրուած յամի Տեառն 100 ի Հռոմ. A (Adlergeschichte) Արծուոյ պատմութիւն, գրեալ յամն 90 յետ Քրիստոսի ի Հեալոտ. M (Menschensohn) Որդւոյ մարդոյ տեսիլն, գրուած յԵրուսաղէմ, Պոմպէոսի ժամանակ. E^2 (Erzastück) Եզրեան հատուածոցք, գրուած յամի Տեառն 100 և ժամանակակից Սաղաթիէլի. R (Redac.) Խմբագրական հատուածք, գրուած յամի Տեառն 120 ի Հեալոտ:

Առաջնոյն տրուած են գլ. Դ. 52– Ե. 13m, Զ. 11–29, Է. 26–44, Ը. 63– Թ. 12:

Երկրորդին տրուած գլ. Գ. 1–31, Դ. 1–51, Ե. 13^2, Զ. 10, և Զ. 30 – Է. 25, Է. 45– Ը. 62, Թ. 13– Ժ. 57, ԺԲ. 40–48, ԺԴ. 28–35:

Երրորդին գլ. ժ. 60– ժԲ. 40։

Չորրորդին ընծայուած են ժԳ գլուխն՝ հանդերձ համբագրական բազմաթիւ յաւելուածներով։

Հինգերորդին ժԳ. 1–17m, 18–27, 36–47։

Վեցերորդին՝ գլ. Գ. 1, 32–36, ժ. 58, 59, ժԲ. 9–34, 37–39 (°), 49–51, ժԳ. 13²–15 (°), 16–20m, 21–24, 26², 29–32, 54–58, ժԴ. 8, 17², 48–50։

Մենք մեր ցայս վայր ըրած ուսումնասիրութեանց և ցուցմանց համաձայն, երեք գլխաւոր աղբիւրներէ բաղկացած կը տեսնենք այս անկանոն գրութիւնս, այսինքն են՝ ա. Եզրի անուամբ Հրէից մէջ շրջող նախաքրիստոսեան աւանդութիւնները, որոնք մինչև Մակաբայեցւոց ժամանակը կարող են հասնել. բ. Սաղաթիէլի ձեռքով եբուսաղեմի կործանմանէն անմիջապէս վերջ, կամ Դամեսիանոսի Հրէից դէմ յարուցած հալածանքէն ետքը կատարուած խմագրութիւնն. գ. յամի Տեառն 120–314 յունարէն խմբագրութիւն մի, որոյ հեղինակի խաղացած դերն՝ Սաղաթիէլեանէն ոչինչ նուազ ընդարձակ է։

Աղբերացս առաջինն՝ ինքնուրոյն գրուած մ'եղած չէր կարող լինել, որոշ ժամանակի մի կամ գրչի ծնունդ. վասն զի անոր աւանդաբերել հատուածքն՝ մերթ կանոնական ծանօթ գրոց և մերթ հակապատմական և հակաժամանակագրական եղելութիւններ կը պարունակեն, որոնք առանց միւսներուն՝ ամբողջ մի չեն կազմեր։ Երկրորդն՝ աւելի ինքնուրոյնութիւն կազմող բնութիւն մ'ունի, թէ՛ ձևակերպուած տեսլեանց նիւթոց և թէ որոշ ձկտման համար, որոնք վերը նշանակուած ժամանակի հրէական ազգին և պատմութեան ոգւոյն համաձայն են։ Երրորդն՝ ձուլուած է հրէական հինաւուրց աւանդութեանց և Դ դարու քրիստոնէական եկեղեցւոյ միտքերուն վարդապետութեանց, այլաբանական ձևոց ներքև, որոց գրիչն իսկ սարսռամ և չփոթ գաղափար ունի։ Բան մի, որ ընդհանուր կերպով երեքին մէջ ևս ակներև կը տեսնուի, է այն հատատակաց աղբիւրն, որուն վերայ առանց երկբայութեան ձևուած և կազմուած է ամբողջ գրութիւնն կամ Եզրի Դ գիրքն. և այս աղբիւրս է, ըստ իս, Բարուքայ Ցայտնուորիչին[1], որուն յունական թարգ-

1. Այս գրուածս, որուն ատորիքէն հին թարգմանութիւնն միայն ծանօթ է այսօր, զոր Հ. Կերիանի՝ Ամբրոսեան պրատան մէջ Գ. դարուց մագաղաթի վերայ գրուած ձեռագրի մի (B. 21 inf.) համեմատ լատին թարգմանութեամբ հրատարակեց, յամին 1866, պէտք չէ շփոթել ոչ Բարուքայ երկրորդական թղթին և ոչ

մանուԹիւնն, և որ աւելի ցաւալին է՝ եբրայական բնագիրն, արդէն ի վաղուց անյայտացած են:

Ինձ յայտնի չէ, որ Եզրի Դ գրքին և Բարուքայ ՅայտնուԹեան ուսումնասիրուԹեամբ պարապող քննադատներէն մին, գրականապէս պաշտպանած ըլլայ հոս արտայայտած մեր կարծիքը, Թէպետև շատեր նկատած են այդ երկու գրուածոց մէջ եղած սերտ աղերսն և նմանուԹիւնները: Գուցէ իմ առած այս քայլս՝ ամանց յանդըգնական երևի. բայց ես՝ յետ կրկին և կրկին բաղդատելոյ այդ գրուածներն իրարու հետ՝ ենԹադրուԹիւնս կատարեալ համոզման փոխուեցաւ, այնու մանաւանդ՝ երբ տեսայ, որ Եզրի Դ գրոց մէջ ոչքան որ նման տեղեր և տեսիլներ՝ իրարու անկապ և հակասական են, և յաճախակի կրկնաբանուԹիւններով և հակապատմական յաւելքերուԹեամբք կասկածելի, նոյնքան ևս ընդհակառակն Բարուքայ ՅայտնուԹիւնն՝ իր միօրինակ ոճով, սերտ կապակցուԹեամբն և պատմական ակնարկուԹեանց մասին եղած համեմատական ճշդուԹեամբն՝ աւելի բնագիր լինելու առաւելուԹիւններ ցոյց կու տայ: Այս ամենայն մեր մինչև ցարդ մէջ բերած մասնական օրինակներէն և դիտողուԹիւններէն իսկ փոքր ի շատէ տեսնուեցաւ. բայց այժմ այդ ճշմարտուԹիւնը հաստատուն և ընդարձակ հիման վերայ բարձրացընելու համար, կ'ուզեմ ընդհանուր համեմատուԹիւն մ'ընել, ըստ այլ, Պ-փ՛. Բ-ր-ա-ի և Աբ-խե-ի — Τὰ Παραλειπόμενα Ἰερεμίου τοῦ προφήτου կոչուած առասպելայօդ երկասիրուԹեան հետ, որուն վերայ խօսեցանք նախորդ գլուխներուն մէջ: Դարձեալ, այս տեղ ես կանգ պիտի չառնում ընդարձակաբար ապացուցանելու, Թէ այս երկու գրուածներէս ո՞րն արդեօք իրրև սկզբնաղբիւր ծառայած է միւսին. փափաքողք կարող են այս մասին կարդալ Դիլմանի, Պրիտոբիոսի, Քէոնիկի, Ռէնդել Հարիսի, Շիւրերի և Բոնվէչի ուսումնասիրուԹիւնքը. այլ առանձնաբար ըրած քննուԹեանցս համաձայն՝ ինձ հաւանական կ'երևի, որ վերջինս, Թէմ ըստ այժմեան ձևին, զոր ընծայեն մեզ յունարէն և հայկական ԹարգմանուԹիւնք, առաջնոյն վերայ յետոյ ուրիշ ձևացած է, յոյն խմբագրի ձեռքով: Հարիս՝ նկատելով իրօք որ անոր մէջ 12 Առաքելոց և ՋիՀենեաց լերան յիշատակուԹիւն կայ, կասկածեցաւ Թէ քրիստոնէի մի ձեռքով գրուած ըլլայ, Աղրիանոս կայսեր ժամանակ. այն է յամի Տեառն 130, ի բաց առեալ անոր Ե գլխու 30, և Զ գլխու 4 համարներն, որոնք 66–70ին Թերևս գրուած ըլլան: Իսկ Շիւրեր (a. a. O. cal. 82) քննելով գրուածին 6, 15, 14, 8, 2–5 և այլ տեղերը, գլխովին հրէական ծագումն ցոյց կու տայ: Բարուքայ ՅայտնուԹիւնն՝ ընդհակառակն՝ բացառուԹեամբ մի քանի քրիստոնէական ներմուծուԹեանց, ամբողջապէս հրէական ծագումն ունի, և գլխաւորներէն ամուր կարծիքով Տիտոսի ձեռքով կատարուած Երուսաղէմի կործանմանէն անմիջապէս վերջ գրուած ըլլալու է: Յամենայն դէպս, սա քնագիր ըլլալու ամէն յատկուԹիւններ ունի իւր մէջ, քան զայն:

կարելոյն համառօտ, բոլոր այն նմանութեանց՝ որք աչքի կը զարնեն երկուստեք, ցոյց տալով, յամենայն դէպս, Բարուքայ Յայտնութեան առաջնութիւնը։

Յայտնութեանս հեղինակն՝ Յուդայի թագաւորին Յեքոնիայ, այն է Յովակիմայ, 30–35 տարին հանդիպած կը պատմէ Երուսաղեմի պաշարումն և կործանումը, և ինքզինքը ականատես կը ներկայացնէ. զի գրութեան սկիզբէն մինչև վերջ հոն է, որ կը տեսնէ անոր մասին կատարուելիք յայտնութիւնները և ի գրի կ'առնու։ Իսկ Եզր Սաղաթիէլ՝ այդ դէպքէն եօքը, կամ լաւ ևս գերութեան 30րդ տարին կը ներկայացնէ ինքզինքը Բաբելոնի մէջ, և հոն կը տեսնէ իւր առաջին երեք տեսիլները։ Չարմանալի է երկու կողմէն 30րդ թուի զուգադիպութիւնն, զոր ես դիտմամբ և պատճառի մի վերայ հաստատուած կը համարիմ, որով Բարուք գերութեան սկիզբը, իսկ Եզր՝ մէջը ուզած են նշանակել։ Տարակոյս չկայ, թէ Բարուքէն Յովակիմայ թագաւորութեան համար գծուած յիշեալ տարեթիւն՝ անճիշդ է, որովհետև նա 10–11 տարի հազիւ թագաւորած է և գերութիւնն այլ անոր գահակալութեան երկրորդ տարին հանդիպած. բայց Եզրի գրոց հեղինակն՝ առանց ուշ դնելու այդ պատմական սխալին, իւր նախորդին 30րդ թիւը ծառայական նմանողութեամբ ի գործ ածեր է, մի ուրիշ աւելի մեծ անտեղութիւն յառաջ բերելով, այսինքն է՝ գնելով Հրէից առաջին գերութիւնն ի Բաբելոն, յամին 588 և վերջինը՝ յամին 606, նա պիտի չկարենար այլ ևս որպէս Սարեայ գինքը անուանել, զի նա 588ին գերելոց մին էր, և ոչ 458ին Երուսաղէմ դարձած լինել կարէր, — ինչպէս ինքն ուզած է հաւատացնել, վերջին չորս տեսիլներուն մէջ, — և ոչ այլ յամի 5042 ար. աշխարհի այդ գիրքը գրած լինել։ Ուրեմն, Եզրի գործածած ինչպէս 30 տարեթիւն, այսպէս և տեսլեանց հանդիսաւորը եղող տեղւոյն՝ Բաբելոնէն յԵրուսաղէմ փոխուիլն՝ Բարուքայ Յայտնութեան հեղհեղութեան ուղղակի արդիւնք համարելու ենք։

Բարուքայ ԺԲ–ԻԵ գլխահամարներու մէջ կը խօսուի ամպարիշտ և անօրէն Բաբելոնի բարձր ի գլուխ երջանկանալուն և Սիոնի՝ բարձի թողի լինելուն վերայ, հանդերձ գանգատանօք առ Աստուած, կը լսուի Բարձրելոյն աներևոյթ ձայնն, որ կը մեկնէ տեսանողին իրաց բուն պատճառքը։ Հեղինակն՝ Ադամէն կ'իջեցնէ իսրայելեան ժողովուրդը և Ադամայ մեղքը վարակուած. կ'երանէ մեռելները, որոնք չտեսան Երուսաղեմի անարգութիւնը. կ'ողբայ ճնացողաց հետ նա և ինք զինքը, որ անոր վերջին ժամանակի ազետից ականա-

աեա եզաւ, կը խօսի ի կատարածի կատարեալից նշանաց վերայ, այլովք հանդերձ։ Արդ, այս ամենայն կը գտնենք նոյնպէս Եզրի գրոց Գ–ն գլուխներուն մէջ, բայց այնպիսի նորանոր պարագաներու հետ լծորդուած և այնպիսի հանգամանաւք[1] ընդարձակուած, զոր ի զուր է որոնել առ Բարուքայ։ Որա հեղինակին եթէ ծանօթ եղած լինէր Եզրի այդ գրուածն, կարելի չէ, որ նա այդ պարագաներէն մին կամ միւսը յիշած չըլլար. ուրեմն պէտք է եզրակացնել, թէ կեղծ Եզրն է հետևողն և յարաւողը։ Այս բանս բաց ի այն երկուաւեք եղած բազմաթիւ նախադասութիւններէն[2], որոնք իրարու հետ բառական կերպով իսկ նման են, յայտնի կը տեսնուի նաև հետևեալ ընդհանուր երևութէն. այս ինքն է՝ քիչ յառաջ նշանակուած գլուխներուն մէջ՝ Ուրիէլ հրեշտակի բնաւ յիշատակութիւն չկայ Բարուքայ քով, և ոչ իսկ յատուկ տեսլեանց. այլ ուղղակի Աստուծոյ հետ կը խօսակցի նա։ Եզրի քով ընդհակառակն, Ուրիէլ ներմուծուած է, անոր յայտնութիւններուն՝ տեսլեանց ձև տալու համար. և Աստուծոյ համար առ Բարուքայ Dominus dominator գործածուած տիտղոսն իսկ՝ առ Եզրի անյարմար կերպով յաճախ հրեշտակին յարմարցուած է։

Բարուքայ Ե գլխու մէջ, Հրէից հինգ պատուաւորներուն՝ Կեդրոնի հովտին մէջ ժողովուիլն, Երուսաղեմի պաշարուած ժամանակ, և Բարուքայ հետ վերահաս վտանգի վերայ խորհրդակցելն՝ տեղւոյն ամենայարմար և ամենաբնական բան է. բայց երբ նոյն անձ

1. Օրինակի աղագաւ, Գ գլխու 3 համարին մէջ՝ հրոյ, հովի և անցեալ ժամանակի նմանաբանութիւններն, — 13–16 համարներուն՝ անտառի և ծովու իրարու տեղ փոխանակելու այլաբանութիւնն, — 31–34 համարին մէջ՝ ցորենի օրինակաւ չարեաց սերմանելուն և աճելման, և 40–42 համարներուն՝ ծննդական արգանդի և սաղմի, այսպէս և գժոխաբնակ հոգւոց վերաբերեալ նմանաբանութիւններն. Ե գլխու 24–27 համարներուն՝ որթի, շուշանի, աղաւնոյ, ոչխարի, Յորդանանու և Իսրայելի օրինակներն, և այլք բազումք։

2. Ինչպիսիքն են, օրինակի աղագաւ, Գ գլխուն՝ աշխարհիս վերածուիլն իւր նախկին լռութեան, — ԺԴ գլխուն՝ աշխարհս իսրայելեան ժողովրդեան համար առեղծուելուն, սոցա ապաժաման անցնելուն, — ԻՌ գլխուն գժոխոց և կայենիէ՝ իրենց մէջ ընդունած հոգիները և մարմինները վերադարձնելուն. երկրի և սերման՝ ծնր արգանդի և ժամանակաւոր ծննդեան հետ, այսպէս նաև ծովու նեղուցի՝ կամ նաւահանգստի աղցաւոր նեղութեանց և դիւրից հետ եղած բաղդատութիւններն, — ԺԳ գլխուն ազատածնաց Թուոյ որոշման և լրանալուն, — կենդանեաց և մեռելոց քնակութեան, — դատաստանի յապաղման և Աստուծոյ երկայնմտութեան. — հուսկ ապա ԻԲ գլխուն՝ ի վերջ աշխարհիս նորա քնակչաց վերայ գալիք նշանաց և նեղութեանց վերաբերեալ առանձնախօսութիւնքն, և այլն։

ձինքն՝ ադաւաղ ձևով մէջ բերուած կը տեսնենք նաև Եզրի ԺԹ գլխուամ, 34 գրքերը ընդօրինակելու համար, և այն իսկ բացական դաշտի մի մէջ, մանաւանդ թէ ճիշդ մի և նոյն կաղնոյն ներքև, ուր Բարուք իւր երկու թղթերը գրած կ՚ասանդէ, այլ ևս չենք տա- բակուսիր, թէ այդ տեղին ըլլայ բանաքաղութիւն Բարուքայ: Ա յա՝ ունկէց իսկ յայտնի է, զի Բարուքէն յիշուած Երեմիա ժամնօթ ա- նունը՝ Սեղաւիայի վոխեր է՝ իւր հակապատմական գործը չխաոնելու նպատակաւ:

Բարուքայ ԻՉ գլխուամ, կը հարցուի առ Բարձրեալն՝ գալիք նե- դուքիւններուս ինչ ժամանակ հանդիպիլն և ծրքան տևելն, և ին գլխուամ՝ անոր կը պատասխանուի, թէ ժամանակն 12 մասունքնե- րու բաժանուած է. և թէ անոնց իւրաքանչիւրն վերապահուած է անոր՝ որ ժամանակի մէջ կազմուած է: Ա պա մի առ մի կը թուար- կին այդ մասունքն. առաջինն՝ պիտի լինի սկիզբն խռովութեան և աղէտից, իսկ վերջինն՝ իբրև չփոթ պարտուքիւն մի բոլորին միանգամայն: Ժամանակի աղիտաբեր այս մասունքս՝ մին միւսոյն հետ խառնուած է և իրարու կը սպասահարկեն. իրարմէ կը ծագին և ուրիշներէ կ՚առնուն, և երկոքումբքս կը կատարելագործուին, այնպէս որ՝ այն օրերուն մէջ երկրիս վերայ բնակողներն պիտի չիմանան այն ժամանակաց կատարածը: ԻԸ գլխուամ կը նշանակուին, — իբրև չափ համարոյ այն ժամանակին, — երկուս մասունք՝ եօթ- ևերորդք եօթն եօթևերորդաց: ԻԹ գլխոյն մէջ լուծումն կը տրուի նախընթացին մէջ եղած հարցին, թէ այն ամենայն պիտի կատա- րուին երկրիս վերայ՝ ո՛չ եթէ այս ինչ կամ այն որոշեալ տեղւոյ մէջ, այլ ամենուրեք, և թէ կենդանի մնացորդք առհասարակ պիտի կրեն զայնս. բայց անոնք միայն պիտի պաշտպանուին, որոնք սուրբ երկրին մէջ կը գտնուին այն ժամանակ: Ժամանակի այդ 12 մա- սանց կատարմանէն յետոյ պիտի յայտնուի Մեսիան. պիտի յերե- ւան գան նոյնպէս իրենց բնակութենէն Բեհեմովթ և Լեվիաթան վի- շապներն, զոր ստեղծեց Աստուած հինգերորդ օրը և պահեց մինչև այն ժամանակ, յորում նոքա կերակուր պիտի լինին ամենայն ևոռն, որոնք ողջ մնացին (ա՛ս. residui fuerint): Լ գլխոյն մէջ կ՚ա- ւանդուի յետ լրման ժամանակաց Մեսիայի գալուստն՝ փառօք, ա- նոր յաւսոյ բոլոր մեռնողներուն յարութիւնն, մեռելոց կայաններու բացուիլն, յորոց դուրս պիտի գան արդարոց հոգիներն և մեղաւո- րացն՝ յոյժ բազմաթիւ, «միանգամայն իրրև ի միում խմբի և միոյ հոգւոյ». առաջիններն՝ պիտի հրճուին և վերջիններն՝ հեծեն

ապրսափով ; տեսնելով իրենց վերահաս տանջանքը , և այլն և այլն :

Արդ , դառնալով առ Եզր՝ մենք կը գտնենք զայս ամենայն , ի հարկէ տարբերութիւններով. բայց ուշադրութեան արժանին այս է , որ վերջին գրութեանս հեղինակն՝ առաջնոյն համաոստիւ յիշատակած նիւթոց վերայ ահագին տիեզերք մի ստեղծած է տեսլենեբու , միշտ իւր երևակայեալ Ուրիելի կամ երևակայութեան օժանդակութեամբ : Զ գլխու 7–10 համարներուն՝ այս հարցմանս . « Quæ erit separatio temporum, aut quando prioris finis, aut sequentibus initium? » կը պատասխանուի . « Աբրահամէն մինչև Աբրահամ » . վասն զի աստի ծնան Եսաւ և Յակոբ . առաջինն՝ է վերջ այս ժամանակիս , իսկ երկրորդն՝ սկիզբն հանդերձելոյն : Պատճառն . որովհետև Յակոբ ծնանելուն ժամանակ՝ ունէր Եսաւայ գարշապարէն , և թէ գարշապարի և ձեռաց միջև ուրիշ բան պէտք չէ որոնել :

Կանխաւ մենք ցոյց տուինք , թէ այս տեղիս՝ յետին ժամանակի բարեւնական աւանդութիւն մ'է , և ուրիշ բան նշանակելու է՝ քան թէ նիւթապէս ժամանակ . այսինքն է՝ անդրանկութեան և կրտսերութեան խնդիր է : Իսկ ԻԴ գլխու 11–12 համարներուն՝ յայտնապէս կը տեսնուի Բարուքայ հետ ունեցած պղերգն , ուր անմիջապէս 12 մասանց բաժնելով ժամանակը , կ'ըսուի , որ անոր տասն և վեց վառւելքն՝ արդէն անցած են , բայց կը մնան դեռ երկու վառւելքն՝ յետ միջևոյ տասներկուդ մասին : Տեղւոյս յետադարձն Եզրի քով՝ անով միայն հասկանալի է , որովհետև Բարուքայ Յայտնութեան ԻԲ գլխուն նշանակուած 12 չարիքն՝ սա վեց տեսլեներուն մէջ , կրկին ուրիշ դիպաց հետ զուգել ուզած է , զանիկայ թիւր կերպով հասկանալով . սակայն Բարուքայ այդ տեղւոյն միտքն այլ ինչ է , այսինքն են՝ տասն և վեց ցեղերու գլխէն անցած պէտքերն . և մնացած երկու մասունքն , որոնք Եզրի մեկնութեամբ՝ իբր թէ երկու և վեց ցեղերուն վերապահուած են , որոնք բնաւ գերի գացած չեն ի Բաբելոն , այլ իրենց հողին վրայ մնացած . մինչդեռ , ըստ Բարուքայ՝ սոցա գերութիւնն ևս իբրև արդէն կատարուած իրողութիւն նկատուած է , ԿԲ գլխու հետևեալ բացատրութեան համեմատ .

« Sed etiam contro *duas tribus et dimidiam* exiit sententia, ut etiam ipsæ captivæ abducentur ».

Գտնել , ըստ Բարուքայ՝ ժամանակի 12 մասանց մէջ գալիք չարիքն ընդհանուր նկատուած են , այսինքն է՝ աշխարհիս ամէն կողմ , և ոչ թէ Իսրայելի 12 ցեղերուն համար միայն : Կեղծ Եզրն՝

հակառակ Բարուքայ և տարբեր մոքով իր գրոց վերջին գլխում փոխադրած է ժամանակի 12 մասանց բաժանման խնդիրը, բայց այդ գործողութիւնն իսկ կը մատնէ գործողին ձկտումը. վասն զի Զ գլխու 12 համարին մէջ կը խնդրէ իմանալ այն նշանաց կատարումը, և 20–28 համարներում՝ մէջ կը բերէ զանոնք, սկսելով ճիշդ Բարուքայ ԻՒ գլխու 1 համարի այս նախադասութեամբ. « Et aperiunt libri » և այլն, կ'ուզարտի ԻԹ գլխու 3 համարի համանման այս նախադասութեամբ. « Et erit omnis qui derelictus fuerit (ըստ Բարուքայ in illis diebus in terra ista) salvabitur », և այլն:

Եզրի Զ գլխու 35–59 համարներում՝ վեցօրեայ արարչութեան ընդարձակ նկարագիրն իսկ՝ ընդլայնուած է Բարուքայ ԻՆ գլխու աղօթքին մէջ եղած հակիրճ ակնարկութիւններուն: Եւ ահաւասիկ ապացոյցները. Ի գլխոյն մէջ Աստուած կը պատուիրէ Բարուքայ, որ առանձնանայ եօթն օր և պահօք պատրաստէ զինքը, և թէ այնուհետև պիտի գայ և յայտնէ իրեն ժամանակաց գաղտնիքը: Այս պատուէրս կատարած ժամանակ, կը յիշէ տեսանողն, — իւր առանձնախօսութեան մէջ, — Աստուծոյ ամենակարող զօրութիւնն և արարչագործութիւնքը: Արդ, սոյն պարագաներս կը գտնուին ճիշդ նոյնպէս Եզրի Զ գլխու 31 համարին մէջ: Ըստ Բարուքայ՝ ժամանակն աշխարհիս արարչութեամբ կը սկսի և կատարածովը կ'ըսպառի. այս ամենաճշմարիտ է և ըստ ինքեան հասկանալի: Իսկ ըստ Եզրի՝ Աբրահամով, որ ոչ է ուղիղ, այլ բարեւնական գառանցանք: Բարուքայ քով ժամանակի 12 բաժանմունքն՝ անվիջապէս անոր ծանուցած տեսլեան մէջ կը յայտնուին և իրենց բուն նշանակութեամբ. իսկ ատ Եզրի՝ ընդհակառակն՝ ԺԲ գլխում, որ բնաւ չյարմարիր Զ գլխու 20–34 համարներուն: Թերևս կարծուի, թէ այս անգամ Բարուք ըլլայ բանաքաղն, դիտելով որ, սա ԻԹ գլխում Բեհեմովթ և Լեվիաթան գազանները յիշելով՝ հինգերորդ օրը ստեղծուած կը դնէ զանոնք, այսպէս. « Quæ creavi in die quinto creationis, et reservavi eos usque ad illud tempus, et tunc erunt in escam omnibus, qui residui fuerint », որ Եզրի 47 համարին մէջ ևս կը գտնուի: Սակայն պէտք է ըսել, թէ Բարուքայ այդ տեղին՝ ուղղակի Ծննդոց գրքի Ա. գլ. 21 համարում ասանդածին համաձայն է, քան Եզրի. վասն զի վերջինս՝ Բեհեմովթը իբրև ցամաքաբնակ չորքոտանի մի նկատած է որոշակի, ուր են montes mille, որ Ծննդոց յիշեալ գլխու 21–24 համարներուն կը հակառակի, զի ատ չորքոտանիք և գազանք՝ վեցերորդ օրը ստեղծուած կ'ասանդուին: Ասոր, Եզրի այս

սխալն ուրիշ կերպով չի մեկնուիր, այլ ուղղակի Բարուքայ յիշեալ տեղւոյն կայր հետեւողութեամբ և թիւր հասկացողութենէն յառաջ եկած է ուղղակի։ Այո՛, այս անկէց իսկ կը տեսնուի, զի Բարուք՝ Ելեւմքայ գրոց Ծէ գլխու 7–8 համարներու և Յոբայ Խ գլխու համաձայն՝ այլաբանօրէն իբրև երկակենցաղ և երկասեռ, այսինքն է՝ ջրային և ցամաքային արու և էգ վիշապներ նկատած է Բեհեմովթը և Լեվիաթանը, որոնք կը չրջին աներևութաբար մերթ ծովու անդնդոց խորը և մերթ ցամաքի վերայ՝ յետ ջրհեղեղին, «արարեալ խաղալիք հրեշտակաց», և թէ անոնցմով պիտի «կերակրին ազինք»։ Այդ, ծանրակչիռ այս երկու հեղինակութեամբք կը կործանին ի հիմանց նաև Հերման Ռէոնչի ենթադրութիւնքն, որ Բարուքայ Իբ գլխու մէջ բերուած տեղին՝ յորում ըսուած է, թէ այդ երկու վիշապներն Մեսիայի ժամանակ պիտի յայտնուին և ըլլան կերակուր մնացորդաց ժողովրդեան, Թարգումէն ներչնչուած և նոր համարեցաւ։

Յոբայ տեղին ամբողջ և անոր բուն իմաստը ցուցած ենք արդէն. այժմ դնենք թարգմանաբար նաև Ենովքայն, որոյ հեղինակն խօսելով վերջին դատաստանի օրուան վերայ՝ կըսէ. «Յաւուր յայնմիկ հանցէ (Տէր) ի սևռևդ չարաց երկուս հրեչս, մին արու և միւսն էգ։ Էգն կոչի Լեվիաթան, որ բնակի ի յարձանս ծովու, ի վերայ ջուրցն վտակաց. իսկ արուն անուանեալ Բեհեմովթ, որ գալարէ զպատուածս իւր խոտորականս՝ յանմատչելի ոչրեք յանապատի»։ Նոյն իսկ Եզրի. «Et tunc conservasti duo animalia... et *servasti ea ut fiant in devorationem quibus vis* et quando vis» *խօսքերն՝ զոր Հերման Ռէոնչ դուրս թողած է, ըստ իս՝ նոյն և նման են Բարուքայ վերը մէջ բերուած տեղւոյ ենթագծուած խօսքերուն, և հետևաբար, անկէ ներչնչուած։ Իսկ հազար լերանց, երկրիս ջրային և ցամաքային մասանց իրարու հետ ունեցած համեմատութեան վերաբերեալ մասն՝ հաւանօրէն բարեւնական և նոր յաւելուած մ'է, և է նշան յետնութեան Եզրի գրոց։*

Անդրագոյնս յառաջելով կը տեսնենք, որ Եզրի է գլխու 1–16 համարներն, ուր առակաւ նեղուցի և ծովու, նրբուղւոյ և քաղաքի՝ կը խօսուի Իսրայելի ժամանակաւոր նեղութեանց և հանդերձեալ վայելչութեանց վերայ, չինուած է Բարուքայ Իբ գլխու 1–2 համարներուն վերայ. 26–44 համարներուա՝ Մեսիայի յայտնութիւն և աշխարհիս վերայ հաստատած թագաւորութեան մասին եղած մանրամասնութիւնքն՝ մեկնաբանութիւններ են Բարուքայ Իթ և Լ գլխոց, ուր համառօտիւ կը նկարագրուին երկրիս բարութիւնքն՝ գալստեամբ

Որդւոյ Բարձրելոյն, զոր կեղծ Եզրասն՝ թիւր մեկնութեամբ 30 (00) երեսնամեայ երկրաւոր թագաւորութեան փոխած է, անյարմար կերպով միացնելով անոր հետ նաև մեռելոց յարութիւնը: Փոխառութեանս ապացոյց են Եզրի 27 համարին մէջ ծնացողաց կամ փրկելոց վերաբերեալ նախադասութիւնն, որ կը համապատասխանէ Բարուքայ այն գլխու 3 համարի նախադասութեան, ուր կը յիշուի Մեսիայի թագաւորութեան պատկանող ժողովուրդն. դարձեալ, յիշեալ գլխու 75–116 համարներն, յորս կը խօսուի ընդարձակաբար հոգւոց երեք վիճակաց վերայ ընդհանուր կերպով և ի մասնաւորի մեղաւորաց՝ եօթն ճանապարհով տանջուելուն, և արդարոց՝ եօթներեսնեան վայելքն. հոգւոց՝ մարմնէն բաժնուելէն վերջ դեռ ի վայելս կամ ի տանջանս չմտած՝ եօթն օր ժամանակ ունենալն, տեսնելու նախապէս իրենց համար պահուած վայելքը կամ տանջանքը. և հուսկ այնուհետև ազգականաց և բարեկամաց իրարու չկարենալ օգնելն, եթէ կը պակասին գործք բարիք. այս ամենայն յերիւրուած են Բարուքայ ԾԱ գլխում աւանդուածներուն վերայ, ինչպէս 34–37 համարներն այլ՝ Բարուքայ Ա գլխու 2–5 համարներուն աւանդածին վերայ: Սակայն պէտք է դիտել, որ Բարուքայ ԾԱ գլխում աւանդուածներն՝ որքան որ ըստ կարգի են և կը համապատասխանեն նախընթաց գլխոյն, այնքան ևս Եզրի քով տեղէն դուրս են և Մեսիայի 30 (00) ամեայ թագաւորութեանն անյարմար: Բարուք՝ նախընթացաբար, այն է՝ ԼԲ գլխում, յետ յայտարարելոյ թէ երկրաւոր Սիոնն կրկին պիտի կանգնի և կործանի, և թէ Բարձրեալն պիտի նորոգէ իւր արարածը, 49 համարին մէջ կը հարցնէ, թէ «In quanam forma vivent viventes in die tuo? aut quomodo permanebit splendor, qui post illud tempus?» այսինքն է՝ յետ յարութեան. ապա ԾԱ. գլխում կը նկարագրէ երանական հոգւոց վիճակը, զորս աւելի գերազանց կը գտնէ իւիք քան զհրեշտակս, բայց մեղաւորաց մասին՝ թեթև ակնարկութեամբ ևեթ կ'անցնի: Ուստի, այս իրողութեանց հանդէպ կրնանք ըսել, թէ Եզրի գէթ այս մասին եղած 81–89 և 100–115 համարներն՝ յետոյ ներմուծուած են, և այդ պատճառաւ է, որ Բարուքայ ԾԱ գլուխն՝ Եզրի քով շատ յառաջ մղուած է: Ասոր յայտնի նշան է և Բարուքայ ԽՀ գլխու, «Oh, quid fecisti Adam omnibus, qui a te geniti sunt?» նախադասութիւնն, որ Եզրի քով կը գտնուի բաւ առ բաւ, բայց յետաձգուած է 118 համարներու մէջ. և յետաձգուած է՝ մեղաւորաց մասին հնարած եօթն պատժոց նկարագիրը ընդ մէջ գետեղելու պատճառաւ, և իւր ձեռնհասութիւնը զգալի ընելու:

Բարուք՝ իբր առաջին տեսիլէն վերջ Ը գլխուամ, կը ժողովէ ժողովրդեան ծերերը Կեդրոնի հովտին մէջ, և կը յիշեցնէ անոնց, որ չմոռնան Սիոնը և Երուսաղեմի աղէտները. վասն զի Բարձրեալն քիչ ժամանակէն պիտի կործանէ զանիկայ և վերստին չինէ. բայց այդ շինութիւնն դարձեալ պիտի աւերի և Երուսաղէմ ճնայ լքեալ, մինչև որ վերանորոգուի ի փառս և պատկառ յաւիտենական պատկառ: Ի՛ Թ գլխուամ կը յորդորէ զանոնք, որ հեռանան իրմէ, մինչև որ ինքն երթայ առ Սուրբն սրբոց և խնդրէ Սիոնի համար նոր յայտնութիւններ: Այդ, ասոնը կը գտնենք նոյնպէս Եզրի քով, Ե գլխուամ. ուր յետ առաջին տեսլեան՝ ժողովրդեան գլխաւորն Փարթխէլ կուգայ առ Եզր ի գաչտ անդր, և կը յորդորէ զնա, որ չքանէ զիրենք ամպարշտաց ձեռքը. իսկ Եզր յետ կը զրկէ զնա մինչև երկրորդ տեսլեան կատարումը: Այո՛, այս զուգադիպութիւնս դիպուածական չէ՝ այլ դիտամբ, ինչպէս յաջորդին մէջ ակներև պիտի տեսնուի Եզրի նմանողութեան հետ՝ նաև խաղացած դերն:

Բարուք՝ Ժ գլխուամ կ'ողբայ մայր Սիոնի և տասարին վերայ, և հոն կը գիշերօթէ, ուր էրն. ԺԱ գլխուամ կ'ունենայ հետևեալ տեսիլը. ընդարձակ անտառ մի տնկուած կ'երևի դաչտին մէջ, զոր կը շրջապատեն բարձրաբերձ լեռներ, — անտառին դիմաց կը բարձրանայ որթատունկ մի, որուն ներքևէն կը բղխէ հեղասահ աղբիւր մի, որ հասնելով անտառը՝ կը փոխարկուի ահագին ծովու մ'ալիքներու, որոնք կ'ողողեն զանտառը, արմատախիլ կ'ընեն ծառերը և կը տապալեն լեռները. ամենայն ինչ հարթայատակ կը լինի, բաց ի նռնիէ մի: Եւ երբ այս իսկ կը խոնարհի, ալիքներն հասնելով որթատնկոյն՝ անդէն կը փոխուին հեզիկ աղբեր մի: Այն ժամանակ որթատունկն կը բարբառի առ նռնին. Ո՞չ դու ես այն նռնին, որ միացեր չարաչուք անտառէն և քու ձեռքովդ շարունակուեցաւ չարութիւնն. ուրեմն՝ լեր վիճակակից անտառիդ, մինչև որ գայ վերջին ժամանակն և դու մեծապէս տանջուիս: Ձետ այնուհետև կ'այրի նռնին, իսկ որթատունկն՝ կ'աճի դաչտին մէջ եղող ծաղիկներու և տուռնկերու հետ ի միասին: ԺԲ գլխուամ կը խնդրէ տեսանողն Աստուծմէ այս տեսլեանս մեկնութիւնը, և յաջորդ չորս գլխահամարներուն մէջ կը մեկնուին անոր գաղտնիքը: Անտառը լեռներով ի միասին՝ է Սիոնը կործանող Բաբելացւոց թագաւորութիւնն, որ ժամանակաւ տեղի պիտի տայ ուրիշ թագաւորութեան մի՝ ինչպէս սա այլ երկրորդի մի, երրորդն չորրորդի մի, որ ամենէն հզօրագոյնն պիտի լինի և չարագոյնն. որ պիտի բարձրանայ Կիրանանու մայրիի մի պէս: Անոր մէջ ծած-

կուած են ամէն անօրէնութիւնք, և անօրէնք առ հաստարակ անոր քով պիտի ժողովին, ինչպէս գաղանք՝ յանտառի: Այն ժամանակ պիտի յայտնուի Մեսիայի իշխանութիւնն՝ նման աղբեր մի և որթատնկոյ, և պիտի կործանէ անօրէն բազմութիւնը: Իսկ անտառէն ծնացած ճռճին, այն է՝ վերջին իշխեցողն, ամենէն վերջը պիտի յաղթուի և տարուի Սիոն լերան վերայ, ուր Մեսիայն անոր գործած անօրէնութիւնքը յանդիմանելէն վերջ՝ վինքն ևս պիտի սպաննէ, և պաշտպանէ այն տեղ ծնացող հաւատարիմ ժողովուրդը: Իւր իշխանութիւնն պիտի տևէ յաշխարհի, մինչև որ վերջ տրուի այս ապականեալ աշխարհիս և լինի լրումն ժամանակաց: Իմ գլխաւոր կը մեկնուին, թէ ո՞յք են որք հաւատարիմ ծնացին Մեսիային և անկէց բարիս պիտի ընդունին և ո՞յք անհաւան գտնուեցան և պիտի տանջուին. այսինքն են, անոնք որ ի սկզբան հպատակեցան, բայց յետոյ դաւաւիք եղան և հեթանոսաց հետ խառնակեցան, և անոնք՝ որք նախ անգէտք էին, և յետոյ ձանչցան ողբարժելիք և խաւարուժից հետ: Հուսկ ապա, ատենցմով կը մեկնուին Իէ և Իը գլուխներու նախընթացաբար մէջ բերուած ժամանակի 12 մասանց իրարմէ յառաջանալու և լրանալու, և անոնց համարոյ չափ եղող մասանց « Duæ partes hebdomadæ τῶν septem hebdomadarum » նշանակութիւնքն:

Արդ, Բարուքայ բոլոր այս թուարկեալ գլխոց և անոնց մէջ պարունակեալ նիւթոց իրարու հետ ունեցած գեղեցիկ կապակցութիւնն ակներև է, որ յայտնի նշան է անկախութեան և միաձոյլ գրչութեան: Գրիչս համեմատութեամբ Եզրի՝ աւելի հաւատարիմ ծնացեր է դանիելեան եօթնեերորդաց, մինչդեռ սա՝ իւր իսկ խոստովանելով՝ թէ « ոչ որպէս յայտնեցաւ եղբօր քումմ », ընդարձակած է ամենուրեք անոր սահմանքը: Այո՛, դառնալով առ Եզր, կը տեսնենք, որ Բարուքայ հիման վերայ բոլորովին տարբեր չէնքեր շինուած են հոս. մի և նոյն չուակիտէն մեկնած՝ բայց տարբեր ուղղութեամբք և ձկտումով շարունակուած են, որոնք ծամածուռ ուղիներու նման՝ մի և նոյն իրաց ընթացից մէջ՝ մերթ ընդարձակ կը կտրեն և մերթ իրարու կը հակադրին. երբեմն մեծ խտրոցով իրարմէ կը հեռանան, և երբեմն խրթնանալով ընթերցողին առջև անելանելի բաւիղներ կը ներկայացնեն: Արդ, Բարուքէն համառօտուած նիւթերը դնելով հոս իրրև համեմատութեան ընդհանուր կէտեր, — զի մասնական նմանութիւններն խիստ շատ են, — դիտել կու տանք, որ Եզրի անյայտ գրիչն՝ Բարուքայ Յայտնութեան յիշեալ աւետաւի և ծովռ

այլաբանութիւնքը իբրև անջատ առած՝ մէջ բերած է, Դ գլխու 13–21 համարներուն, դնելով զայն Ուրիելի բերանը: Բայց անոր հետեւեալ եզրակացութենէն, ուր կ'ըսուի. « Որպէս երկիր տոհմաւ անտառոց, և տեղի աւազոյ (Ա. և լատ. mare = ծով) ալեացն, այնպէս և որ յերկրի են՝ տուեալ են զերկրաւորս գիտել, և որ յերկինս են՝ զերկնաւորն ճանաչել » յայտնապէս կը տեսնուի, թէ իրն այդպէս չէ. որովհետեւ անտառէն և ծովէն ձեռնարկած այդ օրինակն՝ ապագայ լինելիքը գիտնալու կամ ոչ գիտնալու համար անյարմար է և գլխովին անհասկանալի. հետեւաբար, պէտք է առնուլ ճիշդ այն մտքով՝ ինչպէս աւանդուած է Բարուքայ քով, և ինչպէս Եզրի Գ գլխու 31–32 համարներուն, որով սա կը գանգատի՝ իր առանձնախօսութեանց մէջ այսպէս. « Numquid meliora facit *Babilon* quam *Sion*? Aut alia gens cognovit te præter Israel? Ուրեմն աւետաւե՝ որուն տրուած էր տիրել երկրիս՝ էր տուգիւ Բաբելոն, — որուն դէմ Յովհաննէս ևս կը գանգատի ի Յայտնութեան, ինչպէս Բարուք, — որ կործանեց Սիոնը. իսկ ազգերն՝ որոնք Խորհելի չափ չէին ճանաչեր զԱստուած՝ նոյն են Եզրի քով յիշուած հեթանոսական բազմութեան հետ: Եզրի Ե գլխու 1 համարին՝ « Ecce dies venient — a fide regis » նախագուշակութիւնն՝ նոյն է Բարուքայ Լթ գլխու 3 և 5 համարներուն հետ. նոյն գլխու 23 համարի, « Ex omni *silve terræ* elegisti *vineam unam* », և 25 համարի՝ « Ex omnibus civitatis sanctificasti sibimetipsi Sion » նախագուշակութիւններն՝ Բարուքայ վերը յիշուած որթատունկին, այսինքն է՝ յայտնութիւնք Մեսիայի իշխանութեան համաձայն է: Թ գլխու 21 համարին մէջ՝ Արդար կոչուած ծաղկաւէտ դաշտն, ուր կը մեկուսանայ Եզր՝ տեսիլէն յառաջ, հնարուած է Բարուքայ Լէ գլխու 1 համարի՝ « Campum plenum floribus immarcescibilibus » երազաբանական դաշտին հետ, ուր կը տեսնէ տեսանողն, « Vitem crescentem », այսինքն է Մեսիան՝ իր աթոռանիստ Սիոնով: Արդ, այս և ուրիշ մանրամասնութիւններ, զորս համառօտութեան համար զանց կ'ընենք, ցոյց կու տան նմանապէս, թէ Եզրի անմիջապէս յաջորդ, այն է՝ այրիացեալն մայր Սիոնի վերաբերեալ տեսիլն ևս Բարուքայ վերայ ձեւուած է: Յիրաւի, Եզր Ժ գլխու 7 համարին մէջ ուղղելով իր խօսքը առ այլաբանական այրին՝ կ'ըսէ. « Quoniam Sion mater nostra omnium in tristitia contristatur et humilitate humiliata est » և այլն, որ կը յիշեցնէ մեզ ճիշդ Բարուքայ Լա. 4 և Գ. 1 և 4 համարները: Ուշադրութեան ար-

ժանի կէտ մ՚է և այս, որ վերջինս՝ իւր մօր վերահաս կործանուելու վտանգը կ՚ողբայ, մինչդեռ Եզր՝ զայն արդէն իրր ի վաղուց կործանուած։

Եզրի Դ տեսիլն (Թ. 28– ժ. 57) իրրև միջանկեալ յաւելուած մ՚է, ինչպէս տեսանք, Բարուքայ այլ և այլ տեղեաց վերայ ընդարձակուած. իսկ Բարուքայ յիշեալ տեսլեան հետ ամենամօտ նմանութիւն ունեցողներն են հինգերորդ տեսիլն, որ ձօնուած է հռովմէական արծուոյն և անոր ընդդիմամարտող յուդայեան առիւծուն (ժ. 60– ժԲ. 35), և վեցերորդն, այն է Որդւոյ — մարդոյ տեսիլն (ժԳ. 1–53)։ Ասոնց երկու տեսլեանց՝ Եզրի գրոց մէջ գրաւած տեղւոյն և իրարու հետ ունեցած խոտոր համեմատութեան մասին՝ արդէն ի վեր անդր պարզեցինք մեր միտքը, ապացուցնելով, թէ վերջինս՝ Դ տեսլեան հետ աւելի քան թէ նախորդին հետ սերտիւ կապուած է, և անոր իրրև լրացուցիչ մասն համարելի. հետևաբար, դիտմամբ անջատուած է անտի։ Արդ, այժմ բաղդատելով զանոնք Բարուքայ հետ՝ ըսածնուս ճշմարտութիւնն արեւու պէս պայծառ կը փայլէ։ Ասոնց, Բարուք՝ յիշեալ տեսլեան մեկնութեան մէջ (Կթ. 5) համառօտակի յիշելով դանիելեան տեսլեան չորս թագաւորութիւններն, որոնք յաջորդաբար զիրար կը կործանեն, առանձին կերպով կ՚երկարէ իւր խօսքը չորրորդին վերայ, զոր Վիրանանու մայրուոյ կը նմանցնէ՝ իւր բարձրութեան համար, և ապա Առուածորդւոյ ձեռքով սպաննել կու տայ զայն։ Արդ, Բարուքայ այս տեղիս՝ ներշնչել է կեղծ Եզրին կամ նորա գրոց խմբագրողին՝ Արծուէտեսիլն այս տեղ փոխադրելուն և նոր ձևի վերածելուն, մինչդեռ ըստ պահանջելոյ իրաց՝ Որդւոյ մարդոյ տեսիլն՝ պիտի յաջորդէր անմիջապէս չորրորդին կամ լաւ ևս այրիացեալ մայր Սիոնի վերականգնուելուն։

Երկու գրուածոց մէջ ևս այլ և այլ կռուաններ կան այսպիսի մի եղելութեան, բայց ես հետևեալները բաւական կը համարիմ բերել ի հաստատութիւն։ Ա. Եզրի Զ տեսլեան, այն է ԺԳ գլխու 33–38 համարներն, ուր կը նկարագրուին Որդւոյ մարդոյ՝ (filius meus) Սիոն լերան վերայ յաղթական կերպով բարձրանալն, երուսաղեմին իրրև «քաղաք պատրաստեալ և կանդնեալ» ամենուն երևնալն, Որդւոյ մարդոյն՝ իր հակառակամարտ բազմութիւնը յանդիմանելն և հոն սպաննելն և երկրիս վերայ իւր բարձրագոյն իշխանութիւնը հաստատելն՝ կը համապատասխանեն գրեթէ բառ առ բառ Բարուքայ Ե գլխուն ասանդուածներուն, որոնք ընդհակառակն բուն իրենց բնական տեղւոյն և կարգին մէջ են։ Բ. նոյն տեսլեան, այս-

*ինքն ԺԹ գլխու 13, 30-40 համարներն, ուր կը նկարագրուին Որդւոյ մարդոյ քով ժողովուած խաղաղ բազմութիւնն, նոյն են Բարուքայ Խ՚ գլխու 2–4 համարներուամ աւանդուածներուն հետ. միայն թէ Եզրի քով պիտամբ այն տասն ցեղերուն վերայ յարմարցուած են, զորս Սաղմանասարի ձեռքով գերի տարուած կը համարի, նուիրելով անոնց 41–48 համարներուամ՝ Եփրատայ վերայ գործուած զարմանասքանչ արարուածները, որոց իրենց սկզբնաղբիւրէն, այն է՝ Թագ. ԺԷ. 6, 24 համարէն ունեցած ամենամեծ տարբերութիւնքն իսկ կասկածելի են: Արդարև իսկ, եթէ Եզրի այդ մասն Բարուքէն աւելի հին լինէր, կարելի բան չէ, որ սա յարմար առթին իսկ ի լռութեան թողած ըլլար զայն: Ոստի, Եզրի քով որչափ որ անճահ կ՚երևի այդ հատուածն՝ նախորդ տեսլեան, այնքան ևս պեղծիկ ճահաւորութեամբ և կապակցութեամբ կը կնքէ Բարուք իւր տեսիլն, այսպէս. « Et commisti sunt semini populorum, quod se segregavit, horum tempus prius. Et tempora hereditabunt tempora, et horæ horas, et unum ab altero accipiunt, et tunc fini adæquabitur omne, sicut temporum et sicut horæ (τῶν καιρῶν).

Գ. *Այս տեսիլէս վերջ, Խգ գլխուամ, Ասուած կը յայտնէ Բարուքայ հետևեալը,* « Abibis enim de isto loco, et transibis de regionibus, quæ apparent tibi nunc, neque recordaberis iterum eorum, quæ inter mortales sunt », *այսինքն թէ,* « *Այս տեղէս ուրիշ աշխարհ մի պիտի փոխուիս, որ այժմ կ՚երևի քեզ. այլ և չպիտի յիշես այն ապականացու բաները, որոնք կը կատարուին մահկանացուներուն մէջ* »: Ապա կը յանձնէ Բարուքայ, որ երթայ առ ժողովուրդն՝ յայտնելու իւր տեսածները, դառնայ այն տեղ, պահէ եօթն օր, և յետ այնորիկ ինքն պիտի գայ և խօսի իւր հետ: Արդ, դառնալով առ Եզր, զայս ամենայն կը գտնենք Զ տեսլեան սկիզբը գետեղուած (այսինքն է ԺՒ գլխու 38–51 համարներուամ), որ ըստ ինքեան յետադարձ ընթացքով՝ վերջն ըլլալու էր, այն է ԺԹ գլխու 13–14 համարներուամ, որոց երբեմն կը յաջորդէր անմիջապէս, — ի հարկէ այժմեանին հետ ունեցած խոտոր համեմատութեամբ, — հինգերորդ տեսիլն, դիտելով մանաւանդ՝ որ այդ գլխու 10–12 համարներուն մէջ՝ ժամանակի $12\frac{1}{2}$ մասանց (կամ ցեղից) վերաբերեալ տեղեկութիւնն՝ Բարուքայ ԽՒ գլխու հետ ըրած համեմատութեան համաձայն՝ Որդւոյ մարդոյ տեսլեան մասն համարուելու էր, և ոչ թէ Էզին, ուր դիտամբ փոխադրուած է և կղզիացած դիրք մ՚առած:

Վերջապէս, Խ–ՎԲ գլխոյ ընդարձակ պատրաստութենէն վերջ, – որոնք եզրի Ե և Զ տեսիլներուն հետ զարձեալ մերձաւոր ազգակցութիւններ ունին, – կը տեսնէ Բարուք իւր վերջին տեսիլը. և ահա արդ մի կ'ելնէ անձայրածիր ծովեզր, որ լի է ապիտակ և սև ջրերով, որոնց մէջ կը նշմարուին բազմազան երանգներ: Ամպին վերջակողմը՝ կայծակի նման փայլակնացայտ է, որ արագութեամբ ընթանալով՝ կը ծածկէ բովանդակ երկիրս: Կը սկսի տեղալ երկրիս վրայ, և այդ տեղացած ջրերն աննման են իրարու. այսինքն է՝ ի սկզբան խիստ սև են, և յետոյ յոչսափայլ, որոնք երկոտասանիցս կը յաջորդեն իրարու: Սևերն՝ միշտ աւելի են ապիտակներէն: Յետոյ ամպին յետակողմն երևցող կայծակն՝ քարշելով կը խոնարհեցնէ դինքը մինչև յերկիր, որ կը լուսաւորի անոր փայլիւնով. և այն գաւառներն մանաւորապէս, որոնք նեխեալ ապականուած էին սև ջրերով՝ կը բուժին: Կը գրաւէ նա բոլոր երկիրս և կը տիրապետէ: Ապա կ'ընթանան ծովէն 12 գետեր և կը պաշարեն այն փայլակնացայտ կայծակը: Արդ, զայս ամենայն տեսնելով Բարուք՝ երբ կը դողայ և կ'աղօթէ, անդէն կ'երևի Բաւիղ հրեշտակն, « qui præest visionibus veritatis » ըստ հեղինակին, և կը մեկնէ, թէ ծովէն ելնող և երկիրս ծածկող ամպն՝ է տևողութիւնն կամ ժամանակ, որ արար Աստուած: Ի սկզբան տեսնուած սև ջուրն՝ է պատուհասազգացողութիւնն Ադամայ, որով յառաջ եկան մահ, վիշտք, ցաւք և վարտակք...: Ասոր յաջորդող պայծառ ջուրերն կը նշանակեն Աբրահամոս ծնունդը և անոր յաջորդ սերունդքը...: Երրորդ սև ջրերն՝ են խառնուրդն արեան վեղաց, զոր յետ այնորիկ գործեցին ազգեր և ժողովուրդներ, Եգիպտոսի մէջ և ուրիշ տեղ, որուն համար և կորսուեցան: Չորրորդ պայծառ ջրերն են գաղտնեաց Մովսիսի, Ահարոնի, Մարիամու, Յեսուայ որդւոյ Նաւեայ, Քաղեբի և նմանեաց... Հինգերորդ սև ջուրերն են կախարդական և կռապաշտական գործք Ամորհացւոց, որոց հետ հաղորդեցաւ Իսրայէլ...: Վեցերորդ պայծառ ջրերն՝ կը նշանակեն այն ժառանգակը, յորում ծնան Դաւիթ և Սողոմոն, և կանգնեցաւ Սիոն...: Եօթներորդ սև ջրերն կը նշանակեն Յերոբովամայ ապստամբութեան և որդապաշտութիւնը: Զերաբելի պղծութիւնքը և Իսրայելի գերութիւնը՝ Սաղմանասարի ձեռքով: Ութերորդ պայծառ ջրերն՝ կը նշանակեն Յուդայի թագաւորին Եզեկիեայ իւնաստութիւնը... որով ազատեցաւ Սիոն...: Իններորդ սև ջրերն՝ են Մանասէի ժամանակ կատարուած ամպագործութիւնքն, որոց համար կործանեցաւ Սիոն: Տասներորդ պայծառ ջրերն կը նշանա-

կեն Յուդայի թագաւորին Յովսեայ արքունչիւնը, որով սրբեցաւ երկիրն կռապաշտութենէ, և հաստատեցան տօնք և շաբաթք...: Մեծ տասաներորդ սև ջրերն՝ են աղէտքն, որոնք այժմ եկան Սիոնի վրայ...: Երկոտասաներորդ պայծառ ջրերն՝ նշանակք են այն ժամանակին, յորում Սիոն վերստին պիտի կանգնի, և նորոգուին քահանայութիւնն և պատարագք, յետ որոյ պիտի լինի մեծ կործանումն ազգաց բազմաց: ԿԹ գլխում, կը շարունակուի՝ թէ այն ջրերն, որոնք ամենէն աւելի պղտոր էին և սևագոյն, և յայտնելով ժրին՝ մեռուցին զամէնքը՝ կը նշանակեն բովանդակ աշխարհի վերապահուած աղէտներն և չարիքը: Բարձրեալն՝ կը նախատեսէ այն 6 եղանակները, որոնցմով արդարոց բարի գործերն պիտի կատարուին, և այն 6 եղանակները, որոնք պիտի կատարուին ի վախճան ժամանակաց: Հ գլխում կը յայտնուին երկրիս բնակչաց մէջ ծագելիք խռովութիւններն, պատերազմներ և կոտորածներն, որոնցմով պիտի կործանեն և իրարու յաջորդեն: Սրէն ազատուողներն՝ երկրաշարժով պիտի կորսուին, և ասկէ ազատուողներն՝ հրով պիտի այրին, և հուրէն ճնացողք՝ սովով պիտի մեռնին. միով բանիւ՝ այս ամէն չարիքներէն ազատուողք, թէ ի պարտեզոց և թէ պարտողներէն, Մեսիայի ձեռքը պիտի ինկնան: ՀՍ գլխում կ'ըսուի, թէ այն ժամանակ սուրբ երկիրն պիտի գթայ անոնց վերայ և պաշտպանէ իւր բնակիչները: ՀՌ գլխում մեկնելով սեւ ջրերուն յաջորդելով ժրին՝ դող պայծառ ջրոց ընդհանուր միտքը, կ'ըսուի, թէ բոլոր նախընթաց նշաններն կատարուելէն վերջ՝ պիտի գայ իմ Մեսիաս, և այն ազգերէն զոմանս պիտի կենդանացնէ և զոմանս սպաննէ. և թէ ապրողներն անոնք են, որոնք ոչ ծանօթութիւն ունեցան Իսրայելի մասին և ոչ այլ Յակոբայ զաւակը հարստահարեցին. իսկ անոնք, որք տիրեցին սոցա վերայ, սրով պիտի մատնուին: Հուսկ ապա ՀԹ և Հ գլուխներում կը նկարագրուի Մեսիային աշխարհիս վերայ ըրած բոլորական յաղթութենէն վերջ՝ անոր յաւիտենական թագաւորութիւնն, համաձայն Եսայեայ մարգարէութեան ՀԶ գլխուն. կը ծանուցուի ապա տեսանողին, որ ի տար աշխարհ վարուելէն յառաջ՝ բարձրանայ այն (Սիոն) լերան վերայ, ուր իր աչաց առջևէն պիտի անցնին ամենայն աշխարհք և տիեզերք առհասարակ, բարձր լեռներ, հովիտներ և ծովեր, որպէս զի տեսանէ՝ եթէ ինչ բան պիտի թողու և ձուր պիտի երթայ: Բայց որովհետև այս պիտի հանդիպի 40 օրէն վերջ, ուստի կ'ըսուի անոր, որ այդ օրերուն մէջ երթայ և ուսուցանէ ժողովուրդը: ՀԷ գլխում կը հաղորդէ Բարուք բոլոր իւր

տեսած յայտնութիւնքը 12 ցեղերէն ընացած ժողովրդեան, և նաեւ
լոյլ կաղնւոյն ներքև կը գրէ իւր երկու թղթերը, որոնց մին կը կո-
չուի « Epistola doctrinæ et volumen annuntiationis », զոր կը
յղէ առ գերեալսն Բաբելոնի, և միւսն՝ արծուի ձեռօք առ ինն և
կէս ցեղս:

Բարուքայ այս տեսիլս կը պարունակէ 5228 ամաց ահագին մի-
ջոցը և ընտրեալ ժողովրդեան վերայ կատարուած չարեաց և բա-
րեաց 12 դարագլուխները՝ իւր դրացի ազգաց հետ ունեցած արա-
րուածներով: Ես չեմ ուզեր այս տեղ կանգ առնուլ և քննել, թէ
արդեօք այդ տեսլեան հեղինակն՝ նոյն եղած է առաջիններէն գրո-
ղին հետ, թէ ընդ հակառակն յետագայ մէկն է, որ կամ Բարու-
քայ առաջին գլուխներու և կամ Եզրի հետևողութեամբ այս տեսիլս
յօրինած ըլլայ: Ապացոյց երկբայութիւն մի, եթէ այլք ունեցած են
երբէք, հիմնաւոր չերևիր ըստ իս. զի ամենուրեք մի և նոյն ջերմ
հրէի վշտաց և կենդանի հաւատքին և յուսոյ ցաւագին բարբառն
է՝ որ կը հնչէ և ճնշէ, որ օտարի մի համար ըստ ինքեան անհաս-
կանալի է: Այլ կ'ուզեմ միայն հաստատել, թէ Եզրի գրոց վերջին
երեք տեսիլներն, այսինքն են Ե, Զ և Է՝ եթէ ոչ իրենց արտաքին
ձևովն, այլ անտարակոյս իրենց ներքին պարունակութեամբն՝ յետա-
կանս, Բարուքայ հետևողութեամբ յօրինուած են և հետ գհետէ
բարգաւաճուած, որուն համար և կրկնաբանութիւնք այնքան գործի
են, բայց ի հարկէ բոլորովին նոր և տարբեր քաղաքական և պատ-
մական հանգամանաց ազդեցութեան ներքև, զոր ճանաչած չէ և չէր
այլ կրնար ճանաչել Բարուք: Այո՛, չէ կարելի այլ ևս երկբայել, որ
Եզրի ԺԱ գլխում նկարագրուած ծովէն ելնող արծիւն՝ իւր 12 բուն
թևերովն և 6 աւելորդ թևերովն՝ ուրիշ բան չէ ըստ էութեան՝ բայց
եթէ այլափոխութիւն ինն Բարուքայ յիշեալ տեսլեան մէջ ծովէն
ելնող ամպին, անոր՝ երկրիս վերայ տեղացած 12 սև և սպիտակ
գետերուն և 6 եղանակաց, որոնց համաձայն՝ Բարձրեալէն սահման-
նուած չարիքն եկան Իսրայելի և երկրիս բնակչաց վերայ: Այս այ-
լափոխութիւնս՝ բնական է կեղծ Եզրի կամ Սաղաթիելի համար.
վասն զի ինչպէս Բարուքայ Յայտնութեան անյայտ գրիչն՝ կը գլխով
իւր ազգին հին ժամանակաց պատմութիւնը համառօտելէն վերջ,
կ'անցնէր այնուհետև անոր ապագայ պատմութեանը, այն է գերե-
զարձին և տաճարի և Սիոնի վերաշինգնման, խոստանալով Մեսիայի
թագաւորութեան և նոյն իսկ այն ժամանակի վերաբերեալ հանգա-
մանաց, յորում ինքզինքը ապրել և գրել կեղծած է, ինչպէս և

այն ժամանակին, որուն մէջ իրօք այլ ինքն ապրեցաւ և գրեց. այսպէս ըրած է, անտարակոյս, և՛ Եզրի Դ գրոց հեղինակն: Կեղծ Բարուք՝ որովհետև Երուսաղեմի վերջին կործանմանէն և Հռովմէական արծւոյն Պաղեստինու վերայ բոլորական տիրապետութենէն յառաջ կ'ապրէր [1], այն պատճառաւ իսկ փոխանակ արծւոյն՝ ամպի, այն է՝ բարի և չար ժամանակաց այլաբանութիւններով կը վարուի: Այս ամենաբնական էր, զի նա արծւոյն՝ սուրբ երկրին մէջ գործած աւերմունքը դեռ աչօք տեսած չէր, այլ այնչափ կը ճանաչէր զայն, որքան Դանիէլ գուշակած էր: Իսկ կեղծ Եզրն՝ որովհետև Երուսաղեմի՝ Հռովմայեցւոց ձեռքով կրած վերջին կործանմանէն և արօրապրուելէն և հրէական ազգին ցիրուցան լինելէն վերջ կ'ապրէր [2]. ուստի ըստ այսմ ևս նա կարևոր համարած է իւր նախորդին տեսլեան նիւթը այլափոխել, պահելով անոր 12 և 6 թիւերը, այլովք հանդերձ: Այո՛, կը կրկնենք և կ'երեքկնենք, թէ կեղծ Եզրն այլափոխած է զԲարուք, դուրս թողլով, իբրև ծանօթ բաներ, Հրէից նախկին պատմութեան վերաբերեալ սև և պայծառ ժամանակները, որովհետև ուրիշ մերձաւոր ցաւեր և աղէտներ կը նեղէին Հրէաստան ազգն և աշխարհը. որովհետև ինքն ևս աղետից ականատես էր: Երկոտասան թևերն և 6–8 աւելորդ թևերն, այսինքն է՝ Հռովմէական արծւոյն վերաբերեալ իշխանապետաց յիշատակութիւնն՝ պատրաստ մ'է՝ պարզապէս կարգը պահելու իւր և իւր աղբեր աւանդածին մէջ. այլ ազգ իսկ կարող էր նա անդրագոյնս տարածել այդ թիւերը մինչև իւր ժամանակ, և իրօք իսկ տարածած է լուեւեայն, — ինչպէս ցոյց տուինք, — բովանդակելով իւր գրութեան մէջ նաև զինուորական կայսերաց սկիզբն և վերջին արարուածքը:

Առիւծն Յուդայի, զոր հանել կու տայ անտառէն եզր, ուրիշ բան չէ՝ ըստ էութեան, բայց եթէ Բարուքայ քով (ԼՉ, ԼԷ, Խ գլուխներուն) անտառի մէջ աճեցուն Որթատունկն, կամ լաւ ևս Մե-

1. Այս բանս առանց տարակուսի է Բարուքայ ԼԹ գլխէն, ուր առիթ ունենալով խօսել Դանիէլեան չորրորդ թագաւորութեան մասին և միւս թագաւորութեանց դէմ տարած յաղթութեան վրայ, քնաւ ակնարկութիւն չըներ Երուսաղեմի մասին անոր գործած չարեաց, այլ՝ ընդհակառակն՝ անոր նկարագրած բոլոր պայքարն՝ է առաւածպեսական ազգին և հեթանոսաց մէջ առհասարակ:

2. Իրօք, այս բանս յայտնի կը տեսնուի Եզրի գրոց ԺԱ գլխու 42 համարէն իսկ, ուր խօսելով գրիչն չորրորդ թագաւորութեան, այն է՝ Հռովմայեցւոց և անոնց հասուցած աղետից մասին՝ կը գրէ. « *Et destruxisti habitationem* (Երուսաղէմը) *eorum*, qui fructificabant, *et humiliasti muros eorum, qui te non nocuerunt* », այսինքն են Հրեայք:

սխայն: Ասոր յայտնի ապացոյց են նաև հետևեալ համաձայնութիւններն. այսինքն է, Եզրի ԺԱ գլխու 38 համարին մէջ՝ առիւծն կը խօսի դատաստանաւ արծուոյն հետ, և յանդիմանելով անոր անօրէնութիւնքը՝ կը սպաննէ զայն՝ սուրբ լերան վերայ. նոյնը կ՚ընէ նաև Որթատուռնիկն՝ Բարուքայ ԼՉ գլխում: Դարձեալ, Եզրի ԺԲ գլխու 28–33 համարներուն՝ ճնացած գլուխն, – իբր աղաւորմը փոխուած 2 թևերովը, – նոյն է Բարուքայ Ի գլխում յիշուած վերջին իշխանին « Dux ultimus » կոչուածին կամ հպարտ մայրուոյն հետ, զոր կը սպաննէ Որթատունկն ի վախճանի: Եզրի քով արծուէտեսլեան հեղինակն՝ թէև ջանացեր է ինքզինքը Բարուքէն անկախ և աւելի հեղինակաւոր ցոյց տալ, սակայն բաց ի մինչև ցարդ եղած դիտողութիւններէն՝ հետևեալքն իսկ կասկածելի կ՚ընեն զայն. և այդ կասկածն այնքան աւելի հիմնաւոր է, որքան որ նա այլ և այլ իրարու անյարիր աղբիւրներէ ձևացուցած է: Յիրաւի, նա արդէն խոստովանեցաւ, թէ իւր այդ տեսիլն՝ թէպէտ և Դանիէլի Է գլխում աւանդուածին վերայ հիմնած է, բայց անկէ տարբեր բաներ պիտի յայտնէ. արդ, մենք կը տեսնենք, որ թէ ըստ Դանիէլի և թէ ըստ Բարուքայ անծայրածիր ծովէն, ուսկէ կ՚ելնեն (ըստ առաջնոյն) չորս գազաւիներն, և ըստ վերջնոյս՝ տեղացող ամպն, է տևողութիւնն կամ յաւերժականութիւնն, յորմէ կը յառաջագային ժամանակն, և որուն մէջ կը կատարուին վէպք և դէպք աշխարհի. ուրիշ կերպով անկարելի էր ըսել Ասորեստանեայց, Մարաց և Պարսից պէս ցամաքային պետութեանց համար, թէ ծովէն կ՚ելնէին: Իսկ արծուէտեսլեան հեղինակն՝ նիւթապէս կրկնած է Դանիէլի խօսքը, առանց մեկնելու անոր ծովի նշանակութիւնը: Բ. Դանիէլի՝ յիշեալ գլխու 24 համարին մէջ արդէն յիշուած է. « Եւ տասն եղջիւրք՝ տասն թագաւորք յարիցեն, և զկնի նոցա յարիցէ այլ... որ խոնարհեցուսցէ զերիս թագաւորս » և այլն. ուրեմն ինչ էին նորա աւանդելի նորութիւններն. ոչ այլ ինչ՝ բայց եթէ Բարուքայ Ի՛ գլխէն և անդր ակնարկած Մեսիայի և հեթանոս թագաւորութեանց իրարու հետ ունենալիք ընդհարումներն, զորս նա հռովմէական արծուոյն վերայ կեդրոնացուցեր է՝ իրեն մօտ օրերը կատարուած դէպքերու գոց և մթին այլաբանութիւններով: Սակայն, նա այս տեղ իր վերայ առած մարգարէական դիմակը՝ Զ տեսլեան մէջ իւր իսկ ձեռքը վար առած է. որովհետև հոս կը թողու մանեականը՝ և խօսքը կը դարձընէ երկրիս ընդհանուր բնակչաց վերայ կատարուելիք նշաններուն. և առ ժամս Բարուքէն հեռացած կարծուած ժամանակ, յանկարծ անոր

մօտ կը գտնուի, և իւր խզած թելը՝ վերստին ձեռք կ՚առնու՝ յառաջ վարելու, մերթ քակելով մերթ կնճռելով իւր ազբեր հիւսածը։ Այո՛, նա ծ գլխու 50 համարին մէջ՝ արծւոյ տեսիլէն անմիջապէս երկու տող յառաջ կը մռնայ, կարծէք, Բարուքայ գծած որոշ սահմանը, և առ ընդհանուր կը ձկտի, ըսել տալով իւր հրեշտակին.

« Et ostendet tibi Altissimus eas visiones somniorum quæ faciet Altissimus *his, qui habitant super terram* ». *Ուշ դնենք այս խօքերուս, որոնք հաւասար են Բարուքայ ԻԹ գլխու 1 համարի՝*

« Tunc erit terræ, quod eveniet tunc; propterea omnes, qui vivent, sentient ». *Ուսաի, երբ կը տեսնենք՝ որ կեղծ Եզրի այս յայտարարութիւնս փոխանակ արծւոյն՝ Որդւոյ մարդոյ տեսլեան հետ կ՚երթայ կը միանայ, ինչպէս պլուխն՝ իւր իրանին հետ. երբ կը տեսնենք, որ խնդիրն այլ ևս այս ինչ կամ այն թագաւորութեանց վերայ չէ, այլ ընդհանուր մարդկային անօրէնութեանց, որոնք անխըտիր ամենայն ազգերէ, աշխարհներէ միահամուռ ժողովուած կը կռուին ծովէն ելնող կամ Սիոնի վերայ բարձրացող Առաւաժամարդոյն դէմ. միով բանիւ, երբ կը տեսնենք, որ ստրա աւանց պէնքի տարած յաղթութիւնն և կանգնած թագաւորութիւնն՝ Բարուքայ նկարագրութեան և մտաց համաձայն է, բնաւ չենք տարակուսիր հետևցնելու, թէ արծուէտեսիլն՝ միջանկեալ բան մ՚է, և թէ Որդւոյ մարդոյ տեսիլն՝ Բարուքայ հետևողութեամբ յօրինուած է։ Անտարակոյս, Եզրի ԾԹ գլխում՝ ծովէն բարձրացող և ամպերու վէրչ ծրաբուած մարդակերպեան կենդանին, որ ուր կը դիմէ՝ հուր և կայծակ կը ցայտեցնէ, և իւր ընդդիմակացները կ՚այրէ կը մրկէ, նոյն է Բարուքայ ՃԱ գլխում ծովէն ելնող ամպին յետակողմը ծածկուած կայծակին հետ, որ արագ ընթանալով՝ կ՚այրէ հեթանոսական ազգաց անտառն և անկէ կանգուն մնացող բարձրացեալ մայրին. որ իջնելով երկրիս վերայ՝ կը լուսաւորէ զայն և կը բուժէ սև ջրերէն ազդուած և պղծուած անդաստաններըը. միով բանիւ՝ իսկական մանր պարագաներով երկուքն ևս իրարու կատարեալ կերպով կը համաձայնին։*

Անցնելով Եզրի Ե տեսլենէն՝ եօթներորդին, զարձեալ ամենայն ինչ յարմարուած կը գտնենք Բարուքայ ՀՉ–ՀԷ գլուխներուն և իէ գլխում աւանդուածներուն վերայ։ Այս տեսլեանս պարունակութիւնն և անոր նպատակն արդէն ակներև դրինք կանխաւ, ուստի աւելորդ է այս տեղ վերստին կրկնել. այլ բանասիրաց ուշադրութիւնը կը հրաւիրենք միայն հետևեալ կարևոր կետին վերայ, որ

*լուծումն պիտի լինի մինչև ցարդ մեր պաշտպանած կարծեաց։ Եզրի ԺԴ գլխու 44–46 համարներուն, ինչպէս տեսանք, կը յայտարարուին 40 օրուան մէջ գրուած 94 գրեանք։ Նախընթացաբար խօսելով այս տեղւոյս վերայ, ցոյց տուինք անոր անտեղութիւնը, դիտելով՝ որ ո՛չ պատմական և ոչ կեղծ Եզրի ժամանակ կարէր Հրէից կանոնական գրոց թիւն հասնել 24, թող թէ 94ի։ Երկրորդ, այդ տեսլեան 7–8 համարներուն խօսքն միայն Եզրի տեսած և լսած յայտնութեանց վերայ է, և ոչ թէ 22 համարին մէջ խնդրուած գրաւոր օրինաց կամ կանոնական գրոց մասին, որոց թիւն անգամ որոշակի յիշուած չէ։ Արդ, այս այսպէս լինելով, ըստ ես, Բարուքայ Յայտնութեամբն՝ Եզրայ գրոց այս վերջին հանգոյցն ևս կարելի է լուծուած համարել։ Եւ ստուգիւ, նախ որ Բարուքայ այդ գրուածի մէջ իսկ, նման Եզրի յիշեալ տեղւոյն, կ՚ըսուի իրր յԱստուծոյ. «Scribe in *memoria cordis* tui omne quod *disces* ». Իսկ Հն գլխում ժողովրդեան կողմէն կը յանձնարարուի՝ «Scribe etiam fratribus nostris ad Babilonem *epistolam doctrinæ* et *volumen annuntiationis*, ut eos quoque confirmes, priusquam discedes a nobis ». Հուսկ ապա՝ Բարուք ինքնին կ՚ըսէ՝ «Et fuit in prima et vigesima in mense octavo, veni ego Baruch, et sedi subtus quercum... et scripsi has duas epistolas, unam misi per aquilam ad novem tribus et dimidiam, et alteram misi ad eos qui erant in Babilone *per tres homines* ». Արդ, նկատելով՝ որ այս երեք յայտարարութիւնքս յար և նման են Եզրի ԺԴ գլխու 8, 22, և 42 համարներում եղած յայտարարութիւններուն. նկատելով որ Եզրի ԺԴ գլխուն 21 համարին մէջ ենթադրածին հակառակ՝ Բարուք գրաւոր օրէնքը խափան այրուած և անհետացած չհամարիր[1], ըսելով՝ «Et si nos abeamus, attamen *lex stat;* si ergo respexeritis in legem... non deficiat lucerna », հետևաբար՝ և ոչ իսկ զանոնք ամբողջապէս նորէն գրելու յիշատակութիւն։ Վերջապէս, նկատելով որ, ըստ Բարուքայ՝ յիշեալ գլխում գրութեան վերաբերեալ խօսքն՝ ո՛չ եթէ կանոնական և կորսուած գրոց, այլ իրեն եղած առանձին յայտնութեանց մասին է, կարեմք ամենայն իրաւ-*

1. Յայտնութեանս մեր ձեռք հասած միակ ասորի թարգմանութիւնն՝ 87 գլխահամարով կ՚աւարտի, որովհետև ՀՆ գլխու մէջ յիշուած երկու թղթերէն մին միայն, այն է՝ արծուոյ կամ լաւ ևս հիւսիսային սուրհանդակի միջոցով յուղարկուածն մեզ հասած է, համառօտութեամբ. իսկ Բաբելոնի գերեվարներուն գրածն՝ կը պակսի, որով կը լրանային հաւաքօրէն 94 գլուխներ։

ամբ եզրակացնել թէ, ապա ուրեմն, կեղծ Եզրի ԺԴ գլխում յիշուած 94 գրքերն՝ ուրիշ բան չեն նշանակեր, բայց եթէ Բարուքայ ԶԴ 1 գլուխներէ բաղկացած Ցայտնութեան եբրայական բնագիրն, որ մեր ձեռքը հասածէն շատ տարբեր ըլլալու էր, և զոր իբրև սկըզբնագիր գործածած է Եզր–Սաղաթիէլ կամ նոցա յոյն խմբագրողն:

Այսպէս ահա, Բարուքայ Ցայտնութեան հաւեմատութեան ձեռքով՝ մենք կ'ունենանք Եզրի անկանոն գրոց աղբերաց լուծումը, զոր Կապիչ՝ անտես ընելով, ստիպեցաւ իւր աստուածաբանական դրութեամբ հնգէն մինչև վեցի վերածել, սակայն առանց ցոյց տալու մեզ համոզիչ փաստերով, թէ որո՞ց ձեռաք և ինչ պատճառ յօրինուեցան իրարմէ տարբեր այդ գրութիւնները, կամ թէ ինչ նպատակաւ և որո՞ւն ձեռքով այդ անջատ աղբիւրները՝ իրարու հետ միացան: Այս, ըստ իս, աւելի անլուծանելի կնճիռ մ'է, այնու մնանաւանդ, որ մինչև ցայսօր այդ տեսիլներէն ոչ մին չյայտնուեցաւ առանձինն, որ հաստատէր Կապիչի վարկածը: Իրաւ է, որ Դանիէլի և Ենովքայ մեզ հասած երկու անկանոն տեսիլներն՝ ունին ինչ ինչ նմանութիւններ արծուէտեսլեան հետ, բայց դոքա՝ էն դարէն վերջ յօրինուած են, ըստ այժմեան ձևոյն և պարունակութեան. ինչպէս Բարուքայ և Աբդաւետքայ Պատուհասի կոչուած միւս գրուածն այլ՝ Բարուքայ Ցայտնութեան վերայ:

ԵԶՐԻ ԱՆԿԱՆՈՆ ԳՐՈՑ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆ. Հիլգենֆէլդ, իւր «Esras profeta II» խորագրած հրատարակութեան մէջ, բազմաթիւ կոչումներ ցոյց տուած է այս գրքէս, բայց մասնաւորապէս Գ և ԺԴ գլուխներէն, որոնք նոյն և նման են հեաեւեալ անկանոն և կանոնական գրուածոց մէջ նշանակուած տեղերուն. այսինքն են՝ Սիբիլեան Պատգամք՝ Գ. 46–52. — Վերացումն Մովսեսի՝ ժ. 28, – Պաւղոսի առ Թես. Դ. 15–17, – Առ Հռոմ. ժ. 78, ԺԱ. 17 և այլուր. — Գաղ. Դ. 25, — Ա. Կորնթ. Ւ. 9, – Մատթ. Է. 13, 14, ժ. 16, ԺԳ. 3, ԺԶ. 28, Ի. 16, ԻԳ. 2,23. — Յովհ. Յայտ, Ա. 15, Զ. 9, ԺԻ. 1, 2, 6, 13, ԺԹ. 6, Ի. 12, ԻԱ. 2, 23. — Գործ. Առ. Ա. 3, — Հաւքսաբաձուկն Քրիստոսի ԺԴ. 23. — Պետր. Ա Կաթ. Ա. 13. — Բարուքայ Ցայտնութիւն ծայրէ ծայր. – Թղթ. բառն. Դ. 7, 8 (14), Զ. 20, 21 (13), ԺՒ. 1. — Շէփերդ և Հերմաս՝ ընդհանուր նմանութիւններ ունին Ա–Դ տեսիլներուս հետ. — Վերացումն Եսայեայ գլ. Դ. 5:

Գիտնականիս նշանակած այս տեղիքս՝ եթէ ստուգիւ Եզրի Դ գրքէն եղած բանաքաղութիւններ համարինք, ոչ միայն մեծ ապացոյց են

նորա հնութեան, այլ նոյն իսկ ծանրակշիռ հեղինակութեանն: Սակայն, մենք մեր ցարդ ըրած ուսումնասիրութեան համաձայն, չենք կրնար ընդունել զայս ընդհանուր կերպով իրրև ճշմարիտ, քանի որ յիշեալ տեղեաց ոչ միայն մէջ յանուանէ յիշուած չէ Եզր Սաղաթիէլ: Բ. Դիտելու ենք, որ այս անկանոն գրութիւնս՝ այժմեան ձևով փրկչական թուականի 100–120էն յառաջ չկարէ գրուած լինել, մինչդեռ վերոյիշեալ հեղինակներէն դէթ կանոնականքն՝ 60–100ին ոչ միայն գրուած, այլ և ի սիրուս տարածուած և ամենուն քաջածանօթ էին: Գ. Հելգենֆելդի ցոյց տուած տեղիքն՝ կարող են, համանօրէն, առնուած լինել փոքր արարածոցեն, Ենովքայ Գրքեն և Բառուքայ Յայտնութենեն, որուն Եզրի հետ ունեցած ամենամեծ աղերսին հետ՝ առաջնութիւնն իսկ յայտնի եղաւ: Հերման Ռէոնչ [1] իսկ խօսելով վերջնոյս՝ Եզրի հետ ունեցած նմանութեանց մասին, կը նշանակէ հետևեալ տեղիքը գլ. ԺԵ. 8, — ԺԶ. 3, — ԻԲ. 1, — ԻԷ. 2–14, — ԻԱ. 6, — ԾԱ. 11, — ԽԸ. 10, — ԾԱ. 3, — ԾԹ. 7, — ՇԶ. 10–14, — ՇԷ. 2, — ՉԲ. 9, — Հ. 2–10, — ՉԵ. 10, — ՀԲ–ՀԴ, որոնք, կ'ըսէ, մասամբ սերտ աղերս ունին փոքր արարածոց կամ Յոբելինեից գրքին, և մասամբ Ենովքայ և Եզրի գրոց հետ. իսկ որովհետև այս գրուածներս աւելի հին են քան զԵզր. ուրեմն հետևութիւնն յայտնի է:

Գալով Եզրի գրքէն եղած այն կիրառութեանց, զորս գտած և մէջ բերած է Էրմիտաժ Ռոբինսոն՝ [2] Կղ. Աղեքսանդրացիէն սկսեալ՝ մինչև Լեւոն Ալլատիոս, հին մատենագրաց քով, կրնանք ստուգիւ Եզրի Դ գրքէն փոխ առնուած ընդունել. վասն զի այդ մատենագիրներն՝ յանուանէ կը յիշեն Եզրը: Այս կոչումներէս յայտնապէս կը տեսնուի, թէ փրկչական թուականի Բ դարուն հաղիւ ոմանց ծանօթացեր էր այս գրուածս, և այն իսկ՝ հաւանօրէն՝ այժմեանէն շատ տարբեր ձևով: Ս. Ամբրոսիոսի օրերն աւելի տարածուած և հռչակ ստացած էր նաև յԱրևմուտս, զի այս վարդապետս իր ժամանակի մոլորութիւններուն դէմ մրցելու համար՝ յաճախ, ինչպէս լսուեցաւ, ի վկայութիւն կոչած է զայն՝ մարդարէի տիտղոսով:

Մեր դասական գրականութեան մէջ Եզրի անկանոն գրքին բնաւ յիշատակութեան հանդիպած չեմ. իսկ միջնադարեան մատենագրութիւնք՝ ըստ մեծի մասին դեռ անտիպ մնալով՝ դժուար է որո-

1. Das Buch der Jübiläen oder Kleine Genesis. Leipzig 1874. S. 412.
2. Տես The fourth Book of Ezras, Cambridge 1895, p. XXVIII-XLIII.

չել, թէ ինչ կիրառութիւնք եղած են անտի և ինչ չափով: Գրուածիս յիշակութեան կը հանդիպինք առաջին անգամ Սարկաւագ Վէ՛ Ս. Գրոց կարգաւորութեան ցուցակին մէջ, զոր պահած է մեզ Մխիթար Այրիվանեցի. բայց այս ըսել չէ, թէ ժ–ԺԱ դարէն յառաջ Եզրի անկանոն գիրքն՝ զեռ ևս թարգմանուած չէր ի հայ բարբառ: Եւ յիրաւի, կան այդ ժամանակէն յառաջ թարգմանուած Հիպպոլիտեայ, Մեթոդիոսի, Դանիելի և տեսիլն և Ենովքայ տեսիլն, յորս կը գտնենք Եզրի այդ գրքէն եղած փոխառութիւններ, որոնք բաւական կերպով նոյն են հայկական թարգմանութեան հետ. հետևաբար, այս և նման ուրիշ լեզուական կռուաններու վերայ յեցած, զոր կ՚ընծայէ մեզ Եզրի հայկական թարգմանութիւնն, կարեմք եզրակացնել ամենայն հաւանականութեամբ, որ դա թարգմանուած ըլլայ Զ–Է դարում[1], և թէ Մեթոդիոսի թարգմանիչն՝ Սահմաննոս Սիւնեցի, ինչպէս նաև Յովհ. Կոգեռն, Վարդան և այլք, օգտուած ըլլան անկէ: ԺԱ դարում՝ Աստուածաշնչի մէջ ընդօրինակութեամբ մուտ գտնելէն վերջ՝ անտարակոյս եթէ ոչ Հայաստանեաց եկեղեցւոյ բեմէն հրապարակաւ, այլ գէթ առանձնականաց կողմէն հաճութեամբ կը կարդացուէր և՛ այս գրուածս, իբրև օգտակար և հրահանգիչ. ճնացածն այլոց կը թողունք ուսումնասիրել:

1. Հայկական թարգմանութեան լեզուն և ոճերն իսկ՝ զայս կը հաստատեն, վասն զի ո՛չ Ե դարու հայ լեզուի և գրականութեան վանեմական յատկութիւնքն կը նշմարուին հոս, և ո՛չ այլ Թ–Ժ դարու անկեալ լեզուն՝ կապարեայ ջունով, այլ երկուքին միջատահման առանձնութիւն մի՝ Ս. Գրոց ծառայական նմանողութեամբ պարզաբար պահուճեալ: